



Զիաց Մեր Հանապազորդ

ԱՊՐԻԼ • ՄԱՅԻՍ • ՀՈՒՆԻՍ 2019



«Մարդո՛ւ որդի, արդյոք կը կենդանանա՞ն այդ
ոսկորները»: Ես ասացի. «Տե՛ր Աստված, այդ դու
գիտես»:

ԵԶԵԿԻԵԼ 37. 3

Հարգելի՛ բարեկամ,
Սույն գրքույկում Աստվածաշունչ գրքի Հին Կտակարանի բաժնի մեջբերումներն արվել են Աստվածաշնչի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի – Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած ար-եւհայերեն թարգմանությունից (2007), իսկ Նոր Կտակարանի մեջբերումները՝ Հայաստանի Ավետարանական եկեղեցիների միության – Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած Նոր Կտակարանից (2003):

Շապիկի առաջին էջին՝ Սուրբ Աստվածածին Մայր Եկեղեցի

Սուրբ Աստվածածին Մայր Եկեղեցին կամ Սուրբ Յոթվերք Եկեղեցին ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում է: Եկեղեցու կառուցման տարեթիվը ստույգ չէ, տվյալներից մեկի համաձայն՝ այն կառուցվել է 1874-1886թթ: Քաղաքի կենտրոնում՝ Վարդանանց հրապարակում գտնվող եկեղեցին Շիրակի թեմի առաջնորդարանն է:

Աղբյուրներից մեկի վկայությամբ՝ այս եկեղեցու տեղում նախապես եղել է Կանսարական իշխանների կառուցած փայտե մատուռը, որտեղ պահվում էր Սուրբ Մարիամ Աստվածածնին իր յոթ վերքերով պատկերող «Յոթվերք» սրբապատկերը: Նոր եկեղեցին օծել է Գևորգ 5-րդ կաթողիկոսը:

1988-ի աղետալի երկրաշարժի հետևանքով եկեղեցու երկու գմբեթներն ամբողջությամբ ընկել էին: Դրանք այժմ դրված են եկեղեցու բակում:

Ինքնատիպ է Յոթվերք եկեղեցու ներքին հարդարանքը. ի տարբերություն հայկական այլ եկեղեցիների, որոնց ճգնավոր խորանները զուրկ են որևէ զարդարանքից, Յոթվերքի խորանն ունի պատկերակալ: Եկեղեցու պատերը զարդարված են գեղարվեստական բարձրարժեք որմնանկարներով: Խորանի կենտրոնում Վ. Սուրենյանցի կտավն է՝ Սուրբ Աստվածածինը Հիսուս մանուկի հետ:

Աբ. Յոթվերք եկեղեցին յուրահատուկ է նաև նրանով, որ ունի հինգ տարբեր խորաններ՝ նախատեսված տարբեր դավանանք ունեցող համայնքների համար:

Հայաստանի անկախացումից հետո եկեղեցին վերանորոգվել է: (www.wikipedia.org)

**Լուսանկարիչ՝ Լուիզա Ճանպազյան
Միացյալ Նահանգներ**



Ձեռագ մեր հանապազորդ

ԱՊՐԻԼ, ՄԱՅԻՍ, ՀՈՒՆԻՍ 2019

Աստվածաշնչի ամենօրյա անձնական և ընտանեկան
ընթերցումներ և հոգևոր խորհրդածուծություններ

Լ ՏԱՐԻ

Բ ԵՌԱՄՍՅԱԿ

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում
Radio Bible Class ընկերությունը, որի թույլտվությամբ
Our Daily Bread գրքույկից թարգմանել ենք հաջորդ էջերի
խորհրդածուծությունները:

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցություն
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: amaa@amaa.org, Website: www.amaa.org

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլեկտրոնային՝ amaa.armenia@amaa.am

Կայքէջ՝ www.amaa.am

Փոխառիկ օրհնություններ

Մինչ ճաշի ժամին մենք խոնարհվեցինք, բարեկամս՝ Ձեֆը, աղոթեց ու ասաց. «Հայր, շնորհակալ ենք, որ արտոնում ես մեզ Քո օդը շնչելու և Քո ճաշը ուտելու»: Ձեֆն ունեցել էր աշխատանքը կորցնելու զժվարությունը, և ինձ շատ տպավորեց այն, որ նա սրտանց վատահում էր Աստծուն և ընդունում, որ ամեն ինչ Աստծուն է պատկանում: Եվ սկսեցի մտածել. «Ես իսկապես անկեղծորեն հասկանո՞ւմ եմ, թե նույնիսկ իմ կյանքում գոյություն ունեցող բոլոր հիմնական բաները Աստծուն են պատկանում: Նա է արտոնում, որ ես դրանք գործածեմ»: Երբ Դավիթ թագավորը Իսրայելի ժողովրդից ընծաներ ստացավ Երուսաղեմի տաճարը կառուցելու համար, աղոթեց և ասաց. «Ո՞վ եմ ես, և ո՞վ է քո ժողովուրդը, որ կարողանայինք հոժարամիտ լինել քեզ համար անելու այս բոլորը: Ձե՞ որ քոնն է ամեն ինչ, և քեզանից ստացածն է, որ տալիս ենք քեզ»: Եվ ապա ավելացրեց. «Եվ ամեն ինչ քոնն է» (Ա Մնաց. 29. 14,16): Աստծո խոսքն ասում է. «...հարստության հասնելու կարողությունը և ապրուստ վաստակելը Իրենից է գալիս (Բ Օրին. 8.18): Հասկանալը, որ մեր ամեն ունեցածը փոխառիկ է, մեզ օգնում է թուլացնել այս աշխարհի բաներից կառչելը և ապրել բաց ձեռքով ու սրտով, մեր ունեցածն ազատորեն բաժանել ուրիշներին, որովհետև մենք խորապես շնորհակալ ենք ամեն օր մեր ստացած բարիքների համար: Աստված առատորեն տվող ու այնքա՛ն սիրող է, որ նույնիսկ Իր որդուն տվեց «մեզ բոլորիս» համար (Հռոմ. 8.32): Քանի որ մեզ շատ բան է տրվել, մենք էլ մեր սրտագին շնորհակալությունը հայտնենք Նրան:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ Քո տված բոլոր օրհնությունների համար: Օգնի՛ր, որ կարողանամ ընդունել, թե ամեն բարի պարգև Քեզանից է: Ամեն:

Ինչ որ մերն է, նախ Աստծունն է:

Կարդա՛ր
Ա Մնաց. 29.6-16

Տիրոջն է երկիրն իր
ամբողջությամբ, աշխարհն իր բոլոր
բնակիչներով:
Սաղմ. 23.1

Անբացատրելի սեր

Մեր եկեղեցու փոքրիկ խմբակը որոշեց անակնկալ մատուցել մեր մանչուկին՝ վեցերորդ տարեդարձի առիթով: Եկեղեցու անդամները կիրականօրյա դասարանը զարգարեցին փուչիկներով և փոքր սեղանին դրեցին մի կարկանդակ: Երբ նա ներս մտավ, բոլորը բացականչեցին. «Ուրախ տարեդարձ»: Հետո, մինչ ես կարկանդակն է կտրում, որդիս մոտեցավ ու ականջիս շնչաց. «Մա՛մ, ինչո՞ւ եմ բոլոր այստեղ եղողներն ինձ սիրում»: Նույն հարցն ինձ էլ էր հետաքրքիր:

Այս մարդիկ մեզ ծանոթացել են վեց ամիս առաջ, բայց մեզ հետ վարվում են վաղեմի բարեկամների նման:

Որդուս նկատմամբ նրանց ցուցաբերած սերը ցույց էր տալիս Աստծու սերը մեր հանդեպ: Չենք հասկանում՝ ինչո՞ւ է նա մեզ սիրում, բայց սիրում է շռայլորեն ու Նրա սերը մեզ ձրի է տրված: Մենք ոչինչ չենք արել Նրա սիրուն արժանանալու համար: Աստվածաշունչն ասում է. «Աստված սեր է» (Ա Հովհ. 4.8): Սերն է Նրա գոյության բաղադրիչը:

Աստված Իր սիրով է մեզ պարուրել, որպեսզի մենք էլ այդ նույն սերը ցույց տանք ուրիշներին: Հիսուսն Իր աշակերտներին ասաց. «...իրար սիրեք, ինչպես որ ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք: Դրանով բոլորը կիմանան, որ իմ աշակերտներն եք, եթե իրար նկատմամբ սեր ունենաք» (Հովհ. 13. 34-35):

Մեր եկեղեցու փոքր խմբակի անդամները սիրում են մեզ, որովհետև Աստու սերը նրանց մեջ է և դուրս է հորդում՝ նրանց ներկայացնելով որպես Հիսուսի հետևորդներ:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ ուրիշների միջոցով վայելում եմ Քո մեծ սիրո փորձառությունը: Օգնիր, որ ես էլ կարողանամ այդ նույն սերը ուրիշներին հայտնել: Ամեն:

Քանի որ Աստված մեզ է սիրում, մենք էլ կարող ենք ուրիշներին սիրել:

Կարդա՛
Յովհ. 13.31-35

...Ինչպես որ ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք:
Յովհ. 13.34

Պարագայական ըմբռնում

Օճնդյան տոների արձակուրդին ընտանիքով Հռոմ այցելեցինք: Մարդկանց այդպիսի խոնվածությունն երբևէ չէի տեսել: Մինչ ամբոխի մեջ քայլում էինք՝ տեսնելու Վատիկանի ու Ամֆիթատրոնի սքանչելի և չքեղ տեսարանները, շարունակ զավակներիս բացատրում էի «պարագայական ըմբռնումի» իմաստը՝ ասելով. «Ուշադիր եղե՛ք, թե ուր եք, ով կա ձեր շուրջը և ինչ է կատարվում»: Մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ մեր աշխարհը, որտեղ էլ լինենք՝ տանը, թե դրսում, ապահով չէ: Եվ բջջային հեռախոս ու ականջակալ օգտագործող փոքրերը, ինչպես նաև մեծերը միշտ չեն կիրառում իրենց շուրջ եղող իրավիճակները:

Կարդա՛ Փիլիպ. 1.3-11

Եվ այս աղոթքն եմ անում, որ ձեր սերը ավելի ու ավելի հարստանա գիտությանը ու ամեն հասկացողությամբ: Փիլիպ. 1.9

«Պարագայական ըմբռնումը» Փիլիպպեի եկեղեցու հավատացյալների համար Պողոսի աղոթքի երևույթներից մեկն էր՝ արձանագրված Փիլիպ. 1.9-11 համարներում: Պողոսի փափագը նրանց համար շատ անհրաժեշտ՝ իրենց ո՞վ, ի՞նչ և ու՞ր լինելու մասին գաղափարի գիտակցությունն է: Սակայն փոխանակ անձնական ապահովության նպատակակետ ունենալու՝ Պողոսը աղոթեց ավելի մեծ նպատակի համար: Որ մարդիկ իրենց ստացած Քրիստոսի սիրո բարի տնտեսները լինեն, ընտրեն «լավագույնը», ապրեն «անկեղծ ու անսայթաք» և լցվեն Հիսուսի տված բարի հատկանիշներով: Նման ապրելակերպն առաջ է գալիս այն գիտակցությունից, որ Աստված մեր կյանքում «Ով» է և մեր՝ Նրան ապավինելը հաճելի կլինի իրեն:

Աղոթք - Հայր, արթնացրո՛ւ մեզ: Օգնի՛ր, որ ուշադրություն դարձնենք մեր և մեր շուրջը եղողների կյանքերին, որպեսզի Քո սերն աճի և առատանա: Ամեն:

Բոլոր պարագաներում հույսդ դիր միայն Աստծո վրա:

ՈՒՇԱԴԻՐ ԵՂԻՐ

Երում: Ուստի երբ փոխադրվեցի հյուսիսային շրջան, երկար տևեց, մինչև որ կսովորեի ինչպես ապահով վարել մեքենան ձյունոտ ամիսներին: Առաջին սաստիկ ձմռանը երեք անգամ ձնամրրիկի մեջ մնացի: Աստիճանաբար տարիների փորձառությունն ինձ օգնեց ավելի ապահով ու հանգիստ վարել մեքենան, բայց ես իրականում զգոնությունս թուլացրի և մեքենաս, խփվելով մի սառցակույտի, սահեց ու խփվեց ճամփեզրի էլեկտրասյանը:

Բարեբախտաբար, ոչ մեկը չվնասվեց, և ես այդ օրը շատ կարևոր բան սովորեցի: Անդրադարձա, թե որքան վտանգավոր կարող է լինել հանգիստ ու ապահով զգալը: Փոխանակ ուշադիր լինելու, ես անցել էի «ինքնադեկ» վիճակի:

Մեր հոգևոր կյանքում ևս զգոն լինելու վարժության կարիք ունենք: Պետրոս առաքյալը հավատացյալներին զգուշացնում է, որ կյանքում անխոհեմ չլինեն, այլ «զգաստ» (Ա.Պետ.5.8): Սատանան մեծ եռանդով փորձում է քանդել մեզ: Հետևաբար, մենք էլ եռանդով դիմադրավենք փորձությունը և հաստատակամ լինենք մեր հավատքին (Հմ. 9): Սակայն սա այնքան էլ բարդ բան չէ, որովհետև Աստված խոստանում է մեզ հետ լինել մեր չարչարանքների մեջ և ի վերջո մեզ «հաստատի, զորացնի, անսասան դարձնի» (Հմ 10):

Աղոթք - Հայր, ինձ օգնիր, որ ծուլ ու շատ հանգիստ չզգամ իմ հոգևոր կյանքում: Օգնիր, որ արթուն ու զգաստ լինեմ չարին դիմագրավելու համար: Ամեն:

Կարդա՛
Ա Պետրոս 5.6-11
 Զգա՛ստ եղեք, արթո՛ւն կացեք, որովհետև ձեր ուղի թըճանամին՝ սատանան, մոնչացող առյուծի պես ման է գալիս և փնտրում է, թե ո՛ւմ կուլ տա: Ա Պետ. 5.8

Հիսուսին հետևելու համար արթուն մնա ու զոհ եղիր:

Նոր սրտի կարի՞ք ունես

Լուրերը տազնապալի էին: Հայրս կրծքավանդակի ցավեր էր ունենում, և իր բժիշկը պատվիրեց շտապ բուժզննում անցնել: Արդյո՞ւնքը: Երեք շնչերակների արգելափակում:

Նախատեսվեց երեք շնչերակները բացելու վիրահատություն: Հայրս թեև մտահոգ էր, բայց որպես հուսալից նշան՝ ասաց. «Նոր սիրտ պիտի ստանամ Վալենտինի օրը»: Եվ ստացավ: Վիրահատությունը հաջող անցավ, և կենսատուարյունը սկսեց հոսել «նոր» սրտի մեջ:

Հորս այս գործողությունը ինձ հիշեցրեց, որ Աստված նույնպես մեզ նոր կյանք է պարգևում: Որովհետև մեղքը փակում է մեր հոգևոր «շնչերակները», որոնք Աստծո հետ կապ հաստատելու հնարավոր միջոցն են: Ուրեմն մենք էլ կարիք ունենք հոգևոր «վիրահատության», որպեսզի բացենք դրանք:

Այդ նույն բանը Աստված խոստացավ Իր ժողովրդին՝ Եզ. 36.26-ում՝ ասելով. «Նոր սիրտ եմ տալու ձեզ, նոր հոգի եմ դնելու ձեր մեջ. ձեր մարմիններից հանելու եմ քարեղեն սիրտն ու մարմնեղեն սիրտ եմ տալու ձեզ»: Նա նաև խոստացավ. «Դուք մաքրվելու եք ձեր բոլոր պղծություններից, ձեր բոլոր կուռքերից մաքրելու եմ ձեզ» (Հմ. 25) և «Իմ հոգին եմ տալու ձեզ» (Հմ 26): Այդ խոստումն իրագործվեց Հիսուսի մահով ու հարությունամբ: Երբ Իրեն վստահենք, մի նոր հոգևոր սիրտ կստանանք: Սիրտ, որը մաքրված կլինի բոլոր մեղքերից, անօրինություններից ու հուսահատություններից:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ Հիսուսով Քո տված ներումի համար, նոր հույսի և կյանքի համար: Օգնի՛ր, որ Քեզ վստահենք ամեն օր: Ամեն:

Վախի ու պայքարի մե՞ջ ես: Վստահի՛ր Աստծուն:
Նա քեզ մի նոր կյանք կտա:

Կարդա՛ Եզեկիել 36.24-27

Նոր սիրտ եմ տալու ձեզ, նոր հոգի եմ դնելու ձեր մեջ. ձեր մարմիններից հանելու եմ քարեղեն սիրտն ու մարմնեղեն սիրտ եմ տալու ձեզ...: Եզ. 36.26

Անտեսանելի գոյատևել

2-րդ դարի համացանցային խոշոր համայնքներից մեկը՝ «Փորձառությունների քաղաքը», մի կայք էր, որտեղ ժամանակին տասնյակ միլիոնավոր մարդիկ կիսվում էին իրենց ցավալի փորձառություններով: Այդտեղ կարգալուծ սրտաճմլիկ պատմությունները, մտածեցի, թե մեր հուսահատ սրտերը որքա՞ն են փափագում, որ մեկը տեսնի ու հասկանա մեր ցավերը:

Ծննդոց Գրքի երիտասարդ ստրկուհու պատմությունը ցույց է տալիս, որ մեր ցավերը տեսնելն ու հասկանալը կարող է նաև կենսատու պարզև դառնալ: Ազարը ստրկուհի էր, որին հավանաբար եգիպտոսի փարավոնը տվել էր Աբրամին (Ծն. 12.16, 16.1): Երբ Աբրամի կինը՝ Սարան նրան երեխա չէր պարզեում, խնդրեց ամուսնուն, որ երեխա ունենա աղախին Ազարից: Դա վերավորական, բայց ծանոթ սովորություն էր այդ օրերում: Բայց երբ Ազարը հղիացավ, լարվածությունն այնքան մեծացավ, որ նա հեռացավ անապատ, որպեսզի խուսափի Սարայի չարաշահումից (Ծն. 16.1-6): Բայց Ազարի՝ անապատում, հղի վիճակում մնալը Տիրոջ աչքից աննկատ չմնաց: Երկնային պատգամավորը քաջալերեց Ազարին (Հմ.7-13) և նա հայտարարեց. «Դու այն Աստվածն ես, որ ինձ զորավիգ եղավ»:

Ազարը պաշտում էր Նրան, որ տեսնում էր իրավիճակների խորքը: Նա, որ տեսավ ու հասկացավ Ազարի ցավը, կտեսնի նաև մեր ցավը (Եբ. 4. 15 -16) և կօգնի, որ անտանելին դառնա ավելի տանելի:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ տեսնում և հասկանում ես մեր ցավերը: Օգնի՛ր, որ կարողանանք միջոց դառնալ Քո կարեկցությունն ու սերը ուրիշներին հասցնելու: Ամեն:

Աստված զգում է մեր ցավը, ասես Իրենը լինի:

Կարդա՛ր Ծննդոց 16.7-16

Ազարն իր հետ խոսող Տիրոջը դիմելով՝ ասաց. «Դու այն Աստուածն ես, որ ինձ զորավիգ եղավ. քանզի ասաց. ես իմ առաջ տեսա նրան, ով երևացել է ինձ»: Ծն. 16.13

Փոփոխությունը կարելի է

Շաբաթ կեսօրից հետո եկեղեցու մի քանի երիտասարդ անդամներ հավաքվեցին՝ միմյանց հետ ճշտելու մի շարք դժվար հարցեր, որոնք վերաբերում են Փիլիպ. 2. 3-4 համարներին, որոնցում ասվում է. «Ոչ մի բան թող չլինի հակառակությամբ և ոչ էլ սնապարծությամբ, այլ խոնարհությամբ մեկը մյուսին թող իր անձից ավելի լավ համարի: Միայն ձեր անձի շահերին չնայեք, այլ ամեն մեկն իր ընկերոջն էլ»: Տրված հարցերը երեքն էին. Որքա՞ն հաճախ ես ուրիշներով հետաքրքրվում: Կարո՞ղ է մեկը քեզ նկարագրել որպես խոնարհ կամ հպարտ անձ և ինչո՞ւ: Լսեցի տրված պատասխաններն ու ուղեկորվեցի: Երիտասարդները համաձայն էին, որ հեշտ է ընդունել մեր տկարություններն ու թերությունները, բայց դժվար է փոխել դրանք: Երիտասարդներից մեկը ողբալով ասաց. «Եսասիրությունն իմ արյան մեջ է»:

Ուրիշներին ծառայելու համար մեր անձի վրա կենտրոնանալուց հրաժարվելը հնարավոր է միայն Հիսուսի հոգում մեր բնակվելով: Դրա համար Պողոսը Փիլիպպեի եկեղեցուն հիշեցրեց, որ մտածի, թե Աստված իրենց համար ինչ է արել ու հնարավոր դարձրել: Նա իր շնորհքով նրանց որդեգրել, իր սիրով մխիթարել և իր Հոգին է տվել՝ օգնելու համար (Փիլ.2.1-2): Այո՛: Աստված է պատճառը, որ մենք փոխվենք, ու միայն ինքը կարող է մեզ փոխել: Որովհետև նա մեզ տալիս է «կամենալն էլ, անելն էլ իր հաճության պես» (հմ. 13):

Աղոթք-երկնավոր Հայր, տեսնելով Հիսուսի հեզությունը, ներշնչիր մեզ, որ խոնարհաբար Քեզ ծառայենք: Օգնիր, որ եսասիրությունից անցնենք և ուրիշներին ծառայենք: Ամեն:

Մեր պատասխանատվությունն է Աստծո կարողությանն ի պատասխան՝ խոնարհվել:

Կարդա՛ր
Փիլիպ. 2.1-4

Որովհետև Աստված է որ ձեր մեջ ներգործում է. կամենալն էլ, անելն էլ իր հաճության պես: Փիլիպ. 2.13

Անակնկալ շահողներ

Թերևս 2018-ի ձմեռային օլիմպիական խաղերի ամենաանտրամաբանական, անհեթեթ ու զարմանալի պահն այն էր, երբ դահուկավազքի աշխարհի չեմպիոն չեխ էսթեր Լեդեկան առաջնությունը շահեց նաև մեկ այլ՝ լեռնադահուկային մարզաձևում: Նա արժանացավ ոսկե մեդալի՝ հակառակ այն բանի, որ նախապես 26-րդ տեղում էր և հաղթողի հավակնորդների թվում չէր: Նա ինքն էլ, լրագրողների և մասնագետների պես, զարմացել էր 0,1 վայրկյանի տարբերությամբ իր ունեցած հաջողությունից:

Այսպես է գործում աշխարհը:

Մենք ենթադրում ենք, որ շահողները պիտի շարունակեն շահել, ուրիշները՝ կորցնել:

Մարդիկ վրդովված էին, ինչպես այն ժամանակ, երբ աշակերտները լսեցին Հիսուսի խոսքը, թե «հարուստը երկնքի արքայություն դժվար կմտնի» (Մատթ. 19.23): Հիսուս ամեն բան տակնուվրա արեց: Ինչպե՞ս կարող է հարուստ կամ հաղթող լինելը արգելք դառնալ: Ակնհայտորեն, ի՞նչ կարող ենք մենք անել կամ ո՞վ ենք մենք, եթե ապավինենք մեր ունեցվածքին: Այս իրավիճակում ոչ միայն դժվար, այլև իրականում անհնար է Աստծուն վստահել:

«Եվ շատ առաջիններ հետիններ կլինեն, իսկ հետինները՝ առաջիններ», -ասում է Հիսուսը (Հմ. 30):

Աղոթք - Յայր, շնորհակալ եմ, որ անակնկալ շնորհքով և սիրով ես մոտենում մեզ և հետինները առաջին ես անում՝ հակառակ այս աշխարհի չափանիշներին: Ամեն

Կարդա՛
Մատթեոս 19. 17-30

Եվ շատ առաջիններ հետիններ կլինեն, իսկ հետիններ՝ առաջիններ:
 Մատթ. 19.30

**Աստծո թագավորության մեջ շահելն ու կորցնելը
 գլխիվայր կշռվեն:**

Պատմելիք բարի լուր

Արման անունով իրանցի մի աշակերտ հարցրեց. «Ի՞նչ է անունդ»: Լսելով, որ անունս էսթերա է, նրա դեմքը լուսավորվեց, ու նա բացականչեց. «Մենք էլ պարսկական նման անուն ունենք՝ Սեթարե»: Այս փոքրիկ կապը հիանալի խոսակցուծյան առիթ դարձավ, ու ես ասացի, որ այդ անունն ինձ տրվել է ի պատիվ Սբ. Գրքի հերոս ու Պարսկաստանի հրեա «Եսթեր» թագուհու: Սկսելով Եսթերի պատմությունը՝ նրան պատմեցի Տեր Հիսուսի մասին բարի լուրը: Մեր խոսակցուծյան արդյունքն այն եղավ, որ Արմանը սկսեց հաճախել Սուրբ Գրքի սերտողուծյան շաբաթական դասընթացներին՝ ավելի լավ իմանալու Հիսուսի մասին:

Հիսուսի հետևորդներից մեկը՝ Փիլիպպոսը, Սբ. Հոգով առաջնորդված, հարցրեց կառքով ճամփորդող եթովպիացի ներքինին. «Կարդացածդ արդյո՞ք հասկանում ես» (Գործք 8.30): Եթովպիացին հոգևոր խորաթափանցություն ունենալու ցանկությունը Եսայի մարգարեի գիրքն էր կարդում: Հետևաբար Փիլիպպոսի հարցումը ճիշտ ժամանակին էր: Ներքինին Փիլիպպոսին հրավիրեց իր կողքին նստելու և խոնարհաբար սկսեց լսել նրա բացատրությունները: Փիլիպպոսն էլ օգտագործեց այս հիանալի առիթը և «այդ գրքից սկսելով՝ նրան Հիսուսի մասին ավետարանեց» (Հմ 35):

Մենք էլ Փիլիպպոսի նման բարի լուր ունենք պատմելու: Ուստի ամեն տեղ գործածենք մեզ տրված ամենօրյա առիթները և արտոնենք Սբ. Հոգուն, որ առաջնորդի մեր քայլերը և մեզ տա հնարավորություն՝ Հիսուսի հանդեպ մեր սերն ու ուրախությունը կիսելու:

Աղոթք - Տեր Աստված, քայլերս ուղղի՛ր դեպի նա, ով միայն Տեր Հիսուսից եկող հույսի կարիքն ունի: Ամեն:

Քաջալերվի՛ր Փիլիպպոսից ու պատրաստ եղի՛ր Հիսուսի մասին խոսել ուրիշների մոտ:

Կարդա՛ր
Գործք Առ. 8.26-36

Փիլիպպոսն էլ սկսեց խոսել և այս գրքից սկսելով՝ նրան Հիսուսի մասին ավետարանեց:
Գործք Առ. 8.35

Ձորի միջից

Հեյ Ուոուն (ոչ իսկական անունը) Չինաստանի սահմանը խախտելու համար բանտարկված էր Հյուսիսային Կորեայի աշխատանքային կալանավայրերից մեկում: Նա դժգոհում է, որ օրերն ու գիշերները տաժանելի են, պահակները՝ դաժան, ֆիզիկական աշխատանքները՝ ծանր, քնելը քիչ, պայմանները՝ սարսափելի՝ առնետներ, ոջիլներ ու սառը գետին: Սակայն Աստված օգնեց նրան՝ ամեն օր ցույց տալով, որ բանտարկյալների հետ բարեկամանալու և իր հավատքի մասին է խոսելու:

Ազատվելով կալանավայրից և Հարավային Կորեայում բնակվելով՝ Ուոուն անդրադարձավ իր բանտարկության ժամանակին, ասելով, որ իր փորձառությունն ամփոփում է 22-րդ Սաղմոսը: Հակառակ այն բանի, որ բանտարկված էր մութ ձորում, իրեն խաղաղություն տվող միակ հովիվը Հիսուսն էր: Նա ասում է. «Եթե նույնիսկ անցնեմ մահվան սուղերների միջով, չեմ վախենա չարից, քանզի դու, Տե՛ր, ինձ հետ ես: Քո ցուպն ու դավազանը ինձ կմխիթարեն»: Նա Աստծո բարությունն ու սիրո հավաստումն ունեցավ, որ ինքը Աստծո սիրելի դուստրն էր:

Ուոուի պատմության մեջ մենք քաջալերանք ենք տեսնում: Եթե հետևենք Հիսուսին, նա մեզ կառաջնորդի մեր նեղությունն ու տառապանքի օրերին: Վախենալու կարիք չկա, որովհետև «երկար օրեր ես Տիրոջ տանը պիտի բնակվեմ» (22.6):

Աղոթք - Ո՛վ Տե՛ր, երբ ձորի միջով քայլում եմ, Դու մոտ ես ու իմ վախերը փարատում ես: Մխիթարում ես ինձ և սեղան ես պատրաստում ինձ համար, ու ես հավիտյան Քո տանն եմ բնակվելու: Ամեն:

Եթե Աստծո ներկայության փորձառությունն ունես, քաջալերի՛ր ուրիշներին:

Կարդա՛ր Սաղմոս 22

Եթե նույնիսկ անցնեմ մահվան սուղերների միջով, չեմ վախենա չարից, քանզի դու, Տե՛ր, ինձ հետ ես: Սաղմ. 22.5

Խաղաղությանը լեցուն սրտեր

Քառասուռնհինգ տարվա մարզական կենսագրություն մեջ Քեթրի Գրեյմը շատ մրցանակներ ու հաջողության ձեռքբերումներ էր ունեցել, բայց էջը արժանացել բարձրագույն չբանշանին՝ թեև տասն անգամ նշվել էր հավակնորդների մեջ: Այդ հաճախակի հուսախաբուլությունները, սակայն, չընկճեցին նրան: «Ես հասկացա, որ Ազգային Փուտբոլային միությունն՝ ինձ շնորհած 100 պարգևներից հետո մեկ չստացած պատվանշանի համար նեղվելը հիմարություն է», -ասաց նա:

Մինչ շատերը նման պարագայում կդառնանային, Գրեյմը բնավ այդ զգացումը չունեցավ: Նրա այդ կեցվածքը ցույց է տալիս, թե մենք ինչպես կարող ենք մեր սրտերը պաշտպանել նախանձի քայքայիչ ազդեցությունից, որը կարող է «ոսկորների փտություն լինել» (Առ. 14.30): Երբ մենք նախանձախնդիր լինենք մեր չունեցած բաներին և չտեսնենք մեր ունեցած շատ այլ բաներ, Աստծո խաղաղությունը կմերժի մեզ:

2018 թ. արդեն 11-րդ անգամ ներկայացվելով՝ Գրեյմը վերջապես նվաճեց Ազգային Փուտբոլային միության բարձրագույն պարգևը: Մեր երկրային ցանկությունները կարող են չիրականանալ, սակայն մենք կարող ենք «հոգեկան խաղաղություն» ունենալ, եթե մեր ուշադրությունը այդ հարցից տեղափոխենք այլ բազմաթիվ բաների վրա, որոնք առատորեն ստացել ենք Աստծուց:

Աղոթք - Հայր, ների՛ր մեզ, երբ փորձում ենք կենտրոնանալ մեր չունեցած բաների վրա: Օգնի՛ր, որ կարողանանք տեսնել այն ամենը, ինչ տվել ես մեզ: Ամեն:

**Աստված մեր սրտերին կպարզեի խաղաղություն
 և շատ ավելին:**

**Կարդա՛ր
 Առակներ 14.29-35**

Դեզպարո մարդը սրտի բժիշկ է, հոգս անող սիրտը՝ ոսկորների փտություն: Առ. 14.30

Սպառված

Իր «Կոչը» խորագրով գրքում Օս Գիյնըսը նկարագրում է այն պահը, երբ Ուրիսթոն Չերչիլն իր բարեկամների հետ Ֆրանսիայի հարավային շրջանում հանգստանալիս, մի ցուրտ գիշեր նստեց կրակարանի մոտ՝ տաքանալու: Նայելով կրակին՝ Անգլիայի նախկին վարչապետը տեսավ «ճարճատումով ու կայծկլտալով այրվող սոճու կոճղերը և իր թավ ձայնով շշնջաց. «Գիտեմ, թե ինչու են կոճղերը կայծեր արձակում: Գիտեմ՝ ինչ ասել է սպառվել»:

Դժվարությունները, հուսահատությունները, վտանգները, տագնապներն ու մեր սխալների հետևանքները կարող են սպառվելու զգացում առաջացնել, աստիճանաբար մեր սրտերից հեռացնել ուրախությունն ու խաղաղությունը: Երբ Դավիթն իր սխալ ընտրություն կատարելու հետևանքները հասկացավ, գրեց. «Ես լռեցի, և իմ բոլոր ոսկորները մաշվեցին՝ ամեն օր գիշեր-ցերեկ տիրոջը կանչելուց: Քո ձեռքը ծանրացավ ինձ վրա, ես կրկին ընկա թշվառություն մեջ, քանզի փշերն ինձ ծակեցին» (Սաղմ. 31.3-4):

Նման դժվար պահերին օգնության և հույսի համար ու՞ր կգլխենք: Պողոսը, ունենալով ծանրաբեռնված ծառայության ու ցավերով լի փորձառություն, գրել է. «Ամեն բանում նեղված ենք, բայց ճնշված չենք, կարոտ ենք, բայց տարակուսած չենք: Հալածված, բայց երեսից չընկած, վայր ընկած, բայց չկորած» (Բ.Կորնթ. 4.8-9):

Երբ վստահում ենք Հիսուսին, Նա նորոգում է մեր հոգին և զորացնում է մեզ, որպեսզի կարողանանք մեր հաջորդ քայլն անել:

Աղոթք - Երկնավոր Հայր, տուր ինձ զորություն՝ դիմագրավելու այս օրը և Քրիստոսի հույսը՝ Քո խոստացած վաղվա հավիտենականության համար: Ամեն:

Մեզ սպառող պայքարներում Աստված մեր օգնականն է:

Կարդա՛ր
Սաղմոս 31

Ես լռեցի, և իմ բոլոր ոսկորները մաշվեցին: Սաղմ. 31.3

Այնտե՞ղ ես

Երբ Մայքլի տիկինը մահացու հիվանդությունն ձեռք բերեց, Գամուսինը ցանկացավ, որ նա էլ իր նման Աստծո հետ խաղաղության փորձառությունն ունենա: Իր հավատքի մասին պատմեց նրան, բայց կինը հետաքրքրված չէր: Մի օր գրախանութում նրա աչքին ընկավ գրքերից մեկի խորագիրը. «Աստված, Այնտե՞ղ ես»: Վստահ չլինելով, թե կինն ինչպես կարձագանքի, նա մի քանի անգամ ելումուտ արեց ու վերջապես գնեց այդ գիրքը: Եվ ի գարմանս իրեն՝ կինն ընդունեց այն:

Կարդա՛ր
Ելք 3.11-14
 Ես քեզ հետ կլի-
 ցնեմ: Ելք 3.12

Գիրքը մեծ ազդեցություն ունեցավ նրա վրա, և նա սկսեց Աստվածաշունչ կարգալ: Երկու շաբաթ անց կինը մահացավ՝ Աստծո հետ ունենալով խաղաղություն ու նաև այն գիտակցումը, որ Աստված իրեն բնավ չի լքելու:

Երբ Աստված Մովսեսին կանչեց իր մոտ՝ Իր ժողովրդին եգիպտոսից հանելու համար, նրան գորություն չխոստացավ: Փոխարենը իր ներկայությունը խոստացավ և ասաց. «Ես քեզ հետ կլինեմ» (Ել.3. 12): Հիսուսը խաչելությունից առաջ աշակերտներին ուղղված իր վերջին խոսքում Աստծո ներկայությունը խոստացավ, որ պիտի ստանային Սուրբ Հոգու միջոցով (Հովհ. 15. 26):

Աստված շատ բաներ կարող է մեզ տալ կյանքի մարտահրավերներում մեզ օգնելու համար՝ նյութական հանգստություն, բժշկություն, կամ մեր հարցերի անմիջական լուծում: Սակայն լավագույն պարգևը իր անձն է: Այն մեր մեծագույն հանգստությունն ու մխիթարությունն է, և ինչ էլ պատահի մեր կյանքում, նա մեզ բնավ չի թողնելու:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ՝ միշտ ինձ հետ լինելուդ հիանալի խոստման համար: Թող որ կյանքի դժվարություններում միշտ Քեզ վստահեմ՝ իմանալով, որ ինձ հետ ես քայլում: Ամեն:

Վստահ եղի՛ր, Աստված միշտ Քեզ հետ է:

Վերանորոգված հույս

Արևը արևելքի՞ց է ծագում: Երկիրքը կապու՞յտ է: Օվկիանոսի ջրերը աղի՞ է: Կոբալտի ատոմական զանգվածը 58.9 է: Հավանաբար վերջին հարցի պատասխանը կիմանաս, եթե մասնագետ ես կամ ընդհանուր զարգացման գիտելիքներով ես զբաղվում: Սակայն մյուս հարցերի պատասխանը ակնհայտ դրական է: Ավելին, իրականում այդպիսի հարցերը երգիծական են: Եթե ուշադիր չլինենք, Հիսուսի «Ուզո՞ւմ ես առողջ լինել» հարցի մեջ նույնպես երգիծանք կարող ենք տեսնել: Նման հարցի բնական պատասխանը պիտի լինի. «Ինչ ես ասու՞մ: Երեսուներեթ տարի է՝ սպասում եմ: Իհարկե՛ ուզում եմ առողջանալ»: Սակայն բնավ հումոր չկա: Տեր Հիսուսի ձայնը միշտ էլ լի է կարեկցությամբ և իր հարցերը տրվում են մարդկանց բարիքի համար:

Հիսուսը գիտեր, որ այդ մարդն ուզում է բուժվել: Նաև գիտեր, որ երկար ժամանակ էր անցել վերջին անգամ նրան կարեկցության առաջարկ անելուց: Երկնային բժշկությունը կատարելուց առաջ Տեր Հիսուսի նպատակն էր նրա մեջ վերանորոգել հույսի կրակը, որը ժամանակի ընթացքում մարել էր: Ու այդ բանն արեց՝ տալով հստակ հարցը և ապա պատասխանելով նրան՝ ասաց. «Վե՛ր կաց, մահի՞ճդ ա՛ն և մա՛ն արի» (Հովհ. 5.8): Մենք էլ այս անդամալուծի նման ենք, յուրաքանչյուրս էլ մեր կյանքում հասել ենք մի կետի, երբ մեր հույսը չքացել է: Տեր Հիսուսը տեսնում է մեզ ու կարեկցությամբ հրավիրում, որ վերանորոգենք մեր հույսը և հավատանք իրեն:

Աղոթք - Հիսու՛ս, Քեզ հայտնի է, որ իմ կյանքի որոշ հանգամանքներում հույսս տկարացել, սառել և նույնիսկ մեռել է: Վերանորոգի՛ր իմ մեջ հույսի ուրախությունը: Հույս, որ ծնվում է Քեզ վստահելով: Ամեն:

**Եթե նույնիսկ հույսդ մարած լինի, Տերն այստեղ է՝
վերանորոգելու այն:**

Կարդա՛ Յուվ. 5.1-8

Երբ Հիսուսը նրան պառկած տեսավ...և նրան ասաց. «Ուզո՞ւմ ես առողջ լինել»: Յուվ. 5.8

Բարեկամությանն նշաններ

Ինձ՝ Գանայում մեծացող փոքրիկ տղայիս համար հաճույք էր հորս ձեռքը բռնած քայլել մարդաշատ վայրերում: Նա և հայրս էր, և բարեկամս, և մեզանում ձեռք բռնելը իսկական բարեկամության նշան է: Միասին քայլելով մենք խոսում էինք զանազան թեմաներից: Երբ մենակ էի զգում, հորս մոտ էի մխիթարություն գտնում: Մեր բարեկամությունը շատ կարևոր էր ինձ համար: Հիսուսը Իրեն հետևողներին բարեկամ կոչեց և նրանց ցույց տվեց Իր բարեկամության նշանները՝ ասելով. «Ինչպես իմ Հայրն ինձ սիրեց, այնպես էլ ես ձեզ սիրեցի» (Հովհ. 15.9), նույնիսկ իր կյանքը նվիրեց նրանց համար (Հմ. 13): Ցույց տվեց Իր թագավորության գործը և սովորեցրեց Իր հորից ստացած ամեն բան (Հմ.15): Եվ նրանց առիթ ընծայեց, որ դառնան Իր առաքելության մասնակիցը (Հմ. 16): Հիսուսը մեզ հետ քայլում է՝ որպես մեր մշտական ընկերակիցը: Հետևում է մեր սրտի ցավերին ու մեր ցանկություններին: Երբ միայնակ ենք ու հոգեպես անհանգիստ, մեր բարեկամ Հիսուսը ընկերակցում է մեզ: Մեր բարեկամությունը Հիսուսի հետ ավելի մոտիկ կլինի, երբ սիրենք միմյանց ու Իր տված պատվիրաններին հնազանդվենք (Հմ. 10, 17): Ու Իր պատվիրաններին հնազանդվելով՝ մենք պտուղ կբերենք, որը «կմնա» (Հմ. 16):

Քայլելով մեր աշխարհի խճողված նրբանցքներում ու վտանգավոր փողոցներում, մենք կարող ենք վստահել մեր Տիրոջ ընկերակցությանը, որն Իր բարեկամության նշանն է:

Աղոթք - Երկնավոր Հայր, մեր բարեկամները մեզ հուսախաբ են անում, մենք էլ իրենց: Սակայն դու բնավ այդպես չես անի և խոստացել ես մեզ հետ լինել մինչև աշխարհի վերջը: Օգնիր, որ մեր շնորհակալությունը հայտնենք Քեզ՝ հավատարմությամբ Քեզ ծառայելով: Ամեն:

Հիսուսը միշտ քո կողքին եղող մշտական բարեկամդ է:

Կարդա՛ր Յովհաննես 15.9-17

Դուք իմ բարեկամներն եք, եթե անեք, ինչ որ ես պատվիրում եմ ձեզ: Յովհ. 15.14

Յոզակի՛ր ստեղծագործությունը

Հագվագյուտ բան է Կալիֆոռնիայի մոտ՝ Պահայում, օվկիանոսի խորքում տեսնել մեդուզայի պարը: Տեսնել, թե ինչպես է նրա մարմինը ջրի սև ու մութ վարագույրի առջև սահում՝ իր կապույտ, մանուշակագույն ու վարդագույն շոշափուկներն ու զանգակաձև գլխարկը շնորհալիորեն շարժելով: Դիտելով մեդուզայի, որին նաև ծովամայր են ասում, մասին Հալիդրֆես Մասսի տեսաերիզը, մտածում էի, թե Աստված ինչպես է ընտրել այս գեղեցիկ ծովային էակի յուրահատուկ պատկերը, նաև ձևավորել ևս 2000 տեսակի այլ մեդուզաներ, որ գիտնականները հայտնաբերել են մինչև 2017 թ. հոկտեմբերը:

Կարդա՛ ծննդոց 1.1-21

Աստված ասաց.
«Թող ջրերն արտադրեն կենդանության շունչ ունեցող գեռուններ: ԾՆ. 1.20

Թեև մենք ընդունում ենք Աստծո ստեղծագործ էությունը, արդյո՞ք ճշմարտապես նկատի առնում ենք Աստվածաշնչի առաջին գլխում հայտնված այս խորագույն ճշմարտությունը, թե Աստված Իր Խոսքի զորությունը ստեղծեց բազմազան աշխարհը: Զևակերպեց ու «ստեղծեց խոշոր կետեր, կենդանություն շունչ ունեցող ամեն տեսակ գեռուններ, որ արտադրեցին ջրերն ըստ տեսակների» (ԾՆ.1.21): Գիտնականները Տիրոջ ստեղծած այս էակների միայն մի մասն են հետազոտել: Աստված նաև նպատակադրված ստեղծեց մեզանից յուրաքանչյուրին՝ մեր կյանքի յուրաքանչյուր օրվա համար նպատակ նախանշելով: Մինչ հոչակում ենք Տիրոջ ստեղծագործությունը, կարող ենք ուրախ լինել այն բոլոր ձևերի համար, որոնցով Նա օգնում է մեզ, որ մենք էլ երևակայենք ու ստեղծենք Իր հետ ու Իր փառքի համար:

Աղոթք - Արարիչ Աստված, շնորհակալ ենք, որ մեզ հրավիրում ես գնահատելու Քո սքանչելի ստեղծագործությունը և վայելելու Քո տվածը:

**Աստված տվել է ստեղծագործելու պարգևը:
Օգտագործի՛ր այն Իր Փառքի համար:**

Ծաղկի նման ծաղկել

Ամենակրտսեր թոռնիկս երկու ամսական է: Ամեն անգամ նրան տեսնելիս փոքր փոփոխություններ եմ նկատում: Վերջերս երբ համբուրեցի նրան, վերև նայեց ու ժպտաց: Հուզվեցի: Ուրախություն խառն զգացումներ էին համակել ինձ՝ հիշեցնելով իմ զավակների առաջին ժպիտը, որ տարիներ առաջ էի տեսել և անցյալ էի համարում: Այդպիսի անբացատրելի պահեր լինում են:

102-րդ Սաղմոսում Դավիթը գրի առավ մի բանաստեղծական երգ, որը փառաբանում է Աստծուն և միաժամանակ նկարագրում, թե ի՞նչ արագ են անցնում ուրախ պահերը: «Մարդու օրերը խոտի պես են. նա ծաղկում է ինչպես վայրի ծաղիկ: Երբ փչի քամին, նա կանհետանա» (Հմ. 15-16):

Կարդա՛ր
Սաղմոս 102.13-22

Մարդու օրերը խոտի պես են. նա ծաղկում է ինչպես վայրի ծաղիկ: Սաղմ. 102.15

Զընդունելով կյանքի կարճությունը՝ Դավիթը նկարագրում է ծաղիկները՝ որպես ծաղկող ու բարգավաճող: Թեև յուրաքանչյուր ծաղիկ կարճ կյանք է ունենում, սակայն նրա բույրը, գույնն ու գեղեցկությունը ուրախություն ու հրճվանք է պարգևում այդ պահին: Թեև առանձին մի ծաղիկ կարող է շուտով մոռացվել «և նրա տեղն իսկ չի երևա» (Հմ.16), հակառակ դրան՝ մենք վստահ ենք, որ «Տիրոջ ողորմությունը հավիտյանս հավիտենից իրենից երկյուղողների վրա է» (Հմ.17): Մենք էլ ծաղիկների նման կարող ենք այդ պահին ուրախանալ ու ծաղկել, բայց կարող ենք հայտարարել, թե մեր կյանքի կարճ պահերը բնավ չեն մոռացվում: Նրա հավիտենական սերը միշտ իր զավակների հետ է:

Աղոթք - Սիրելի Հայր , օգնի՛ր, որ մենք էլ ծաղկի նման թեկուզ կարճ ժամանակով ծաղկենք և ուրախություն բերենք ուրիշներին: Ամեն:

**Աստված կհայթայթե այն, ինչի կարիքը մենք ունենք՝
իրենով ծաղկելու համար:**

Այդ պահին

Ինձ տեղափոխող շտապ օգնության մեքենայի դուռը փակվելու էր, և որդիս դըստւմ հեռախոսով կնոջս հետ էր խոսում: Ցնցումից մշուշված վիճակում որդուս անունը տվեցի: Ինչպես հետո նա հիշում է, ես դանդաղ ասել եմ. «Մորդ ասա՛, որ իրեն շատ եմ սիրում»: Ըստ երևույթին մտածել եմ, որ դա իմ վերջին հրաժեշտն է, ու ցանկացել եմ, որ բաժանումիս խոսքերը դրանք լինեն: Այդ պահին ինձ համար ամենակարևորը դա էր:

Երբ Հիսուսը համբերությամբ դիմագրավեց իր խավարագուլյն ժամերը, Նա ոչ միայն ասաց, որ սիրում է մեզ, այլև հատուկ ձևով ցույց տվեց իր սերը: Արտահայտեց այդ մեծ սերը իրեն ծաղրող ու խաչին գամող զինվորականների հանդեպ ու ասաց. «Հա՛յր, ների՛ր նրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկ. 23.34): Նա հուսադրեց իր հետ խաչվող ավազակին ու ասաց. «Դու այսօր ինձ հետ դրախտում կլինես» (Հմ. 43): Վախճանին մոտ նայեց իր մորը և ասաց. «Ո՛վ կին, ահա՛ քո որդին»: Հետո ասաց աշակերտին. «Ահա՛ քո մայրը» (Հովհ. 19 26-27): Իսկ հոգին ավանդելիս իր սիրո վերջին արարը իր հորը վստահելն էր, երբ ասաց. «Հա՛յր, հոգիս քո ձեռքն եմ ավանդում» (Ղուկ. 23. 46):

Հիսուսը նպատակադրված ընտրեց խաչը, ցույց տալու համար իր հնազանդությունը իր Հոր հանդեպ, ինչպես նաև մեր նկատմամբ ունեցած սիրո խորությունը: Նա մինչև վերջ ցույց տվեց իր անսպառ ու մնայուն սերը:

Աղոթք - Տե՛ր, հիշեցրո՛ւ՝ մեզ Քո մեծ սիրո և այն մասին, որ սերն ու հնազանդությունը ամբողջացնում են իրար: Ամեն:

Հիսուսի յուրաքանչյուր խոսքն արտասանված է սիրով:

Կարդա՛ր Ղուկաս 23.32-46

Նրա համար է իմ
Յայրն ինձ սիրում,
որ իմ կյանքը դնում
եմ... ոչ ոք ինձա-
նից չի վերցնում,
այլ ես ինքս եմ ին-
ձանից դնում այն:
Յովհ. 10.17-18

Պատուված վարագույրը

Խավար ու մռայլ օր էր երուսաղեմի ծայրամասերում: Քաղաքից դուրս մի բլրի վրա մի Մարդ, որը անցյալ երեք տարիներին հետաքրքրված մարդկանց էր գրավում ու առաջնորդում, հիմա խայտառակված ու ցավալլուկ կախված էր կոպիտ փայտե խաչի վրա: Սգացողները վշտահար լացին ու ողբացին: Այդ կեսօրից հետո արևն այլևս չլուսավորեց երկինքը: Ու խաչի վրա գամված Մարդու սաստիկ տառապանքն ավարտվեց, երբ նա բարձրաձայն գոչեց ու ասաց. «Կատարվեց» (Մատթ. 27. 50, Հովհ. 19.30):

Ճիշտ այդ պահին սուրբ քաղաքի տաճարից մեկ այլ ձայն եկավ՝ պատուփող վարագույրի ձայն: Այդ հաստ կտորից պատրաստված, մեծ վարագույրը, որ բաժանում էր տաճարի գավիթը Սրբություն Սրբոցից, առանց մարդու միջամտության, հրաշքի ձևով վերից վար բաժանվեց երկու մասի (Մատթ. 27.51): Պատուված վարագույրը խորհրդանշեց խաչի իրականությունը, նոր ճամփա էր բացված դեպի Աստված: Հիսուսն Իր արյունը թափել էր՝ որպես վերջին գոհը, միակ ճշմարիտ ու բավարար գոհը (Եբ. 10.10), որն արտոնում է բոլոր Իրեն հավատացողներին ներում վայելել ու Աստծո հետ նոր հարաբերության մեջ մտնել (Հռոմ.5 6-11): Հիսուսը մեզ համար մեր մեղքերից փրկվելու ճամփա բացեց և Աստծո հետ հաղորդակցություն ունենալու փորձառության միակ միջոցը տվեց (Եբ. 10.19-22):

Աղոթք - Երկնավոր Հայր, շնորհակալ եմք փրկության հավիտենական ծրագրի համար: Շնորհակալ եմք, որ Իր միջոցով քեզ եմք միանում ու հավիտյան Քեզ հետ հաղորդակցություն պիտի վայելենք: Ամեն:

Ավագ Ուրբաթ պատահածը մեզ խավարից դեպի լույս է բերում և պարգևում Աստծո հետ հաղորդակցության շնորհը:

Կարդա՛ Եբր. 10.10-23

...համարձակություն ունենք սրբարան մտնելու Հիսուսի արյունով, որը մեզ համաչ նոր ու կենդանի ճանապարհ բացեց վարագույրի միջով, այսինքն՝ իր մարմնով: Եբր. 10.19-20

Ո՞վ է Նա

Մի մարդ իր տան առջև անվտանգության տեսախցիկ տեղադրեց: Վստահ լինելու համար, որ սարքն աշխատում է, նա որոշեց հետևել դրան ու դրա շրջանակում նկատեց թիկնեղ ու մուգ հագուստով մի մարդու տեղաշարժը: Ուշադրությունը լարեց տեսնելու համար, թե ինչ պիտի անի այդ մարդը, և նրա տեսքը ծանոթ թվաց: Վերջապես հասկացավ, որ այդ թափառող օտարականն ինքն էր, որ նախապես էր նկարվել:

Ի՞նչ կարող ենք տեսնել, եթե հնարավորություն ունենանք մեզ որոշ հանգամանքներում դիտել կողքից: Երբ Դավթի սիրտը կարծրացավ, նա չգիտակցեց Բերսաբեի հետ իր ունեցած հարաբերության հետևանքը: Նրա արածը Տիրոջ աչքին չար բան երևաց և Նա Նաթան մարգարեին ուղարկեց Դավթի մոտ (Բ թագ. 12): Մարգարեն Դավթին մի հարուստ մարդու մասին պատմեց, որը չնայած ուներ շատ ոչխարներ ու արջառներ, բայց իր հյուրի համար մորթեց աղքատ մարդու միակ գառնուկն ու կերակուր պատրաստեց: Եվ ասաց, որ այդ պատմությունը իր այն արարքի մասին է, որ գործել է՝ սպանել տալով Ուրիային՝ Բերսաբեի ամուսնուն: Նաթանի պատմությունից հետո Դավթը գիտակցեց իր մեղքն ու ասաց Նաթանին. «Մեղանչել եմ Տիրոջ դեմ»: Ի պատասխան Նաթանն ասաց. «Տերը ներեց քո մեղքը» (Բ թագ. 12.13):

Ձղջումը մաքրում է ճամփան դեպի Աստված ու իր ներումի ու շնորհքի զորությունը նորոգում է մեր մտախկությունն իր հետ:

Աղոթք - Սիրելի՛ Աստված, օգնիր, որ կարողանամ կյանքս տեսնել, ինչպես որ Դու ես տեսնում: Ուզում եմ Քո շնորհքի փորձառությունը վայելել ու հավիտյան Քեզ հետ քայլել: Ամեն:

Մեղքեր ունե՞ս: Դրանք անկեղծությամբ ու զղջումով բե՛ր Աստծո առաջ:

Կարդա՛ր
Բ Թագ. 12.1-14

Դավիթը Նաթանին ասաց. «Մեղանչել եմ Տիրոջ դեմ»: Նաթանն ասաց Դավթին. «Տերը ներեց քո մեղքը»: Բ Թագ. 12.13

Մաքուր լվացված

Անհնար էր հավատալ: Կապույտ գրիչը, ճերմակ անձեռոցներին մեջ փաթաթված, դիմացել էր լվացքի մեքենայի մեջ, բայց չորացնող մեքենայում ներկը դուրս էր հոսել: Տգեղ կապույտ բծերը ապականել էին ճերմակ անձեռոցներս, որոնք որևէ մաքրող միջոց ի գորու չէր անցկացնել:

Մինչ այդ վնասված անձեռոցները կտեղավորեի այլ նպատակով օգտագործելու կտորների մեջ, Հին Կտակարանից հիշեցի Երեմիա մարգարեի ողբը, որը նկարագրում էր մեղքի վնասակար ազդեցությունը: Երեմիան հայտարարեց, որ Աստուծոն մերժելով և կուռքերին երկրպագելով (Երեմ. 1.16)՝ Իսրայելի ժողովուրդը մնալուն բծեր է թողել Աստուծո հետ ունեցած հարաբերության մեջ. «Եթե բորակով էլ լվացվես և կամ օճառը ձեռքիցդ վար չզցես, դարձյալ իմ առաջ քո անիրավությունների մեջ շաղախված կմնաս, - ասում է Տեր Աստվածը» (Երեմ. 2. 22): Նրանք անգոր էին իրենց արած վնասից ետ դառնալ:

Մեր միջոցներով ու կարողություններով անհնար է մեղքի բծերը մաքրել: Սակայն Հիսուսն արել է մեզ համար անկարելին: Իր մահվան ու հարության գործությամբ Նա «մեզ մաքրում է ամեն մեղքից» (Ա. Հովհ. 1.7):

Այս հիանալի ճշմարտությունը կառչիր, եթե նույնիսկ դժվար է հավատալ. չկա մեղքի պատճառով վնաս, որ Հիսուսը չկարողանա վերացնել: Աստված պատրաստ է ամեն անիրավությունից մաքրել նրանց, ով կկամենա Իր կողմը դառնալ (Հմ. 9):

Աղոթք - Սիրելի Հայր, օգնիր, որ ազատվեմ մեղքի ճնշումից, դառնամ դեպի Քեզ, որպեսզի ինձ մաքրես բոլոր մեղքերից: Ամեն:

Հիսուսի արյունն ամբողջովին մաքրում է մեղքի առաջացրած բոլոր բծերը:

Կարդա՛
Երեմիա 2.13, 20-22

...Նրա Որդի Հիսուս
Քրիստոսի արյունը
մեզ մաքրում է ամեն
մեղքից: Ա Հովհ. 1.7

Երկրորդ հոլի գորություն

Հիսուսն չորս տարեկանում որոշեցի մասնակցել Միլաքի մարաթոնյան վազքի մրցումներին: Հինգ ժամում պետք է ավարտեի մրցումը՝ հաղթահարելով երկու նպատակակետ: Ամեն ինչ սքանչելի կլինեի, եթե երկրորդ 13.1 մղոնը ընթանար առաջինի նման: Սակայն մրցումը դժվար էր, և իմ սպասած երկրորդ շնչառությունը կամ «երկրորդ հոլի գորությունը» չիրականացավ: Եվ երբ հասա մրցումի ավարտին, հաստատուն քայլերս ցավալի քայվածքի էին վերածվել:

Վազքի մրցումները միակը չեն, որ կարիք ունեն երկրորդ շնչառության: Կյանքի վազքը նույնպես ունի այդ անհրաժեշտությունը: Հոգնած ու սպառված մարդիկ դիմանալու համար

Աստծո օգնության կարիքն ունեն: Եսայի մարգարեն 40.27-31-ում գեղեցիկ կերպով միախառնում է բանաստեղծությունն ու մարգարեությունը՝ մխիթարելու նրանց, ովքեր իրենց ընթացքը շարունակելու համար գորության կարիք ունեն: Մարգարեի հիանալի խոսքերը հուսահատ ու հոգնած մարդկանց հիշեցնում են, որ Տերը անհոգ ու անտարբեր չէ (Հմ. 27), և մեր վիճակը իր ուշադրությունից չի վրիպել: Այս խոսքերը մխիթարություն ու վստահություն են ներշնչում և մեզ հիշեցնում, որ Աստծո գորությունն անսահման է, իմացությունն՝ անհատակ (Հմ. 28):

29-31-ում նկարագրված «երկրորդ հոլի գորությունը» մեզ հարմար է, երբ մեր ընտանիքում ունենք խնդիրներ, երբ ֆիզիկական ու նյութական ծանր լծի տակ ենք: Այդ գորությունը սպասում է նրանց, ովքեր մտածելով Աստծո խոսքի մասին ու աղոթելով՝ Տիրոջն են ապավինում:

Աղոթք - Տե՛ր, իմ տկարություններով ու հոգսերով գալիս եմ դեպի Քեզ: Խնդրում եմ՝ տու՛ր ինձ նորոգված ուժ: Ամեն:

Երբ զգաս, որ քո մեջ պակասել է գորությունը, Աստծո գորությունը խնդրի՛ր:

Կարդա՛ Եսայի 40.27-31

Ինձ մո՛տ եկեք, բոլոր՝ հոգնածներ ու բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ:
Մատթ. 11.28

Լույսը տեսնել

Բրայըն անուևով մի թափառաչըջիկ, որը վնասակար սովորություններ ուներ, Լոս Անջելեսի փողոցներում շրջելիս մտավ մի կեսգիշերային բարեսիրական կենտրոն: Այստեղ սկսվեց նրա բուժման երկար ճանապարհը, որի ընթացքում Բրայընը վերագտավ երաժշտության հանդես իր ունեցած սերը: Միացավ «Փողոցի սիմֆոնիա» անուևով երաժշտախմբին, որի անդամները հատուկ սեր ու համակրանք էին տաժում անտուն մարդկանց հանդես: Նրանք խնդրեցին, որ Բրայընը կատարի Հենդելի Մեսիայից մի հատված, որը հայտնի է «Խավարի մեջ քայլող ժողովուրդը» անուևով: Բրայընը երգեց Իսրայելի պատմության մուսյլ օրերին Եսայի մարգարեի բառերով գրված այս երգը. «Այն ժողովուրդը, որն ընթանում էր խավարի միջով, տեսավ մեծ լույս, աշխարհում և մահվան ստվերների մեջ բնակվողների վրա լույս պիտի ծագի» (Ես. 9.2): Նյու Յորքեր թերթի հայտնի մի քննադատ գրեց. «Բրայընը այդ հատվածը լսելի դարձրեց, որպես իր կյանքից վերցված դրվագ»:

Մատթեոսը այդ նույն հատվածը մեջբերեց: Հիսուսից առաջարկ ստանալով թողնել իսրայելցիների մոտ մաքսավորի իր խարդախ գործը, Մատթեոսը նկարագրում է, թե ինչպես է Հիսուսն իրականացնում Եսայիի մարգարեությունը, իր փրկությունը «Հորդանանի այն կողմը՝ հեթանոսների Գալիլեա տանելով» (Մատթ. 4.13-15): Ո՞վ պիտի հավատար, որ Կայսեր համար աշխատող մաքսավորներից մեկը, որը գողանում էր (Մատթ. 9.9), Բրայընի նման թափառաչըջիկը և կամ մեզ նման մարդիկ իրենց կյանքով պիտի առիթ ունենան ցույց տալու լույսի ու խավարի տարբերությունը:

Կարդա՛
Մատթեոս 4.12-25

Այն ժողովուրդը, որն ընթանում էր խավարի միջով, տեսավ մեծ լույս... Եսայի 9.2

Աղոթք - Յայր, մեր կյանքի խավարում խնդրում ենք՝ օգնիր մեզ՝ տեսնելու Քո որդու՝ մեր Տիրոջ ու Փրկչի լույսը: Ամեն:

Եթե Տիրոջ լույսը փոխել է քեզ, ցույց տուր այն ուրիշներին:

Վերականգնում

Հուլիսի պատգամ՝ դատապարտությունից հետո: Հոգին Եզեկիել մարգարեին առաջնորդում է անապատ, որտեղ սիւզված էին պատերազմի ժամանակ զոհվածների անթաղ ոսկորներ: Այս խորհրդավոր փորձառությունը մարգարեին մղում է առաքելություն: Նրա մարգարեություն միջոցով ընկածները նոր հոգի են ստանում և հույսով տոգորվում, որ իրենց սեփական երկրում նոր կյանք են ունենալու: Ապրիլյան մեծ եղեռնը և դրան հաջորդող 104 տարիները նման են Իսրայելի ժողովրդի այդ դրությունը: Տարագրման և սպանդի ենթարկված ժողովրդի համար իրավիճակը անհույս է թվում, անապատում եղած ոսկորները չորացել էին: Բայց մեռած մարմինը կյանքի դալով՝ նոր հույս է ներշնչում ժողովրդին: Կենդանի Աստծո ձեռքերում անշնչացած ոսկորները նոր կյանք են ստանում: Աստված կարողանում է դա անել: Պիտի հույս ունենանք: Կյանքն առանց հույսի անարժեք է, իսկ անհիմն հույսը չտրամաբանող մտքի արդյունք է: Մենք հույս ենք ունենալու անդրշիրիմյան կյանքի համար: Հույսը տեր Հիսուս Քրիստոսի Հարությունն է և Քրիստոսի Հարությունը մեր հույսի հիմքն է: Մեր հույսն է, որ մենք էլ պիտի հարություն առնենք: Ապրիլի 24-ը չի կարելի մոռանալ: Կանխամտածված ջարդ, բարբարոսություն, թալան, բնաջնջում և տարագրում: Կոտորեցին, քանդեցին ու սպանեցին ամեն Հայ ու Հայկական: Բայց թշնամու սուրբ անկարող եղավ սպանել Հային: Թեև սպանեց նրա մարմինը, չկարողացավ սպանել հոգին: Հայի՛ հոգին, որն աստծո շնորհքով վերականգնվեց ու ապրեց:

Կարդա՛ Եզեկիել 37.1-14

Նա ասաց ինձ. «Մարդու որդի, արդյոք կկենդանանա՞նք այդ ոսկորները»: Ես ասացի. «Տէ՛ր Աստված, այդ դու գիտես»: Եզ. 37.3

Աղոթք - Արդար Աստված, աղոթում ենք՝ հիշեցրու՛ մեզ, որ մենք վերականգնվել, ապրում ու շնչում ենք Քր՝ շնորհքով: Ամեն:

Աստված մեզ կյանք տվող ու մոխիրներից բարձրացնող Աստվածն է:

Ոչ երեկվա պես

Երբ մեր թոռնիկ Ջեյը փոքր էր, ծնողները նրան տարեդարձի առիթով շապիկ նվիրեցին: Նա հագավ և ամբողջ օրը կրեց այն: Երբ հաջորդ օրն էլ երեխան երևաց նույն հագուստով, հայրը հարցրեց. «Ջե՛յ, այդ հագուստը քեզ ուրա՞խ է պահում»: Նա պատասխանեց. «Ոչ երեկվա չափ»:

Այդպես է նյութական արժեքների դեպքում: Նույնիսկ կյանքի բարիքները անկարող են մեզ տալ մեր շատ երազած խոր ու մնայուն ուրախությունը: Կարող ենք շատ բաներ ունենալ և սակայն ուրախ չլինել:

Մենք ուրախանում ենք ձեռք բերելով նյութական արժեքներ. նոր հագուստ, նոր մեքենա, նոր հեռախոս կամ ժամացույց: Սակայն ոչ մի նյութական բան մեզ չի կարող ուրախացնել երեկվա չափ: Այդպես է, որովհետև մենք ստեղծված ենք Աստծո համար և ոչ մի բան դրանից պակաս չի կարող լինել: Մի օր, երբ Հիսուսը ծոմ էր պահում և Ֆիլիպպեյս թույլ էր, սատանան փորձելու նպատակով մոտեցավ նրան ու խորհուրդ տվեց քաղցը հագեցնելու համար հաց ստեղծել: Հիսուսը հակադարձեց նրան՝ մեջբերելով Երկ. Օր. 8.3 ասելով. «Մարդ ոչ միայն հացով է ապրում, այլև այն ամեն խոսքով, որ Աստծո բերանից է դուրս գալիս» (Մատթ. 4.4): Հիսուսը չուզեց ասել, թե մենք միայն հացով ենք ապրելու: Ընդհակառակը, նա տեսություն հայտնեց. մենք հոգևոր էակներ ենք, հետևաբար միայն նյութական բաներով չենք կարող գոյություն ունենալ:

Զնամարիտ գոհունակությունը Աստծո և Իր ճոխությունն է:

Աղոթք - Հայր, սովորեցրո՛ւ ինձ, թե ինչ է նշանակում Քո հարստությունով ապրել: Միայն Դու՛ ունես այն, ինչի կարիքը ես զգում եմ: Ամեն:

Նյութական արժեքները երկարատև ուրախություն չեն կարող տալ:

Կարդա՛ր Մատթեոս 4.1-11

Մարդը միայն հացով չէ, որ ապրում է, այլ մարդն ապրում է նաև այն ամեն խոսքով, որ ելնում է Աստծու բերանից:
Երկ. Օր. 8.3

Ինչ որ Աստված է տեսնում

Առավոտները նայում եմ մեր տան հյուրասենյակի պատուհանից : Այդտեղ ես հաճախ եմ տեսնում, որ միայնակ բուն կամ բազեն հսկում են տարածքը: Մի առավոտ զարմացա՛ տեսնելով, որ մի բարձր ճյուղի վրա նստած արծիվն էր ուշադիր դիտում շրջապատը այնպես, ասես այդ ամբողջն իրենն էր: Վստահաբար նա սպասում էր իր «նախաճաշին»: Արծվի ամենատես հայացքն արքայական էր:

Բ Մնացորդաց 16-ում Աստծո մարգարե Անանիասը Հուդայի երկրի թագավոր Ասային տեղեկացրեց, որ նրա արարքները Աստծո հսկողություն ներքո են: Նա թագավորին ասաց. «Դու ապավինեցիր ասորիների արքային և ոչ թեքո Տեր Աստծուն»(Հմ.7): Ապա բացատրեց ու ասաց. «Քանզի տիրոջ աչքերը նայում են ամբողջ երկրին, որպեսզի նա գորացնի բոլոր նրանց, որոնց սրտերը ուղիղ են»(Հմ.9): Այս ճշմարտությունն անտեսելու համար Ասայի երկիրը միշտ պատերազմների մեջ էր լինելու:

Այս խոսքերը կարգալով՝ կարող ենք սխալ պատկերացում ունենալ, թե Աստված մեր բոլոր քայլերը հսկում է, որ մեզ վրա հարձակվի գիշատիչ թռչունի նման: Սակայն Անանիասի խոսքերը դրական շեշտադրում ունեն: Նա ընդգծում է, որ Աստված շարունակ հսկում է և սպասում, որ երբ կարիք ունենանք, կանչենք Իրեն: Այդ արծվի նման ինչպե՞ս կարող են Աստծո աչքերը դիտել մեր աշխարհը, իմ և քո մեջ տեսնել ու գտնել հավատարմություն: Ինչպե՞ս է նա մեզ հարկավոր հույսն ու օգնությունը հայթայթում:

Աղոթք - Ո՛վ Տեր, գորացրու՛ մեր սրտերը, որպեսզի մենք ամբողջովին Քեզ հանձնվենք: Ամեն:

Ուղղության և առաջնորդվելու համար նայի՛ր Աստծուն, որ քաջալերվես ու օգնությանդ կոչը Իրեն ուղղես:

**Կարդա՛ր
Բ Մնաց. 16.7-9**

Քանզի տիրոջ աչքերը նայում են ամբողջ երկրին, որպեսզի նա գորացնի բոլոր նրանց, որոնց սրտերը ուղիղ են: Բ Մնաց. 16.9

Գեղեցկությունը վայելել

Ուշադրությունս գրավեց քաղաքի մեծ հիվանդանոցներից մեկի պատին կախված կտավը: Դրա նուրբ երանգներն ու Նավահոյի բնիկ ամերիկացիների պատկերները այնքան գրավիչ էին, որ կանգ առա՝ դիտելու և հիանալու: Ամուսնուս՝ Դենին նույնպես ասացի, որ նայի այդ գեղեցիկ նկարը:

Կյանքում շատ տպավորիչ բաներ կան, արվեստի գլուխգործոց կտավներ, հիասքանչ տեսարաններ, ձեռագործ աշխատանքներ: Գեղեցիկ են նաև մանկան ժպիտը, բարեկամի բարևը, ծովային կամ ցամաքային որևէ արարած կամ թռչուն: Կյանքի տված ծանր բեռներից ազատվելու համար Աստված «ամեն ինչ լավ է արել իր ժամանակի համար» (Ժող 3.11): Աստվածաշնչի մեկնաբանները բացատրում են, որ նման գեղեցկությունը վայելելիս Աստծո ստեղծագործությունից նշույլ ենք վերցնում լինելով իր կատարյալ օրենքի գալիք փառքի մեջ:

Մենք միայն կարող ենք երևակայել նման կատարելություն, հետևաբար Աստված մեզ շնորհում է զրա նախահամր կյանքի գեղեցկության մեջ: Այսպես, Աստված «հավիտենությունը ճանաչելու իղձ տվեց նրանց սրտերին» (Հմ 11):

Օրեր են լինում, երբ կյանքը բռնի և ապարդյուն է թվում: Բայց Աստված մեզ տալիս է գեղեցկության պահեր՝ մտորելու համար:

Շնորհակալություն հայտնենք Աստծուն գալիք հավիտենականության համար, մինչև կմնանք վայելելու այն փառքը, որ արդեն տեսնում ենք:

Շնորհակալություն հայտնենք Աստծուն գալիք հավիտենականության համար, մինչև կմնանք վայելելու այն փառքը, որ արդեն տեսնում ենք:

Աղոթք - Յայր, օգնիր, որ տեսնեմ ու վայելեմ Քո բերած գեղեցկությունն իմ կյանքում, մինչ նույն պահին նայում եմ հավիտենականությանը: Ամեն:

Բնության գեղեցկությունը աստօն գեղեցկությունն է արտացոլում:

Կարդա՛ր
Ժողովող 3.9-13

Ամեն ինչ լավ է արել իր ժամանակի համար: Ժող 3.11

Աստծո հանգստյան կոչվելու ծրագիրը

Հնագետ, դոկտոր Ուարիք Ռոզվելը պատրաստվում էր վաստակած հանգստի անցնել, երբ Անգլիայի Լիչֆիլդ տաճարում բացառիկ հայտնագործություն արեց: Շինարարները վերանորոգման աշխատանքներ կատարելիս քանդել էին եկեղեցու հատակը և գտել Գաբրիել հրեշտակապետի քանդակը: Դոկտոր Ռոզվելի հանգստանալու ծրագրերը փոխվեցին, որովհետև ենթադրում էին, որ գտածոն 1400 տարեկան է, և դառնալու է հետաքրքիր ու ծավալուն գործի սկիզբ:

Մովսեսը 40 տարեկան էր, երբ կրակի միջից հայտնաբերում ունեցավ, որն իր կյանքը պիտի արմատապես փոխեր: Թեև նա եգիպտոսի իշխանուհու որդեգիր զավակն էր, բայց բնավ չմոռացավ իր հրեական արմատները և զայրացավ տեսնելով իր ազգակիցների կրած անարդարությունները: (Ել. 2.11-12): Երբ փարավոնն իմացավ, որ Մովսեսը սպանել է մի հրեայի ձեռող եգիպտացուն, որոշեց սպանել նրան: Մովսեսը փախավ Մադիամի երկիր (Հմ 13-15) :

Քառասուն տարի անց, երբ ութսունամյա Մովսեսը իր աներոջ ոչխարներն էր արածեցնում, «Տիրոջ հրեշտակը երևաց նրան մորենու միջից կրակի բոցով: Մովսեսը տեսնում էր, որ մորենին հրով վառվում էր, բայց չէր այրվում» (Ել.3.2): Այդ պահին Աստված նրան կանչեց և ուղարկեց Իսրայելի ժողովրդին եգիպտոսի գերությունից ազատելու (Հմ 3.10):

Քո կյանքի այս պահին Աստված ինչի համար որ կանչում է քեզ, իր մեծ նպատակի իրագործման համար է: Ի՞նչ նոր ծրագրեր է նախատեսել քե՛զ համար, ք՛ո ճամփին:

Աղոթք - Սուրբ Աստված, Տերը եղի՛ր իմ օրերի, մինչև դրանք նորից Քեզ կհանձնեն: Ամեն:

Աստված մեզ կկանչի: Պատրաստ լինենք իր ծրագրերը կատարելու:

Կարդա՛ր
Ելք 3.1-10

Տիրոջ հրեշտակը երևաց նրան մորենու միջից կրակի բոցով: Ելք 3.2

Չասկանալ կյանքի փորձությունները

Բարեկամիս հոր մոտ քաղցկեղ էր խտորոշվել: Քիմիաթե-
րապիայի ընթացքում նա հավատքով իր կյանքը հանձնեց
Տեր Հիսուսին: Բուժման արդյունքում նա քաղցկեղից ազատ-
վեց և տարիուկես սքանչելի օրեր ապրեց: Բայց հիվանդություն-
նը կրկնվեց, և նա ու իր կինը ստիպված էին դիմագրավել
դառն իրականությունը՝ հարցնելով ինչ^{ո՞ւ}: Եվ որովհետև
Աստված առաջին անգամ իրենց հետ էր,
ներանք դարձյալ հավատքով Նրան
ապավինեցին:

Մենք միշտ չպիտի հասկանանք, թե
ինչու ենք անցնում փորձությունների
միջով: Վստահաբար նույնն էր Հոբի
դեպքում: Հակառակ իր բազում անպա-
տասխան հարցումների՝ նա հայտարա-
րում է, թե Աստված հզոր է: «Թե Նա կործանի՝ ո՞վ կշինի այն»
(Հոբ 12.14) և «Նրանի՛ց գալիս են ուժ ու զորություն» (Հմ.16):
«Թափառական է դարձնում ազգերին, կործանում նրանց»
(Հմ.23): Այս թվարկումների մեջ Հոբը չի հիշատակում Աստծո
դրդապատճառները և այն, թե ինչ^{ո՞ւ} է նա ցավ ու տառա-
պանք թույլ տալիս: Հոբը այդ հարցերի պատասխանը չունի,
բայց, այդուամենայնիվ, վստահ ասում է. «Նրանի՛ց գալիս են
ուժ, իմաստություն, նրա՛նն են խորհուրդներն ու հանճարը»
(Հմ. 13):

Մենք թերևս չպիտի հասկանանք, թե ինչու ենք մեր կյան-
քում բազում փորձություններ հաղթահարում, բայց կարող
ենք վստահել Նրան: Տերը սիրում է մեզ և մեզ պահում է իր
հզոր ձեռքերում (Հմ. 10, Ա. Պետ. 5.7):

Աղոթք - Տեր, օգնի՛ր ինձ, որ Քեզ վստահեմ նույնիսկ այն
ժամանակ, երբ չեմ հասկանում, թե Դու ինչ ես անում: Ամեն:

**Կյանքի դժվարությունների միջով անցնելիս հիշի՛ր,
որ Աստված քեզ հետ է:**

Կարդա՛
Յոբ 12.13-35

Նրանի՛ց գալիս են
ուժ, իմաստություն,
Նրանց են խորհուրդ-
ներն ու հանճարը:
Յոբ 12.13

Սրբեր և մեղավորներ

Եգիպտացի Մարիամը (344-421 Ք. Ե.) անապատում ապրե-
լուց և Հովհաննես Մկրտիչի քայլերին հետևելուց առաջ իր
երիտասարդ տարիներին անբարո կյանք էր վարում ու մարդ-
կանց հրապուրում: Իր խայտառակ կյանքի գազաթնակետին
նա մեկնեց Երուսաղեմ՝ փորձելով ուխտավորներին գայթակ-
ղել: Բայց փոխարենը իր մեղքերի խոր գիտակցության փորձա-
ռությունն ունեցավ, հետևաբար և
ապաշխարելու համար մեկուսացավ
անապատում: Մարիամի այս արմատա-
կան փոխակերպումը ցույց է տալիս
Աստծո շնորհքի և Տեր Հիսուսի խաչի
վերանորոգող զորությունը:

Պետրոս առաքյալը երեք անգամ Տեր
Հիսուսին ուրացավ: Այն դեպքում, երբ մի քանի ժամ առաջ
պատրաստակամություն էր հայտնել Հիսուսի համար մեռնել
(Ղուկ. 22.33): Հիսուսի մահից ու հարությունից հետո, երբ
Պետրոսը մի քանի աշակերտների հետ ձուկ էր որսում, Հիսու-
սը երևաց նրանց և առիթ տվեց, որ Պետրոսը երեք անգամ
հայտարարի իր հանդեպ ունեցած սիրո մասին (Հովհ. 21.1-3,
15-17): Ապա յուրաքանչյուր հայտարարության հետ Հիսուսը
Պետրոսին պատվիրեց, որ իր ժողովրդի հանդեպ հոգատար լի-
նի (Հմ. 15-17):

Շնորհքի այս զգայացունց արտահայտությունն արդյունքն
այն եղավ, որ Պետրոսը կարևոր դեր ունեցավ եկեղեցու կա-
ռուցման գործում և ի վերջո իր կյանքը նվիրեց Քրիստոսին:

Աստծո շնորհքով մեր կենսագրությունը այլ շարունակու-
թյուն կարող է ունենալ: Նա փրկում ու փոխակերպում է մեզ:

Աղոթք - Հայր, մեր մեղքերի ու թուլությունների պատճա-
ռով ձախողումներ ենք ունենում: Ների՛ր մեզ և Քո շնորհքով
փրկի՛ր ու փոխակերպի՛ր: Ամեն:

Աստծո շնորհքը մեզ մեղավորներից սրբերի կվերածի:

Կարդա՛
Ղուկաս 22. 54-62

Երրորդ անգամ
ասաց նրան.
«Սիմո՛ն, Հովնանի՛
որդի, ինձ սիրո՞ւմ
ես: Հովհ. 21.17

Սուրբգրային դեղատոմս

Գրեգն ու էլլիզաբեթը իրենց չորս դպրոցահասակ զավակներին հետ հերթական «կատակի երեկոն» են անցկացնում: Ընթրիքի սեղանի շուրջ փոքրիկներից յուրաքանչյուրը պատմում է շաբաթվա ընթացքում իր կարդացած, լսած, և կամ իր հյուսած հումորային պատմությունը: Այս բարի սովորությունը ընտանիքի համար դարձել էր զվարճություն հաճելի առիթ: Գրեգն ու էլլիզաբեթը նույնիսկ նկատել էին, որ կատակը օգտակար է իրենց զավակներին և իրենց դժվարին օրերին նրանց հոգեկան հրճվանք է պարգևում:

Ուրախ սիրտ ունենալու հոգատար իմաստությունն ենք գտնում նաև Առակաց 17.22-ում, երբ կարդում ենք.

«Ուրախ սիրտը առողջարար է. հոգսերի մեջ ընկած մարդու սուկորները ցամաքում են»:

Առակացն առաջարկում է մի «դեղատոմս», որը առողջություն ու բուժում է տալիս՝ մեր սիրտը ուրախությունից լցնելով, մի դեղ, որը շատ էֆան է, բայց և մեծ արդյունք է ապահովում:

Բոլորս կարիք ունենք այդպիսի դեղատոմսի: Երբ մեր խոսքի մեջ ուրախություն բերենք, մեր տարածայնությունները այլ լուծում կունենան: Զվարճությունն ու հումորը ընտանիքում ու բարեկամների հետ կարող են ապահով միջավայր ստեղծել իմանալու և զգալու համար, որ սիրված ենք: Եթե որպես «լավ դեղատոմս»՝ քո կյանքում զգում ես այս բերկրանքի ու խնդրության կարիքը, հիշի՛ր, Աստծո խոսքը քեզ քաջալերում է, որ ուրախացնես քո սիրտը:

Աղոթք - Ամենազոր Աստված, շնորհակալ եմ, որ պարգևում ես մեր սրտերը լցնող ուրախություն: Շնորհակալ եմ, որ նույնիսկ դժվար պահերին խոստանում ես մեր սրտերը լցնել ուրախությամբ և մեր խոսքը համենել կատակով: Ամեն:

Կյանքի բոլոր մարտահրավերներում էլ կարելի է լցվել Տիրոջ ուրախությամբ:

**Կարդա՛ր
Առակներ 17.19-22**

Ուրախ սիրտը առողջարար է. հոգսերի մեջ ընկած մարդու սուկորները ցամաքում են: Առ. 17.22

Հարատև աղոթել

Քեյվինը լացակուճած թղթի մի կտոր մեկնեց կնոջս՝ Գերբի-ին, որ կարգա: Նա գիտեր, որ ես ու կինս աղոթում էինք, որ մեր աղջիկը հավատաքով դառնա դեպի Հիսուսը: «Այս գրու-թյունը մորս մահից հետո գտել եմ նրա Աստվածաշնչի մեջ և հույս ունեմ, որ այն կօգնի ձեզ»: Գրության վերևում հետևյալ բառերն էին. «Որդուս՝ Քեյվինի համար», իսկ ներքևում փր-կության մի աղոթք էր:

Քեյվինն ասաց. «Հիմա այս գրու-թյունն իմ Աստվածաշնչի մեջ եմ պա-հում: Մայրս ավելի քան երեսունհինգ տարի աղոթեց իմ փրկության համար: Աստծուց շատ հեռու էի, իսկ այժմ հա-վատում եմ Նրան»: Ապա քնքշությամբ նայելով մեզ ու արցունքների միջից ժպտալով՝ ասաց. «Բնավ տեղի չտա՛ք ձեր աղջկա համար, հոգ չէ, թե որքան երկար կտևի»:

Նրա քաջալերանքի այս խոսքերը ինձ հիշեցրին Ղուկասի Ավետարանում աղոթքի մասին Հիսուսի պատմածի ներածա-կանը: Ղուկասն սկսում է այս բառերով. «Նրանց մի առակ էլ ասաց այն բանի վերաբերյալ, որ պետք է ամեն ժամանակ աղոթք անել ու չվհատվել» (Ղուկ. 18.1): Այս պատմության մեջ Տեր Հիսուսը «մի անիրավ դատավորի» (Հմ.6), որն ընդա-ռաջում է մեկի խնդրանքին, որովհետև այլևս չէր ուզում ան-հանգստանալ, հակադրում է կատարյալ Երկնավոր հորը, որը մեզ մեծ սիրով է սիրում և ուզում է, որ մոտենանք Իրեն: Աղո-թելիս կարող ենք քաջալերվել, իմանալով, որ Աստված լսում և ընդունում է մեր աղոթքները:

Կարդա՛
Ղուկաս 18.1-8
Մշտապես աղոթե-
ցեք ու գոհունա-
կությանը արթո՛ւն
կացեք նրա մեջ:
Կող. 4.2

Աղոթք - Սիրող Աբա՛ Հայր, շնորհակալ եմ, որ որևէ մեկի խնդրան-քը մե՞ծ կամ փոքր չէ Քեզ համար: Օգնի՛ր, որ հավատարմությամբ աղոթեմ նրանց համար, որոնք Քեզ դեռ չեն ճանաչում: Ամեն:

Աստված աղոթքի պատասխանող Աստվածն է: Ուստի հարատև աղոթի՛ր նրանց համար, որոնք փրկության կարիք ունեն:

Քարեանությունից այն կողմ

2017-ի ամռանը Հարվի փոթորիկը կործանարար վնասներ հասցրեց Միացյալ Նահանգների Մոցի ծովեզրյա շրջաններին: Շատերը ուտելիք, ջուր ու հագուստեղեն էին հայթայթում աղետյալ շրջանների բնակիչների համար: Մերիլենդի դաշնամուրի խանութի տերը ավելին անելու ցանկություն ունեցավ: Նկատի ունենալով, թե երաժշտությունը ինչ ամօքիչ ներգործություն կարող է ունենալ այն մարդկանց համար, ովքեր ամեն ինչ կորցրել են, նա և իր գործընկերները սկսեցին նորոգել օգտագործված դաշնամուրները և դիմումներով պարզել, թե որտեղ կա դրանց կարիքը: Այնուհետև Դին

Կարդա՛ր
Դուկաս 10.25-37

Սիրիր քո ընկերօր քո անձի պես: Մարկ. 12.31

Գրեյմըն ու իր տիկին Լույսը դաշնամուրներով լցված բեռնասայլով սկսեցին երկար ճանապարհը դեպի Հյուստոն ու Թեքսաս՝ իրենց նորոգած դաշնամուրները նվիրելու փոթորկից վնասված շրջանների ընտանիքներին, եկեղեցիներին ու դպրոցներին:

Մենք հաճախ ենթադրում ենք, թե «դրացի» կամ «ընկեր» նշանակում է միայն մեզ մոտ ապրող կամ մեզ ծանոթ մարդ: Բայց Սամարացու առակը (Դուկ. 10) ցույց է տալիս, որ ընկերների հանդեպ մեր սերը սահմաններ չպետք է ունենա:

Երբ Դին Գրեյմընին հարց տրվեց, թե ինչու այդ դաշնամուրները նվիրեց, նա պարզապես բացատրեց. «Մեզ ասված ու թելադրված է, որ սիրենք մեր դրացուն»: Եվ Տեր Հիսուսն էլ ասաց. «Սրանցից ավելի մեծ ուրիշ պատվերան չկա» (Մար. 12.31), որը Աստծուն ու մեր ընկերօրը սիրելն է:

Աղոթք - Յայր, օգնի՛ր, որ կարողանամ իմ սահմաններից ու արգելքներից այն կողմ նայել, որպեսզի իմ շրջապատում եղածներին տեսնեմ որպես ընկեր և ազնվությամբ սեր ցուցաբերեմ, ինչպես Դու ես ինձ սովորեցրել: Ամեն:

Ո՞վ է ընկերդ:

Ընդլայնի՛ր ընկերությանդ սահմանները:

Սոսկ սպասելուց ավելի

Ոտրեկանը մեղադրեց ու տուգանեց մի կնոջ, որը անխոհեմորեն էր վարել մեքենան և չսպասելով մանուկներին փոխադրող դպրոցական ավտոբուսի շարժվելուն՝ ճանապարհը շեղել ու մայթ էր բարձրացել:

Իսկապես սպասելը հաճախ մեզ անհամբեր է դարձնում, բայց այդ սպասումի մեջ էլ սովորելու և անելու լավ բաներ կան: Հիսուսն այս բանը գիտեր, երբ իր աշակերտներին հրամայեց «Երուսաղեմից չհեռանալ» (Գործք Առ 1.4): Նրանք սպասում էին «Սուրբ Հոգով մկրտվելու» համար (Հմ. 5):

Երբ աշակերտները հուզմունքով ու մեծ ակնկալիքով հավաքվեցին վերնատանը, հասկացան, որ երբ Հիսուսն իրենց պատվիրեց սպասել, նա չասաց, որ որևէ բան չանեն: Եվ նրանք իրենց ժամանակը աղոթքով անցկացրին (Հմ.14) ու Աստծո խոսքից պատվեր ստացած լինելով՝ Հուդայի փոխարեն մի նոր աշակերտի էլ ընտրեցին (Հմ.26): Երբ նրանք միացել էին աղոթքի ու պաշտամունքի համար, Սուրբ Հոգին նրանց վրա իջավ (2.1-4):

Աշակերտները պարզապես չէին սպասում, այլ նաև պատրաստվում էին: Մինչ մենք էլ Աստծուն ենք սպասում, չի նշանակում, որ բան չպետք է անենք և անհամբերությամբ առաջ վազենք: Ընդհակառակը, աղոթելու, պաշտելու և միմյանց հետ հաղորդակցվելու պատեհությունը պիտի վայելենք, մինչ սպասում ենք Նրա գործելուն:

Աղոթք - Աստված, երբ շտապում եմ, հիշեցրու՛ ինձ, որ սպասումի պահերը կօգնեն տեսնել Քո սիրո ձեռագործը իմ կյանքում: Ամեն:

**Սպասման վիճակում ես, այն նկատի առ որպես
ճախապատրաստության պահ:**

Կարդա՛ Գործք Առ. 1.4-11

Եվ Գրանց մեկտեղ հավաքված ժամանակ պատվիրում էր Երուսաղեմից չհեռանալ, այլ Հոր ավտոխիսին սպասել, «որ, ասաց, ինձանից լսեցիք: Գործք 1.4

Փոքր, սակայն իրական

Օրվա սկիզբը սովորական էր, բայց ավարտը մղձավանջային եղավ: Եսթերին (անունը փոխված է) և այլ հարյուրավոր ազ- ջիկների ծայրահեղական կրոնական ուժերը առևանգեցին իրենց դպրոցի գիշերօթիկ կացարանից: Մեկ ամիս անց բոլորն ազատ արձակվեցին, բացի Եսթերից, որը հրաժարվեց Քրիստոսին ուրա- նալ: Երբ ես ու բարեկամս կարգացինք նրա և նրա նման այլոց մասին, ովքեր հալածվում են իրենց հա- վատքի համար, շատ ցավեցինք ու որոշ- եցինք մի բան անել, բայց ի՞նչ:

Պողոս առաքյալը Ասիայում իր դի- մագրաված դժվարուժյունների մասին գրեց Կորնթոսի եկեղեցուն և նրանց հետ կիսվեց: Իրենց կրած հալածանք- ներն այնքան սաստիկ էին, որ ինքն ու իր գործակիցները «կյանքի հույսն էլ էին կտրել» (Բ. Կորնթ. 1.8): Սակայն հավատացյալների՝ իր համար մատուցած աղոթք- ներով քաջալերվեց (Հմ.11): Թեև Կորնթոսի եկեղեցին կիլոմետ- րերով հեռու էր առաքյալից, բայց նրանց աղոթքը օգտակար եղավ, և Աստված էլ լսեց: Այստեղ մի հիանալի խորհուրդ ենք տեսնում. Գերիշխանը իր նպատակի իրագործման համար մեր աղոթքներն է օգտագործում:

Այսօր Քրիստոսով կարող ենք հիշել մեր քույրերին ու եղ- բայրներին, որոնք տառապում են իրենց հավատքի պատճա- րով: Կարող ենք նաև նրանց համար աղոթել, ովքեր հալածվել, ճնշվել, ձեռնկալվել, խոչտանգվել, երբեմն նաև սպանվել են Քրիս- տոնեական հավատքի համար: Աղոթենք, որ նրանք Աստծո մխիթարուժյունն ունենան, քաջալերվեն ու հույսով զորա- նան:

Աղոթք - Տե՛ր, աղոթքով մեր անձերը Քո ոտքերի առաջ ենք դնում և աղոթում տառապողների համար: Ամեն:

Հիսուսը երանելի է հռչակում նրանց, ովքեր հալածվում ու չարչարվում են իր և արդարության համար:

Կարդա՛ր
Բ Կորնթ. 1.18-11

Նրա վրա հույս ունենք, որ դեռ կկիր- կի էլ՝ մեզ համար ձեր արած աղոթքի օգնականությամբ:
Բ Կորնթ. 1.11

ԳՆԱ՛ և ՎԵՐԳՐՈ՛Ւ

Պարսպից դուրս նայելով տեսա, որ մեր տան ետևի զբոսայգում մարդիկ հաճելիորեն քայլում են, զբոսնում: «Երբ ուժ ունեի, ես էլ էի նույնը անում», - մտածեցի ու դժգոհությամբ մի զգացում ինձ պատեց: Ավելի ուշ, երբ Աստվածաշունչ էի կարդում, ուշադրությունս գրավեց Եսայու մարգարեության 55-րդ գլխի առաջին կետը, որտեղ ասվում է. «Ո՛վ դուք, որ ծարաված եք, գնացե՛ք ջրի»: Անդրադարձա, որ դժգոհությունը (ծարավը) օրենք է դարձել և ոչ թե ակնկալություն այս կյանքում: Ոչ մի բան, նույնիսկ կյանքի բարիքները չեն կարող մեզ ամբողջովին գոհացնել: Եթե ես հիմա լեռնագնացի նման գործող ոտքեր ունենայի, մեկ այլ առիթ պիտի գտնեի դժգոհելու, ուրախ չլինելու համար:

Մեր թվում է, թե մեր նոր գնած հագուստը, մեքենան կամ այլ բան պետք է անսահման գոհացում տա մեզ: Բայց այդպես չէ: Չենք կարող ամբողջական գոհացում ունենալ այստե՛ղ եղած որևէ բանից, ինչ էլ որ անելու լինենք:

Ու Եսային նորից ու նորից մեզ հրավիրում է լսելու Աստծո ու Աստվածաշնչի ձայնը, թե ինչ ունի մեզ ասելու: Եվ ի՞նչ է ասում նա մեզ: Իր սերը Դավթի հանդեպ «հավիտենական» ու «հավատարիմ» է (Հմ.3): Ու սա ճիշտ է քեզ ու ինձ համար: Մենք կարող ենք Իրեն մոտենալ:

Աղոթք - Հայր, ծարավ ու քաղցած եմք, սակայն Դու հավատարիմ ու բարի Աստված ես: Օգնի՛ր, որ մեր կարիքների համար Քեզ մոտենանք: Ամեն:

Քեզանից բացի էլ ո՞վ ունենք, որ կարող է մեզ նորոգել ու կշտացնել: Հագեցնում ես մեր հոգու ծարավը և Քո ջուրը ձրի է, մինչ մյուս բոլոր առուները չորացած են: Մերի Բրաուն

Կարդա՛ Եսայի 55.1-6

Ականջ դրեք ինձ և հետևեցե՛ք իմ ճանապարհին: Լսեցե՛ք ինձ, և ձեր հոգիները կ'ապրեն: Ես. 55.3

Մեկը, որ առաջնորդում է

Երբ լսում ես ուսուցիչ, խորհրդատու կամ առաջնորդ բառերը, ո՞ւմ մասին ես մտածում: Օրինակ ինձ համար այդպիսին է Հովիվ Ռիչը: Նա տեսավ իմ ներուժը և հավատաց իմ կարողությունները, երբ ես ինքս չէի հավատում: Նա օրինակ եղավ, թե ինչպես կարելի է հեղուկյամբ ու սիրով ծառայելով՝ առաջնորդ լինել: Իր աշխատանքի շնորհիվ այժմ ես ծառայում եմ Աստծուն՝ լինելով առաջնորդ ու խորհրդատու ուրիշների համար:

Եղիա մարգարեն, որպես առաջնորդ, կարևոր դեր խաղաց Եղիսեի աճման գործում: Երբ Եղիսեն արտն էր հերկում, Եղիան նրան առաջարկեց իր հովանավորյալը դառնալ, որովհետև Աստված պատվիրել էր նրան մարգարե օժել իր փոխարեն (Գ.Թագ. 19. 16.19): Երիտասարդ աշակերտը դիտեց իր խորհրդատուին ու առաջնորդին, որն անհավատալի հրաշքներ էր գործում և բոլոր պարագաներում Աստծուն հնազանդվում: Աստված Եղիային օգտագործեց, որպեսզի Եղիսեին պատրաստի ամբողջ կյանքում մատուցելիք ծառայություն համար: Եղիայի կյանքի վերջում Եղիսեն առիթ ունեցավ հրաժարվելու, սակայն նա ընտրեց իր խորհրդատու առաջնորդի հանդեպ նվիրումը նորոգելը: Եղիան երեք անգամ առաջարկեց իրեն պարտականություններից ազատել, բայց նա ամեն անգամ մերժեց՝ ասելով. «Կենդանի է Տերը և կենդանի ես դու. ես քեզ չեմ լքի» (Դ. Թագ. 2.2. 4. 6): Արդյունքում Աստված էլ իրեն օգտագործեց հիանալի ձևերով:

Թող Աստված մեզ աստվածավախ այրեր ու կանայք տա, որոնք Հոգու գորուծյամբ իրենց կյանքը կդնեն ուրիշների համար:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ մարդկանց ես ուղարկում մեր կյանք՝ մեզ քաջալերելու և նոր մարտահրավերներ տալու համար: Օգնիր, որ մենք էլ նույնը ուրիշներին անենք: Ամեն:

Ինչպես ուրիշներն են մեզ համար օրինակ եղել, մենք էլ այլոց օրինակ լինենք:

Կարդա՛ր
Դ Թագ. 2.1-6

Կենդանի է Տերը, և
կենդանի ես դու.
Ես քեզ չեմ լքի:
Դ Թագ. 2.6

Արցունքների ծովը

Մասաչոուսեթսի Բոստոն քաղաքում մի հուշաքար կա «Արցունքների ծովն անցնել» մակագրությամբ, որը տեղադրվել է ի հիշատակ 1840 թ. Իռլանդիայի աղետալի սովից փախչող մարդկանց, որոնց վերջին հանգրվանը Ատլանտյան օվկիանոսը եղավ: Ավելի քան մեկ միլիոն մարդ զոհվեց այդ աղետից, մեկ միլիոնից ավելին էլ, թողած իրենց տները, որոշեցին փրկություն գտնել օվկիանոսից այն կողմ և այն վերածվեց Ջոն Բոյլ Օ,Ռայլի բանաստեղծական բնորոշմամբ՝ «Արցունքների ծովի»: Այս ճամփորդները սովից ու անելանելի վիճակից փորձեցին հույս գտնել այդ հուսահատ ժամանակներում:

54-րդ Սաղմոսում Դավիթը թշնամու ձայնից ու մեղսագործի հալածանքից խռովված ու տրտմած՝ հույս է որոնում և աղոթում, որ իր խնդրանքները չանտեսվեն (Հմ. 4-5): Նրա բնազդային հակադարձությունը աղոթել էր. «Մեկն ինձ աղափնու թևեր տար, որ թռչելով բարձրանայի և հեռանալով հանգիստ առնեի անապատում» (Հմ.7-8):

Մենք էլ Դավիթի նման ցավալի հանգամանքներում ուզում ենք փախչել որևէ ապահով տեղ: Սակայն Դավիթը իր ցավերից փախչելու փոխարեն նախընտրեց իր Աստծուն դիմել և երգեց. «Ես Աստծուն ձայն տվի, և Տերն ինձ լսեց» (Հմ.17):

Երբ դժվարություններ լինեն, հիշի՛ր, որ այդ խավար պահերին ու խոր վախերի մեջ քեզ կարող է օգնել մխիթարության Աստվածը:

Աղոթք - Հայր, երբ կյանքի պարագաները դժվար թվան, ուժ տու՛ր ինձ: Ինձ պահի՛ր Քո ներկայության և մխիթարության մեջ, որովհետև առանց Քեզ ես կորած եմ: Շնորհակալ եմ, որ արցունքներս տեսնում ես ու սրբում: Ամեն:

Նեղության պահին փախչելու անհրաժեշտությունն ես գգում: Մի վախեցի՛ր: Վստահի՛ր Աստծուն:

Կարդա՛
Սաղմոս 54.4-19

Ես Աստծուն ձայն տվի, և Տերն ինձ լսեց: Սաղմ. 54.17

Կյանքի լավագույն ռազմավարությունը

Աղջկա բասկետբոլի մրցումներն էինք դիտում: Ուշադրությամբ դրանք մարզիչի ասած մեկ բառը՝ «Զույգեր», որից հետո աղջիկների պաշտպանողական ռազմավարությունը փոխվեց, խաղացողները սկսեցին միասնաբար դիմադրավել հակառակորդ թիմի ամենաբարձրահասակ աղջկա հարվածներին: Շուտով նրանց հաջողվեց կասեցնել գնդակը ցանցը նետելու մրցակցի ջանքերը, և գնդակը տեղափոխեցին խաղադաշտի հակառակ կողմը:

**Կարդա՛ր
 ժողովող 4.1-12**

Եթե մեկի վրա բռնանան, երկուսը դեմ կկանգնեն: Ժող. 4.12

Երբ Սողոմոնը պայքարում է աշխարհի դժվարությունների ու վրդովմունքների դեմ, ընդունում է, որ մեր թափած ջանքերում ընկերակից ունենալը «ավելի լավ է, որովհետև ավելի վարձ կա նրանց վաստակի համար» (Ժո. 4.9): Երբ մարդը առանձին է պայքարում, «եթե մեկի վրա բռնանան, երկուսը դեմ կկանգնեն» (Հմ.12): «Քանի որ եթե մեկն ընկնի, նրա ընկերը կկանգնեցնի նրան» (Հմ. 10):

Սողոմոնի բառերը քաջալերում են մեզ, որ մեր ճամփորդությունը կիսանք ուրիշների հետ, որպեսզի փորձությունները միայնակ չդիմադրավենք: Ումանց համար դա կարող է դժվար լինել հանդուրժողություն ու շփումների որոշակի մակարդակի պակասի պատճառով: Մյուսները նման մտերմության ցանկություն ունեն և ձգտում են բարեկամներ գտնել, որոնց հետ կկիսվեն: Բոլոր դեպքերում հարկավոր է ջանքեր ներդնել: Մեր շրջապատում խաղընկերներ ունենալը պետք է լավագույն ռազմավարությունը լինի՝ կյանքի դժվարությունները հաղթահարելու ճանապարհին:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք այն մարդկանց համար, որոնց դնում ես մեր կյանքի մեջ՝ մեզ քաջալերելու և զորավիգ լինելու համար: Ամեն:

Աստված մեզ բարեկամներ է տալիս, որ մեր կյանքի դժվարությունները հաղթահարենք:

Միայնության ցախարարը

Ամուսնու մահից հետո Բեթսին իր օրերն անցկացնում էր բնակարանում հեռուստացույց դիտելով և միայն իր համար թեյ պատրաստելով: Եվ նա բացառությունն է: Ինը միլիոնից ավելի անգլիացիներ (ժողովրդի 15 տոկոսը) ասում են, որ իրենք հաճախ կամ միշտ են միայնակ զգում: Ուստի Մեծ Բրիտանիայում միայնության նախարար է նշանակվել, գտնելու, թե ինչ^{ո՞ւ} և ինչ^{ո՞ւ} պե՞տք կարելի է օգնել միայնակ մարդկանց:

Միայնության մի շարք պատճառներ հայտնի են. հաճախ ենք տեղափոխվում՝ թույլ չտալով, որ մեր արմատները հաստատվեն: Մտածում ենք, որ ինքներս կարող ենք հոգ տանել մեր մասին և պատճառ չունենք այլոց մտտենալու: Մարդկանցից բաժանված ենք նոր տեխնոլոգիաների պատճառով, ամենքս մխրճված ենք մեր համակարգիչների մեջ: Զգում եմ միայնության մռայլությունը, ինչպես և դու: Սա է կարևոր պատճառներից մեկը, որ մենք կարիք ունենք հավատակից բարեկամների: Երբայցիների նամակը եզրակացնում է Հիսուսի զոհողության մասին խորը բացատրությունը՝ մեզ քաջալերելով, որ հանդիպենք միմյանց (10. 25): Մենք Աստծո ընտանիքին ենք պատկանում, ուստի պետք է «Եղբայրասիրությունը հաստատ մնա ձեր մեջ» և «Հյուրասիրությունը չմոռանաք» (13.1-2): Միայնակ մարդիկ կարող են մեր ցուցաբերած ազնվությանը չպատասխանել, բայց դա նահանջելու պատճառ է: Հիսուսը մեզ խոստացել է բնավ չլքել ու չթողնել (13.5), և մենք Իր բարեկամությունը կարող ենք օգտագործել՝ ուրիշների հանդեպ մեր սերը բորբոքելու համար:

Կարդա՛
Եբր. 13.1-8

Եղբայրասիրությունը հաստատ մնա ձեր մեջ: Եբր. 13.1

Աղոթք - Սիրելի՛ Տեր, Քո բարեկամության կարիքն ունենք, որպեսզի կարողանանք ծառայել մեր կողքիններին, հատկապես նրանց, որոնք միայնակ են: Ամեն:

Աստծո ընտանիքը միայնության պատասխանն է լինելու:

Տերը պիտի նախախնամի

Ամբողջ ամուսն անհանգստությունն ավելացավ, երբ համալսարանի նախապատրաստական շրջանն ավարտելուց հետո պիտի անցնեի բարձրագույն ուսման: Ես սիրում եմ ամեն ինչ ծրագրել, և առանց աշխատելու ուրիշ նահանգում կրթություն ստանալու հեռանկարը անհանգստացնում էր ինձ: Սակայն ամառային աշխատանքս դեռ չլիցքած ինձ առաջարկեց այն շարունակել հեռակա կարգով: Ընդունեցի առաջարկը և ներքուստ խաղաղվեցի, որ Աստված ինձ հետ էր իր նախախնամությունը: Աստված հոգաց, սակայն Ի՛ր ժամանակի մեջ, ոչ իմ: Աբրահամը իր որդի Իսահակի հետ շատ ավելի դժվար հանգամանքներում էր հայտնվել: Աստված թելադրել էր, որ վերցնի իր որդուն և Մորիայի լեռներից մեկի վրա ողջակիզի նրան (Ծնն.22 1-2): Աբրահամն առանց վարանելու հնազանդվեց: Երեք օրվա անցած ճանապարհը նրա համար բավարար ժամանակ էր, որ միտքը փոխեր, բայց նա անդդավելի էր (Հմ.3-4): Երբ Իսահակը հարցրեց, թե ո՞ւր է ողջակիզելիք ոչխարը, Աբրահամը պատասխանեց. «Աստված կհոգա իր ողջակիզելու ոչխարի մասին» (Հմ.8): Մտածում եմ, որ Աբրահամի անհանգստությունն ավելանում էր պարանի յուրաքանչյուր հանգույցի հետ, երբ Իսահակին կապում էր զոհասեղանին և բարձրացած դանակի ամեն մի մատնաչափի հետ (Հմ. 9-10): Աստված ճարեց ողջակիզվելիք գառնուկը (Հմ. 13): Աստված Աբրահամի հավատքը փորձեց և տեսավ, որ նա հավատարիմ է Իրեն: Ու հարմար պահին հայթայթեց (Հմ. 14):

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ Քո նախախնամության համար: Օգնի՛ր վստահ լինելու, որ Դու պիտի՛ն հոգաս, եթե նույնիսկ սպասածս ժամանակը երկար թվա: Ամեն:

Մշտապես աղոթի՛ր ու վստահի՛ր Աստծուն:
Նա հարմար պահին կպատասխանի:

Կարդա՛ր
Ծննդոց 22.2-14

Աբրահամն այդ վայրի անունը դրեց «Տերը տեսավ», և մինչև այսօր էլ ասում են «Այդ լեռան վրա երևաց Տերը»: ԾՆ. 22.14

Սերը բնավ չի դադարում

Տասնինը տարեկանում, երբ դեռ բջջային հեռախոս չունեի, մոռիցս 700 մղոն հեռու մի շրջան տեղափոխվեցի: Մի օր վաղ առավոտյան տնից դուրս եկա՝ մոռանալով մեր ամենօրյա պարտադիր հեռախոսային կապի մասին: Երեկոյան երկու ուստիկան թակեցին դուռս: Մայրս մի քանի անգամ զանգահարելով ու հեռախոսը զբաղված տեսնելով՝ ուստիկանություն էր դիմել, որովհետև մինչ այդ մեր հեռախոսային ժամադրությունը երբեք չէի մոռացել: Ուստիկաններից մեկն ինձ ասաց. «Ի՛նչ մեծ օրհնություն է իմանալ, որ սերը չի դադարում քեզ հետևելուց»: Երբ մորս զանգահարելու համար մոտեցա հեռախոսին, նկատեցի, որ լսափողը տեղաշարժված էր: Մորիցս ներողություն խնդրեցի, և նա ասաց, որ հիմա ինքը բարեկամներին ու մեր ընտանիքի անդամներին պիտի հայտնի բարի լուրը, որովհետև արդեն ասել է, որ իրեն չի գտնում: Մտածեցի, թե մայրս շտապել էր այդչափ տազնապելով, միաժամանակ հաճելի էր զգալ, որ այդքան սիրված եմ:

Աստվածաշունչը Աստծոն ներկայացնող մի շատ գեղեցիկ պատկեր է ներկայացնում, որ Սեր է ու անդադար Նրա սերն է հայտնում Իր թափառական զավակների հանդեպ: Բարի հովվի նման Աստված հոգում ու հետևում է ամեն մի կորած ոչխարի՝ հաստատելով Իր յուրաքանչյուր զավակի մեծ արժեքը (Ղուկ. 15.1-7): Սերը բնավ չի դադարում մեզ հետևելուց: Մեզ պիտի հետապնդի, մինչև որ դառնանք դեպի Ինքը: Աստված բնավ չի դադարում մեզ հետևելուց:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք, որ մշտապես հետևում ես մեզ և ապահով տեղ ես տալիս, երբ վերադառնում եմք քո բազուկներից: Ամեն:

Աստված Իր սիրով հետևում է քեզ՝ որ գտնի: Դու էլ նման սեր ցուցաբերի՛ր ուրիշների հանդեպ:

Կարդա՛ր
Ղուկաս 15.1-7

Ինձ հետ ուրախացեք որովհետև իմ կորած ոչխարը գտա: Ղուկ. 15.6

Մի քարի տեճը

«Օհ, յուրաքանչյուր քարափ մի քար է տենչում» ասվում է Ֆերնանդո Փեսսոայի «Տաղ ծովին» պոեռաուղալերեն բանաստեղծության տողերից մեկում: Փեսսոայի նկարագրած քարափը ներկայացնում է մարդկային այն զգացումները, որ մենք ունենում ենք, երբ նավը աստիճանաբար հեռանում է մեզանից: Նավը հեռանում է, բայց քարափը մնում է՝ որպես հույսերի ու երազների, բաժանումի և կարոտի մնայուն հուշարձան: Մենք ցավում ենք կորցրած բաների համար, որոնց չի կարելի ձգտել:

Կարդա՛
Երկ. Օրենք 34. 1-5

Այս երկիրը ցույց էմ տալիս քեզ, բայց դու այնտեղ չես մտնելու: Երկ. Օրենք 34.4

Պորտուգալերեն «սառտատես» բառը, որ տենչ է նշանակում, վերաբերում է մեր հայրենատենչ կամ հայրենաբաղձ կարոտին: Բանաստեղծը նկարագրում է աննկարագրելին:

Մենք կարող ենք ասել, որ Նաբավ լեռը Մովսեսի համար «մի քարի տենչն է»: Նա Նաբավ լեռից նայեց ու տեսավ խոստացված երկիրը, երկիր, որին բնավ չէր հասնելու: Աստծո խոսքերը, թե «Այս երկիրը ցույց էմ տալիս քեզ, բայց դու այնտեղ չես մտնելու» (Երկ. Օր. 34. 4) կարող են կոպիտ թվալ, բայց եթե մենք միայն այդ մեկը տեսնենք, չպիտի հասկանանք իրողության խորքը: Աստված մխիթարական խոսքեր է ասում. «Այս է այն երկիրը, որ երգվելով Աբրահամին, Իսահակին ու Հակոբին՝ ասել էմ. «Քո հետնորդներին եմ տալու դա» (Հմ. 4):

Մեր տենչը մեզ ուղղում է առ Աստված: Նա մեր ցանկությունների իրականացումն է:

Աղոթք - Սիրելի՛ Յայր, օգնի՛ր, որ կարողանամ իմ տենչանքները լցնել շիտակ բաներով և հիշեցրու՛, որ միայն Դու կարող ես գոհացնել ինձ: Ամեն:

Իմ կյանքի ամենաքաղցր բանը եղել է Լեռը հասնելու և բոլոր գեղեցկությունների սկզբնաղբյուրը գտնելու իմ տենչը: Բ.Ս.Լուիս

Քննադատության ձև

Բնանկարչության մասնագետ, արվեստագետ ուսուցիչս նայում էր իմ առաջին աշխատանքը: Նա լուռ կանգնել էր նկարի առջև, հետո մի ձեռքով սկսեց ծնոտը շփել: «Հիմա կասի, թե որքան սոսկալի է իմ արած գործը», - մտածում էի ես:

Բայց նա չասաց նման բան:

Այլ ասաց, որ հավանում է գույները և սրտաբացությունը: Հետո նշեց, թե հեռվում երևացող ծառերը կարող են ավելի բաց գույն ունենալ և խոտերը կարելի է նկարել ավելի նուրբ եզրագծերով:

Հիսուսը, որ թեև իրավասու էր մարդկանց դատապարտելու իրենց մեղքերի համար, տասը պատվիրանները չկիրառեց ջրհորի մոտ հանդիպած սամարացի կնոջը ճնշելու համար: Այլ մի քանի խոսքով ազնվորեն քննարկեց նրա կյանքը: Կինը խոստովանեց, որ գոհացումի փնտրտուքը իրեն տարել է մեղքի ճանապարհով: Եվ Տեր Հիսուսը հայտնեց, որ Ինքն է հավիտենական գոհացումի միակ աղբյուրը (Հովհ. 4.10-13):

Այս պարագայում Հիսուսի գործածած շնորհքի ու ճշմարտության միացումը կլինի Իր հետ մեր ունեցած փորձառությունը (1.17): Հրավիրենք Տեր Հիսուսին, որ ցույց տա մեր կյանքի այն ոլորտերը, որտեղ մենք կարիք ունենք անելու, որպեսզի ավելի շատ բաներով իրեն նմանվենք:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ ինձ ազատում ես մեղքի հետևանքներից: Օգնի՛ր, որ կարողանամ ընդունել Քո սրբագրումն ու քաջալերանքը, մինչ կսովորեմ Քեզ հետ ավելի մոտ քայլել: Ամեն:

Տեր Յիսուսն իր ճշմարտությամբ ցույց է տալիս մեր կյանքի հարցերը: Թույլ տանք, որ Նա կատարի մեզ պետք եղած փոփոխությունները:

Կարդա՛

Յովհ. 4.7-15, 28-29

Որովհետև օրեքը Մովսեսի միջոցով տրվեց. շնորհն ու ճշմարտությունը Յիսուս Բրիստոսի միջոցով եղան: Յովհ. 1.17

Երբ ամեն ինչ կորած է թվում

Վեց ամսում Ջերալդի կյանքը խորտակվեց: Տնտեսական ճգնաժամը խարխիւեց իր առևտրի գործն ու հարստութիւնը, իսկ ողբերգական դիպվածը խլեց որդու կյանքը: Այս ցնցումից մայրը մահացավ, կիներն ու երկու դուստրերը մնացին ընկճված ու անմխիթար: Միակ բանը, որ կարողացավ անել, արձագանքելն էր Սաղմոսերգուին. «Աստված իմ, Աստված, նայի՛ր ինձ, ինչո՞ւ լքեցիր ինձ» (Սաղմ. 21.2):

Եվ միակ բանը, որ օգնեց Ջերալդին առաջ գնալ, Աստծո տված հույսն էր, այն հույսը, որ մեռելներից հարութիւն առած Հիսուսը մի օր պիտի կարողանա իրեն ու իր ընտանիքին ազատել ցավերից ու տանել դեպի հավիտենական ուրախ կյանք: Այդ հույսը Աստծուն ուղղված իր աղերսի պատասխանն էր: Իր հուսալքութեան մեջ Սաղմոսերգու Դավթի նման նա որոշեց վստահել Աստծուն (Հմ. 5): Այդ հույսը պահեց Ջերալդին, և տարիներ անց, երբ նրան հարցնում էին, թե ինչպե՞ս է, նա պատասխանում էր. «Լավ եմ ու Աստծուն եմ վստահում»:

Աստված հարգեց այդ վստահութիւնը՝ մխիթարութիւն, քաջութիւն ու քաջալերանք տալով, որ կարողանա հարատեւել: Ջերալդի ընտանիքը աստիճանաբար կարողացավ հաղթահարել ճգնաժամը: Նա արդեն ուրախացել է նույնիսկ իր առաջին թոռնիկի ծնունդով: Նրա աղերսը հիմա Աստծո հավատարմութեան վկայութիւնն է, որն ասում է. «Էլ չեմ հարցնի՛ ինչո՞ւ ինձ լքեցիր, այլ կասեմ՝ Աստված օրհնել է ինձ»:

Աղոթք - Տե՛ր, երբ լքված ու միայնակ զգամ, Հիսուսի հարության միջոցով Քո տված հույսին կկառչեմ և վստահ կլինեմ, որ մի օր պիտի ազատես ինձ: Ամեն:

Դժվարութիւններն ու ցավե՞ր ես դիմագրավում:
Ապավինի՛ր Աստծուն և հուսա՛:

Կարդա՛

Աստված իմ, Աստված, նայի՛ր ինձ, ինչո՞ւ լքեցիր ինձ:
Սաղմ. 21.2

Արջուկի գրկում

«Արջուկը» թոռնիկիս նվերն էր, որը հսկա փափուկ կենդանու մեջ կուտակված ջերմ սեր էր մարմնավորում: Նրան տեսնելով՝ թոռնիկիս առաջին արձագանքը զարմանքը եղավ, ապա՝ հիացմունքը: Այնուհետև հետաքրքրությունը նրան մղեց զննել կենդանուն, ու երբ մատը մտցրեց արջուկի քիթը, նա անզոր ընկավ իր թևերի վրա: Երեսան հրճվեց, ուրախացավ և, իր մանկական գլուխը դնելով Արջուկի փափուկ կրծքի վրա, ամուր գրկեց նրան: Նա չէր հասկանում, որ Արջուկն անկարող է իրեն սիրել, սակայն իր մանկական անմեղությունը զգաց այդ սերը և իր անբողջ սրտով փոխադարձեց:

Կարդա՛
Ա Հովհ. 4.13-19

Աստված սեր է:
Ա Հովհ. 4.16

Հովհաննես առաքյալը առաջին քրիստոնյաներին ուղղված իր երեք նամակներում հաստատում է, որ Աստված սեր է: Նա գրում է. «Եվ մենք ճանաչեցինք սերն ու հավատացինք այն սիրուն, որ Աստված ունի մեր նկատմամբ. Աստված սեր է» (Ա. Հովհ. 4.16): Աստված սիրում է: Ոչ թե ձևացնող կենդանու բարձանման մարմնով, այլ իսկական մարմնով ու մեկնած բազուկներով, որ իր մեջ բաբախող և սակայն կոտրած սիրտ ունի (Հովհ. 3.16): Հիսուսի միջոցով Աստված արտահայտեց իր շռայլ ու զոհաբերական սերը մեր հանդեպ:

Հովհաննեսը շարունակում է՝ ասելով. «Մենք սիրենք նրան, որովհետև առաջ Նա սիրեց մեզ» (Ա. Հովհ. 4.19): Երբ հավատանք, որ մենք սիրված ենք, մենք էլ կսիրենք: Աստծո իսկական սերը մեզ համար հնարավոր է դարձնում ամբողջ սրտով սիրել Աստծուն և ուրիշներին:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, օգնի՛ր, որ Քեզ արտոնեն սիրել ինձ և օգնի՛ր, որ ամբողջ սրտով սիրեմ Քեզ: Ամեն:

Աստծո սերը մեր հանդեպ հիանալի ու անբացատրելի է:
Նման սիրով սիրենք իրար:

Աստծո հիանալի ձեռքերը

Թոփչքից քսան ըոպե անց Նյու Յորքից Սան Անտոնիո չվերթի ծրագիրը փոխվեց և տիրող հանդարտ վիճակը քաոսային դարձավ: Երբ ինքնաթիռի շարժիչներից մեկը դադարեց գործել, դրա կոտրված մասերից մեկը, պատուհանը կոտրելով, խախտեց ճնշման հավասարակշռությունը: Դժբախտաբար, ուղևորներից մի քանիսը վիրավորվեցին, մեկն էլ մահացավ: Եթե ղեկին չլինեք փորձառու ու մարզված օդաչու, վիճակն ավելի ողբերգական կարող էր լինել: Տեղական օրաթերթերից մեկը այդ դեպքի մասին հրատարակումը խորագրել էր. «Հիանալի ձեռքերում»:

**Կարդա՛ր
 Սաղմոս 30. 1-8**

Դու ես պաշտպանն իմ, Տե՛ր, և քո ձեռքն եմ հանձնում իմ հոգին: Սաղմ. 30.6

30-րդ Սաղմոսում Դավիթը հայտնում է, որ ինքը Աստծո հիանալի ու հոգատար ձեռքերի մասին գիտե, և դրա համար վստահություններ կարող է ասել. «Քո ձեռքն եմ հանձնում իմ հոգին» (Հմ.6): Դավիթը հավատաց, որ կարելի է Աստծուն վստահել, եթե նույնիսկ կյանքը ցնցումներով ու վտանգներով է լի: Որովհետև թշնամիներով էր շրջապատված և կյանքն իր համար անհանգիստ էր: Թեև խոցելի էր, սակայն անհույս չէր: Ոտնձգությունների մեջ իսկ Դավիթը կարողանում էր ամոքումի նշաններ տեսնել և ուրախանալ, որովհետև իր վստահության աղբյուրը հավատարիմ ու սիրող Աստվածն էր (Հմ. 6-8):

Անորոշություն, չփոթություն ու քաոսի մեջ մեկ բան հաստատ է. նրանք, ովքեր Աստծո մեջ ապահով են, հիանալի ձեռքերում են:

Աղոթք - Հայր, օգնի՛ր քաջալերվեմ՝ իմանալով, որ Հիսուսն այս աղոթքն արեց, երբ խաչի վրա էր: Ցավի ու տառապանքի մեջ ես իր կյանքը դրեց Քո ձեռքերի մեջ: Ամեն:

Մեր կյանքում կունենանք լավ ու վատ պահեր: Կարևոր է, որ մեր կյանքերը Նրա սուրբ ձեռքերում դնենք:

Միմյանց կարիք ունենք

Զավակներին հետ բնության գրկում քայլելիս հայտնաբերեցինք դարձանային մի բույս, որ փնջերով աճել էր արահետի վրա: Ցուցատախտակին նշված էր «եղնիկի մամուռ», բայց իրականում այն մամուռի բնավ նման չէր: Քարաքոսը սնկի մի տեսակ է, որն աճում է մամուռի հետ, և այդ բույսի երկու բաղադրիչները փոխադարձաբար օգտվում են իրարից: Առանձին-առանձին դրանցից և ոչ մեկը գոյություն ունենալ չի կարող, սակայն միասին այն դառնում է շատ կարծր բույս, որը կարողանում է մինչև 4500 տարի ապրել տարբեր հարթություններում: Այն դիմանում է և՛ չորային, և՛ շատ ցածր ջերմաստիճանում, ու հյուսիսային եղջերուի միակ սնունդն է:

Սունկի և մամուռի հարաբերակցությունն ինձ հիշեցնում է մարդկային հարաբերությունները: Մենք էլ միմյանցից կախում ունենք: Աճելու և զարգանալու համար մենք պետք է հարաբերվենք իրար հետ:

Պողոսը Կողոսսայի հավատացյալներին գրում է, թե ինչպես պետք է լինեն մեր հարաբերությունները: Մենք պետք է «հազնենք ողորմասիրտ գլխածուլություն, քաղցրություն, խոնարհություն, հեզություն, համբերատարություն» (Կող. 3.12): Երբ Սբ. Հոգին մեզ զորացնի՝ մեր հարաբերություններում հեզություն և ներողամտություն մարմնավորելու համար, Հիսուսը ցույց կտա միմյանց հանդեպ մեր ունեցած սերը (Հովհ. 1. 35) և Աստված կփառավորվի:

Աղոթք - Սուրբ Դոգի՛, մեզ լցրու միմյանց հանդեպ կարեկցության, հեզության, քաղցրության ու համբերության ոգով, որպեսզի աշխարհը տեսնի Քո սերը մեր մեջ: Ամեն:

Իրար հանդեպ մեր ունեցած հարաբերությունը Դիսուսը պետք է ցույց տա:

Կարդա՛
Կողոս. 3.12-17

Եվ Աստծու խաղաղությունը իշխի ձեր սրտերում, որի մեջ և կանչվեցիք մեկ մարմնով, ու գոհացո՛ղ եղեք: Կող. 3.15

Ծուռ զանգակատունը

Ծուռ զանգակատները ջղայնացնում են մարդկանց: Բարեկամներին մի քանիսը պատմեցին, որ սաստիկ քամիների պատճառով իրենց եկեղեցու զանգակատունը ծռվել է, ինչը խիստ անհանգստացնող է: Բնականաբար, եկեղեցու անդամները շուտով նորոգեցին անկայուն աշտարակը, բայց ծիծաղելի պատկերը մտորելու առիթ տվեց: Եկեղեցին այնպիսի վայր է, որտեղ ամեն բան կատարյալ պիտի լինի: Եվ ոչ թե մի վայր, որտեղ ներկայանանք ծուռ վիճակով: Այդպե՞ս է:

Սակայն ապրելով այս աշխարհում՝ բոլորս էլ մեր ունեցած բազմաթիվ տկարություններով ինչ-որ չափով «ծուռ» ենք: Մենք կարող ենք մեր այդ թերությունները թաքցնել, բայց Աստծո խոսքը քաջալերում է հակառակն անել: Կորնթացիներին ուղղված երկրորդ նամակում օրինակ իր մեջ եղած տկարությունը կոչելով ««մարմնի խայթ»» (Բ. Կորնթ.12.7), Պողոս առաքյալն ասում է, թե մեր տկարության մեջ Քրիստոսն իր զորությունն է հայտնաբերում: Տեր Հիսուսն իրեն ասել էր. «Իմ զորությունը տկարության մեջ է իրագործվում» (Հմ.9): Հետևաբար եզրակացնում է՝ ասելով. «Ուստի Քրիստոսի համար գոհունակության մեջ համբերում եմ՝ տկարությունների, թշնամանքների, վշտերի, հալածանքների և նեղությունների, որովհետև երբ տկարանում եմ, այն ժամանակ զորանում եմ» (Հմ.10):

Երբ Հիսուսին հրավիրենք մեր կյանքի ծուռ տեղերը, Նա այնպիսի քնքրությամբ կնորոգի ու կփրկի, որ մեր ջանքերով չենք կարող անել:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, խնդրում եմ իմ կյանքի ծուռ ու տկար պարագաներում օգնի՛ր ինձ և ցույց տու՛ր, թե Քո շնորհքով ինչ կարող ես անել ինձ համար: Ամեն:

Քո անկատարությունների մեջ Հիսուսին հրավիրի՛ր, որպեսզի Նա քեզ նորոգի:

Կարդա՛ր
Բ Կորնթ. 12.1-10

Իմ գորությունը տկարության մեջ է իրագործվում:
Բ Կորնթ. 12.9

Երկնային փախուստ

Ազաթա Քրիստի «Ժամացույցները» խորհրդավոր պատմություն մեջ նախապես մեկ հոգու սպանություն էր ծրագրված, բայց իրենց կատարած ոճիրը թաքցնելու համար հանցագործները մի շարք սպանություններ են կատարում: Երբ էրբյուլ Պուարոն բացահայտեց նրանց հանցանքը, դավադիրներին մեկը խոստովանեց, որ իրենց նպատակը միայն մեկի սպանությունն է եղել:

Այս պատմության ծրագրողների նման կրոնական հեղինակությունները նույնպես դավադրություն էին պատրաստել: Ղազարոսին գերեզմանից կյանք վերադարձնելուց հետո (Հովհ. 11.38-44) նրանք շտապ ժողով գումարեցին ու որոշեցին սպանել Հիսուսին (Հմ.45-53):

Սակայն դրանով չբավարարվեցին:

Տեր Հիսուսի հարություն առնելուց հետո կրոնական առաջնորդները ստեր տարածեցին գերեզմանի մոտ պատահած բաների մասին (Մատթ. 28. 12-15): Հետո արշավ սկսեցին Հիսուսի հետևորդներին լռեցնելու համար (Գործք Առ. 7.57-8.3): Փաստորեն ազգի բարիքի համար գործող մեկ մարդու դեմ սկսված կրոնական ծրագիրը վերածեց ստերի, խաբեության և բազմաթիվ վնասների ցանցի:

Մեղքը մեզ չեղում է ճամփից, տանում խոտոր ուղիներով, սակայն Աստված միշտ էլ գտնում է միջոց: Հիսուսը մեզ ազատում է մեղքի արատավոր ճանկերից:

Ստացե՞լ ես արդյոք այդ ազատության առաջարկը:

Աղոթք - Տեր, օգնիր, որ իմ արած ընտրություններով Քեզ հիեռնանամ: Դու պարգևում ես իսկական ազատությունը, ուստի օգնիր, որ մեղքերս խոստովանեմ:

Սեղքին տե՛ղ տուր և այն կյանքիդ տերը կդառնա:

Կարդա՛ր
Յովհ. 11.45-53

Արդ այդ օրից ի վեր խորհուրդ արեցին, որ նրան սպանեն:
Յովհ. 11.53

Յրաշալիորեն եզակի

Մարդ արարածները յուրահատուկ չեն, գոնե Լոնդոնի կենդանաբանական այգու համաձայն: 2005-ին այգին քառօրյա ցուցադրություն էր կազմակերպել «Մարդ արարածները իրենց բնական միջավայրում» խորագրով: Մասնակիցներն ընտրվել էին ինտերնետային մրցույթի միջոցով: Ցուցահանդեսի կազմակերպիչները մարդ արարածին ճանաչելու և նրան որպես յուրահատուկ էակ ներկայացնելու համար ընտրել էին որոշակի ցուցանիշներ. մասնավորապես մարդու սննդակարգը, բնակավայրն ու վախերը: Այցելուներից մեկի արձագանքն այսպիսին էր. «Մարդկանց այստեղ որպես կենդանի դիտելը հիշեցնում է, որ մենք այդքան էլ հատուկ էակներ չենք»:

Կարդա՛

Մաղմոս 138.1-14

Գոհություն պիտի մատուցեն քեզ, Տե՛ր, քանզի ասեղ ու սքանչելի ես դու... :

Մաղմ. 138.14

Ի՛նչ բացարձակ հակասություն Աստծո խոսքում մարդու մասին ասածի հետ, թե Աստված «ասեղ ու սքանչելի» կերպով մեզ ստեղծեց «Իր պատկերով» (Մաղմ. 138.14, Մննդ. 1.26-27): Դավիթը 138-րդ Մաղմոսն սկսեց՝ հռչակելով Աստծո հետ իր ունեցած մոտիկ ծանոթությունը (Հմ. 1-6): Եվ որպես վարպետ՝ Աստված ոչ միայն Դավիթի ներքին ու արտաքին տվյալների բարդությունն ստեղծեց իր մանրամասներով (Հմ.13-14), այլև նրան դարձրեց ապրող հոգի՝ տալով նրան հոգևոր կյանք և Աստծո հետ հարաբերվելու կարողություն: Մտածելով Աստծո ձեռքով արվածի մասին՝ Դավիթը պատասխանեց ահով, հիացմունքով ու փառաբանությունով (Հմ.14):

Դավիթի նման մենք էլ կարող ենք Աստծուն փառաբանել, որովհետև Նրա սիրո ձեռքի աշխատանքն ենք:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ ինձ ասեղ ու սքանչելի կերպով ստեղծեցիր: Օգնի՛ր, որ այս գիտակցությունն ունենամ ամեն օր՝ ու Քեզ փառավորեմ: Ամեն:

Աստված մարդ արարածին ստեղծեց Իրեն նման լինելու համար:

Մի ծոմապահ սիրտ

Բարեկամս խորհուրդ էր տվել, որ ծոմապահությունը Աստծո սովածությունը նյարդայնացնում էր: Մտածում էի, թե Հիսուսն ինչպես կարողացավ 40 օր ծոմ պահել: Պայքարեցի Սուրբ Հոգուն վստահելու, խաղաղության, զորության ու համբերության համար: Համբերության համար՝ հատկապես: Եթե մենք ֆիզիկապես ի վիճակի ենք, ծոմապահությունը կարող է մեզ սովորեցնել հոգևոր սննդի կարևորությունը: Ինչպես Հիսուսն ասաց. «Մարդ ոչ միայն հացով է ապրում, այլև այն ամեն խոսքով, որ Աստծո բերանից է դուրս գալիս» (Մատթ. 4.4): Թեև այս բանը փորձառությունը սովորեցի, սակայն միայն ծոմ պահելը մեզ Աստծուն մոտեցնել չի նշանակում:

Աստված մի անգամ Զաքարիա մարգարեի բերանով իր ժողովրդին ասաց, որ ծոմապահության սովորությունը անօգուտ է, որովհետև աղքատներին օգուտ չի տալիս: Աստված մատնանշելով հարցրեց. «Մի՞թե ինձ համար էիք ծոմ պահում» (Զաք. 7.5): Աստծո հարցումը ցույց տվեց, որ կարևորը ոչ թե ստամոքսներն են, այլ պաղ սրտերը: Եթե միայն իրենց անձերին ծառայեն, Աստծո սրտին մոտենալու նրանց փորձերը կձախողվեն: Ուստի՜ Նա աղերսեց. «Արդար դատով դատեցե՛ք, ողորմություն և գթություն արե՛ք յուրաքանչյուրն իր եղբորը» (Հմ. 7.9): Մինչ ջանքեր ենք գործադրում իրեն նմանվելու համար, ջերմ սիրտ պետք է ունենանք նրանց հանդեպ, որոնց ինքը սիրում է:

Աղոթք - Հայր, ես շատ հակված եմ անձնական հաճույքների որոնելու և այլոց գնահատականն ստանալու: Օգնի՛ր, որ կյանքս Քեզ հաճելի լինի՝ մինչ ուրիշներին եմ ծառայում:

Մեր սրտի քարքարոտ հողը փշրելու համար հոգևոր կարգապահության կարիքն ունենք:

Կարդա՛ր Զաքարիա 7.1-10

Պահեցողությունը խնդության, ուրախության և բարության տոների պիտի դառնան Յուդայի տան համար, բայց դուք ուրախ եղեք և սիրեցեք ճշմարտությունն ու խաղաղությունը: Զաք. 8.19

Քարեր Ետեւել

Լիզան քննադատում էր իրենց կողակիցներին դավաճանող մարդկանց, մինչև որ ինքը ստիպված եղավ դիմադրավել վտանգավոր մի հրապուրանքի: Այդ ցավալի փորձառությունն օգնեց, որ նորովի կարեկցի ուրիշներին և ավելի լավ հասկանա Բրիտանիայի խոսքերը. «Ձեզանից ով որ անմեղ է, թող առաջ նա՛ քար գցի դրա վրա» (Հովհ. 8.7):

Հիսուսը, երբ այդ հայտարարությունն արեց, տաճարի դավթում սովորեցնում էր: Մի խումբ դպիրներն ու փարիսեցիներ շնության մեջ բռնված մի կնոջ բերեցին Իր մոտ և հարցրին. «Օրենքում մեզ Մովսեսը պատվիրել է, որ այսպիսիները քարկոծվեն: Հիմա դու ի՞նչ ես ասում» (Հմ.5): Այս հարցումն արեցին «նրան փորձելու համար, որպեսզի նրան ամբաստանեն» (Հմ.6) և ազատվեն նրանից, որովհետև Հիսուսին նկատում էին իրենց հեղինակության սպառնալիք:

Ու երբ Հիսուսը պատասխանեց. «Ձեզանից ով որ անմեղ է, թող առաջ նա՛ քար գցի դրա վրա», կնոջն ամբաստանողներից և ոչ մեկը չկարողացավ քար վերցնել:

Ուրիշների վարվելակերպը քննադատելուց առաջ մեր անձնական մեղքերին թեթև չնայենք: Հիշենք, որ բոլորս էլ «զրկված ենք Աստծո փառքից» (Հռոմ. 3. 23): Մեր Փրկիչը փոխանակ դատապարտելու այս կնոջը՝ նրան շնորհք ու հույս ցույց տվեց (Հովհ. 3.16 , 8. 10-11): Նույն կերպ է վարվում նաև քեզ և ինձ հետ: Ինչու՞ նույնը չենք անում մենք ուրիշների հանդեպ:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմք, որ սիրում ես մեզ: Օգնիր, որ կարեկցությամբ նայենք ուրիշներին և շնորհալի լինենք մեր բոլոր արածների և ասածների մեջ: Ամեն:

Քո ունեցած փորձառությամբ օգնիր նրանց, որոնք դժվարություններ են դիմագրավում:

Կարդա՛
 Դովհ. 8.1-11

Ձեզանից ով որ անմեղ է, թող առաջ նա՛ քար գցի դրա վրա: Դովհ. 8.7

«Աստված կյանքս փրկեց»

Երբ էրընը 15 տարեկան էր, սկսեց սատանային աղոթել. «Զգացի, որ ես ու ինքը Համախոհներ ենք»: Էրընը սկսեց սուտ խոսել, գողություն անել և ընտանիքին ու բարեկամներին շահագործել: Նա նաև մղձավանջներ ունեցավ. «Մի առավոտ արթնացա ու չարին տեսա մահճակալիս մոտ: Նա ինձ ասաց, որ իմ քննություններում հաջողություն եմ ունենալու, որից հետո մեռնելու եմ»: Բայց քննությունների ավարտից հետո նա չմահացավ և ասաց. «Ինձ համար պարզ էր, որ նա ստախոս է»: Աղջիկներին ծանոթանալու հույսով էրընը մասնակցեց քրիստոնեական մի փառատոնի, որտեղ մի մարդ առաջարկեց աղոթել իր համար: «Մինչ մարդն աղոթում էր, զգացի, որ մարմինս խաղաղություն է լցվում»: Նա զգաց «ավելի հզոր և ազատարար» մի բան, քան սատանայից իր զգացածն էր: Աղոթող մարդը էրընին ասաց, որ Աստված մի ծրագիր ունի, և սատանան ստախոս է: Այս մարդը արտահայտվեց նույն կերպ, ինչպես Հիսուսն ասաց սատանայի մասին, երբ պատասխանում էր Իրեն հակառակվողներին. «Նա ստախոս է և ստույթյան հայրը» (Հովհ. 8:44): Էրընը հրաժարվեց սատանայապաշտությունից, դարձավ դեպի Քրիստոսը և հիմա «Աստծուց է» (Հմ.47): Նա որպես հովիվ ծառայում է քաղաքի եկեղեցիներից մեկում և խոսում է այն փոփոխությունների մասին, որոնք լինում են Տեր Հիսուսին հետևելու շնորհիվ: Նա Աստծո փրկարար գործության կենդանի օրինակ է ու արիաբար հայտարարում է. «Վստահությունս կատարող եմ ասել, որ Աստված ինձ փրկեց»: Աստված ամեն բարի, սուրբ ու ճշմարիտ բաների աղբյուրն է:

Կարդա՛
 Յովհ. 8.42-47

Նա ստախոս է և ստույթյան հայրը:
 Յովհ. 8.44

Աղոթք - Սիրելի՛ Յայր, խնդրում եմ՝ ազատել ինձ սատանայի մահացու ճիրաններից, որովհետև նա ուզում է ստերով խաբել ինձ: Ամեն:

Աստված շատ ավելի զորեղ է, քան ստերի հայրը՝
 սատանան:

Շղթայված, բայց ոչ լուռ

1 1963-ի ամառային մի երեկո քաղաքացիական իրավունքի ջլատագույլ Ֆենի Լու Համերն ու ևս վեց սևամորթ ճամփորդներ սնվելու համար մտան Միսիսիպիի ճաշարաններից մեկը: Սակայն ոստիկանները ստիպեցին, որ նրանք դուրս գան այդ տեղից, ձեռքալվեցին նրանց ու բանտարկեցին: Նվաստացումը այդ մարդկանց հանիրավի ձեռքարկալու մով չափարտվեց: Բոլորին էլ ծեծեցին ու վիրավորեցին, բայց Ֆենիի վիճակն ամենավատն էր: Դաժան ծեծից հետո, որը նրան գրեթե մահվան դուռը հասցրեց, նա սկսեց երգել. «Պողոսն ու Շիղան կապված էին բանտում, իմ ժողովրդին ազատ արձակի՛ր»: Նա մենակ էր երգում, ուրիշ բանտարկյալներ, որոնք մարմնով էին կապված, բայց ոչ հոգով, նրան միացան:

«Գործք Առաքելոցի» 16-րդ գլխի համաձայն՝ Պողոսն ու Շիղան Հիսուսի մասին ուրիշներին պատմելու համար ընկան դժվարին կացության մեջ, բանտարկվեցին: Բայց այդ անհանգիստ վիճակը նրանց հավատը չտկարացրեց: «Կեսգիշերին Պողոսն ու Շիղան աղոթելով օրհներգում էին Աստծուն» (Հմ. 25): Նրանց համարձակ պաշտամունքը առիթ տվեց շարունակելու Հիսուսի մասին խոսելը: «Եվ Տիրոջ խոսքը խոսեցին նրան և բոլոր նրանց, ովքեր նրա տանն էին» (Հմ. 32):

Թող որ մեր սրտերում Իրեն պատվող երգ լինի, որը մեզ համարձակություն կտա՝ նույնիսկ տագնապների մեջ Իր մասին խոսելու:

Աղոթք - Դձուր, երբ նեղության ու դժվարության մեջ եմ, խնդրում եմ՝ զորացրու՛ ինձ, որպեսզի կարողանամ գովերգել ու փառավորել Քեզ: Ամեն:

**Դժվար պահերը մեզ կոչում են աղոթել ու պաշտել
Նրան, որ կառավարում է ամեն բան:**

Կարդա՛ր
Գործք Առ. 16.25-34

Կեսգիշերին Պողոսն ու Շիղան աղոթելով օրհներգում էին Աստծուն: Գործք Առ. 16.25

Քաջության կոչը

Լոնդոնի խորհրդարանի հրապարակում մի շարք հայտնի գործիչների՝ Նելսոն Մանդելայի, Ուինսթոն Չերչիլի, Մա-հաթմա Գանդիի արձանների կողքին կա նաև մի կնոջ արձան: Այդ միակ կինը Միլիսենթ Ֆաուսթին է, որը պայքարել է կա-նանց ընտրելու իրավունքի համար: Նրան անմահացրել են դրոշը ձեռքին կնոջ պղնձաձուլը արձա-նով: Դրոշի վրա գրված են այն խոսքերը, որ նա ասել է ընտրելու իրավունքին նվիրված գովաբանության ժամանակ. «Քաջությունը ամեն տեղ քաջության է կոչում»: Ֆաուսթինը պնդում էր, որ մեկի քաջությունը համարձակություն է տալիս ուրիշներին:

Կարդա՛ր
Ա ՄԵՏԱԳ. 28.8-10, 12-21

Ձորացի՛ր ու քաջ
եղի՛ր: Ա ՄԵՏԱԳ. 28.20

Երբ Դավիթը պատրաստվում էր գահը փոխանցել իր որդի Սողոմոնին, բացատրում էր այն պատասխանատվությունները, որոնք շուտով դրվելու են Սողոմոնի ուսերին: Բնականաբար, Սողոմոնը ցնցվեց սպասվելիք ծանր լծից, որ նշանակում էր առաջնորդել Իսրայելը, որ Աստծո պատվիրանները պահեն, պաշտպանեն այն հողը, որ Աստված իրենց է տվել և հսկեն սրբարանը կառուցելու պատասխանատու պարտականությունը (Ա. ՄՆԱԳ. 28. 8-10):

Իմանալով, որ Սողոմոնը վախենում է, Դավիթը նրան զորեղ խոսքեր ասաց. «Ձորացի՛ր ու քաջ եղի՛ր, գործի՛ր և մի՛ վախե-ցիր ու մի՛ գարհուրի՛ր, քանզի իմ Տեր աստվածը քեզ հետ է» (ՀՄ. 20): Դժվարություններ դիմագրավելիս հաճախ ենք փոր-ձում համարձակություն ցույց տալ: Սակայն Աստված է, որ նորոգում է մեր հավատքը: Նա մեզ հետ է լինելու, և Իր ներ-կայությունը մեզ քաջության է կոչում:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, հաճախ եմ վախենում ու փորձում իմ քաջությանը ապավինել, որը բավարար չէ: Ինձ հետ եղի՛ր և տու՛ր ինձ Քո՛ քաջությունը: Ամեն:

Սիրտդ լի է դողով ու վախով: Խնդրի՛ր Աստծո
ներկայությունը և Նա քեզ կգորացնի:

Կարեկցության ապրող հիշատակարան

Ես հասակ եմ առել մի եկեղեցում, որը բազում սովորություններ ուներ: Դրանցից մեկը հետևյալն էր. երբ ընտանիքի սիրելի անդամ կամ բարեկամ էր մահանում, շատ չանցած եկեղեցում նստարան կամ մի պղնձե տախտակ էր հայտնվում՝ տվյալ հանգուցյալի «...հիշատակին» գրառումով: Միշտ գնահատում էի և այժմ էլ գնահատում եմ հիշատակի հավերժացման այս ձևը: Սակայն միաժամանակ մտածելու տեղիք է տալիս այն, որ դրանք անկենդան ու անշունչ առարկաներ են, և արդյո՞ք չկա մի ձև այդ հիշատակներին «կյանքի» որևէ տարր ավելացնելու համար:

Իր սիրելի բարեկամ Հովնաթանի մահից հետո Դավիթն ուզեց նրա հիշատակը հարգել և կատարել իր տված խոստումներից մեկը (Ա. Թագ. 20.12-17): Սակայն փոխանակ պարզապես հիշատակի գրություն թողնելու՝

Դավիթը որոնեց ու գտավ ավելի կենդանի մի բան: Նա գտավ Հովնաթանի կաղ որդուն (Բ. Թագ. 9.3): Մեմփիբոսթեին կարեկցություն ցուցաբերելու Դավթի որոշումը (Հմ.6-7) շատ պատկերավոր է (Հմ.1). պապի՝ Սավուղի բոլոր արտերը թողանը վերադարձնելով և նրա համար կայուն ապրուստի միջոցներ ապահովելով, որպեսզի նա միշտ իր սեղանից հաց ուտի: Մինչ հուշատախտակներով ու գրառումներով շարունակում ենք հիշել մահացած սիրելիներին, հիշենք Դավթի օրինակը և կարեկցություն ցուցաբերենք մարդկանց հանդեպ, քանի դեռ ողջ են:

Աղոթք - Տե՛ր, ինձ ուժ տու՛ր կարեկցելու, ուրիշների՝ ինձ ցուցաբերած կարեկցությունը գնահատելու և մանավանդ Քրիստոսի կարեկցության համար Ամեն:

Կարդա՛

Բ Թագ. 9.1-7

Դավիթն ասաց. «Սավուղի տնից մնացած մարդ կա՞, որ Յովնաթանի սիրուն նրան բարերարություն անեմ»: Բ Թագ. 9.1

Հիշատակները կարևոր են: Սակայն գործնական արտահայտությունն ավելի օգտակար է:

Բնավ մենակ չես

Գրող մտերիմ բարեկամս Ինդոնեզիայում հոգևոր հովիվների համար Աստվածաշնչի ուղեցույց էր գրում և հիացած էր այդ ազգի միասնականությունը: «Գոթոնգ ռոյոնգ» հասկացությունը, որ նշանակում է «փոխադարձ աջակցություն» շատ հարգի է գյուղերում, որտեղ համագյուղացիները միասնաբար նորոգում են մեկի տանիքը, նորոգում են կամուրջը կամ ավերված ճանապարհը: Բարեկամս ասաց. «Քաղաքում էլ մարդիկ միշտ միասին են տեղ գնում, օրինակ բժշկի, հետևաբար դու բնավ մենակ չես»:

Աշխարհում Հիսուսին հավատացողներն ուրախանում են՝ գիտակցելով, որ բոլորովին մենակ չեն: Մեր մնայուն ու հավիտենական ընկերակիցը Սուրբ Հոգին է: Քրիստոսի յուրաքանչյուր հետևողի Երկնավոր Հայրը տվել է Աստծո հոգին, «որպեսզի հավիտյան ձեզ հետ լինի» (Հովհ. 14.16): Հիսուսը խոստացավ, որ Աստծո Հոգին պիտի գա աշխարհի վրա Իր ժամանակը լրանալուց հետո: Հիսուսն ասաց. «Ձեզ որք չեմ թողնի» (Հմ. 18): Փոխարենը Սուրբ Հոգին, «ճշմարտության Հոգին, որ «ձեզ մոտ է մնում ու ձեզ հետ կլինի», ապրում է մեր մեջ և ընդունում է Իրեն՝ որպես Իր Փրկիչը (Հմ.17): Սուրբ Հոգին մեր օգնականը, մխիթարիչն ու խորհրդատուն է, մնայուն ընկերակիցն այս աշխարհում: Թող որ հավիտյան մնանք Նրա մխիթարող սիրո և օգնության մեջ:

Աղոթք - Տե՛ր, խնդրում եմ՝ ինձ հիշեցրո՛ւ, որ Սուրբ Հոգին կարող է իմ մեջ բնակվել և տալ ինձ պետք եղած հանգստությունն ու մխիթարությունը: Ամեն:

Կարդա՛ր Յովհ. 14. 16-17

Եվ ես Հորը կաղաչեմ, և ձեզ ուրիշ Մխիթարիչ կտա, որպեսզի հավիտյան ձեզ հետ լինի. ճշմարտության Հոգին...:
Յովհ. 14.16-17

**Հիսուսը մեզ խոստացավ Սուրբ Հոգու
մնայուն ընկերակցությունը:**

Դատարկ մահիճը

Փափազում էի Զամայկայի Մոնտեգո ծոցի Սբ. Հակոբ հիփանդանոց վերադառնալ ու դարձյալ կապ հաստատել Ռենդըլի հետ, որը երկու տարի առաջ լսել էր իր հանդեպ Հիսուսի սիրո մասին: Ամեն գարնան ինձ հետ ճամփորդող երգչախմբի երիտասարդ անդամներից էվին Ռենդըլի համար Աստվածաշունչ էր կարդացել ու Ավետարանը բացատրել, որից հետո նա Հիսուսին ընդունել էր որպես իր անձնական Տեր ու Փրկիչ:

Երբ մտա հիփանդանոցի տղամարդկանց բաժանմունքը և նայեցի Ռենդըլի մահճակալի ուղղությամբ, այն դատարկ տեսա: Հիփանդապահուհիներից լսեցի, որ նա հինգ օր առաջ մահացել է: Հուզմունքից արտասվելով՝ բջջային հեռախոսով էվինն ուղարկեցի տխուր լուրը: Նրա պատասխանը պարզ էր. «Ռենդըլը հիմա Հիսուսի հետ տոնում է»: Հետո ասաց. «Լավ է, որ նրան ասինք Հիսուսի մասին, երբ առիթը ներկայացավ»:

Նրա բառերը ինձ հիշեցրին Քրիստոսի հանդեպ մեր ունեցած հույսը սիրով ուրիշների հետ կիսելու պատրաստակամության մասին: Միշտ էլ դյուրին բան չէ հայտարարել ավետարանի պատգամը, թե նա միշտ մեզ հետ է լինելու (Մատթ. 28:20): Սակայն երբ մտածում ենք մեր և Ռենդըլի նման մարդկանց հանդեպ բարի լուրի արած տարբերության մասին, թերևս պիտի քաջալերվենք ավելի պատրաստ լինելու «աշակերտ դարձնել բոլոր ազգերին» (Հմ. 19):

Աղոթք - Հայր, գիտենք, որ մարդիկ Քո կարիքն ունեն: Օգնիր, որ հաղթահարենք ուրիշներին Քո մասին պատմելու մեր վախերը: Ամեն:

Կարդա՛ր
 Մատթ. 28.16-20

Ուրեմն գնացեք, բոլոր ազգերին աշակերտ դարձրեք:
 Մատթ. 28.19

**Այսօր մեկին պատմի՛ր Հիսուսի մասին:
 Որպեսզի հետո ուշ չլինի:**

Անվախ սեր

Տարիներ շարունակ սիրտս պաշտպանելու համար վախի վահան էի կրում: Դա պատճառ դարձավ, որ խուսափեմ նոր բաներ փորձել, հետամուտ լինեմ երազներիս և հնազանդվեմ Աստծուն: Կորստի վախը, սրտի ցավն ու մերժումը արգելք եղան, որ ես կարողանամ զարգացնել Աստծո և ուրիշների հետ իմ հարաբերությունները: Վախն ինձ անապահով, մտահոգ, նախանձ տիկին և չափից ավելի զգայուն մայր էր դարձրել: Իսկ երբ սովորեցի, թե Աստված որքա՛ն է սիրում ինձ, Նա փոխեց իմ վերաբերմունքը Իր և ուրիշների հանդեպ: Իմանալով, որ Աստված հոգում է իմ մասին, ավելի ապահով եմ զգում և ուզում եմ ուրիշների կարիքները իմ կարիքներից առաջ դասել: Աստված սեր է (Ա. Հովհ. 4.7-8): Քրիստոսի մահը խաչի վրա, որ Աստվածային սիրո զերագույն արտահայտությունն է, ցույց է տալիս մեր հանդեպ Իր սիրո խորությունը (Հմ. 9-10): Որովհետև Աստված սիրում է մեզ և ապրում է մեր մեջ, մենք էլ կարող ենք ուրիշներին սիրել՝ հիմնվելով Իր ով լինելու և ինչ արած լինելու վրա (Հմ. 11-12):

Երբ Հիսուսին ընդունենք որպես մեր Փրկիչ, Նա Իր Սուրբ Հոգին կպարզեի մեզ (Հմ. 13-15): Սբ. Հոգին կօգնի ճանաչել ու վստահել Աստծո սիրուն, մեզ Հիսուսին ավելի նման կդարձնի (Հմ. 16-17): Հավատքի ու վստահության մեջ աճելը աստճանաբար կարող է մեր վախերը վերացնել, որովհետև առանց որևէ կասկածի դիտենք, որ Աստված մեծապես ու կատարելապես սիրում է մեզ (Հմ. 18-19):

Աղոթք - Տե՛ր, անսահման շնորհակալ եմ, որ մեր մեջ անսահման սեր ես լցնում, որպեսզի մենք էլ առանց վախենալու սիրենք Քեզ և ուրիշներին: Ամեն:

Սրտունդ վախեր կա՞ն: Վստահի՛ր Աստծո սիրուն և Նա քեզ կազատի վախերից:

Կարդա՛ր
Ա Յովհ. 4.7-12

Մենք սիրենք նրան, որովհետև առաջ նա սիրեց մեզ: Ա Յովհ. 4.19

Այստեղ՝ քեզ համար

Փարիզի ծայրամասերում, ինչպես ուրիշ քաղաքներում, մարդիկ օգնություն ձեռք են մեկնում իրենց շրջանում գտնվող անտուն մարդկանց: Հագուստներ են դնում անջրանցիկ տոպրակների մեջ ու դրանք կախում ցանկապատերի որոշակի հատվածներում, որպեսզի փողոցում բնակվողները գան ու ըստ իրենց կարիքի՝ տանեն: Տոպրակների վրա պիտակներ կան, որոնց վրա գրված է.« Ես քեզ համար եմ, եթե մրտում ես»: Այս գեղեցիկ արարքը ոչ միայն ջերմացնում է տանկներին, այլև մեզ սովորեցնում է շրջապատի կարոտյալներին օգնելու կարևորությունը:

Աստվածաշունչը մատնանշում է աղքատների հանդեպ հոգատար լինելու կարևորությունը՝ ցույց տալով, որ նրանց առջև «առատաձեռն ենք լինելու» (Բ. Օր. 15.11): Մենք կարող ենք, ամուր բռնելով մեր ունեցվածքը, աչք փակել աղքատների կարիքների հանդեպ՝ փոխանակ բաժին հանելու նրանց: Բայց Աստված մեզ մարտահրավեր է տալիս, որ միշտ էլ շրջապատված ենք լինելու կարիքավոր մարդկանցով, ուստի առատաձեռնությունը ու «առանց տրտմելու» (Հմ. 10) օգնենք նրանց: Հիսուսն ասում է, որ աղքատներին տալով՝ մենք հավիտենական գանձեր ենք դիզում երկնքում (Ղուկ. 12.33): Երբ հոժարակամ տալիս ենք, ոչ միայն մեր շրջապատում եղողների կարիքներն ենք հոգում, այլև վայելում ենք մեզ համար Աստծո նախանշած ուրախությունը:

Կարդա՛ր Բ Մնաց. 15.13-14

Այս բանը պատվիրելով՝ ասում եմ.
«Քո աղքատ եղբոր և քո երկրում տառապյալ մարդկանց նկատմամբ առատաձեռն եղիր»
Բ. Օր. 15.11

Աղոթք - Ո՛վ Տե՛ր, օգնի՛ր, որ բաց աչքեր ու ձեռքեր ունենանք, որպեսզի Քո անունով կարողանանք հոգալ մեզ հանդիպած կարոտյալների կարիքները: Ամեն:

Առատաձեռնությունը Աստծո սիրո և հավատարմության լավագույն արտահայտությունն է:

Առարկաներ հայելու մեջ

1993 թվականին նկարահանված «Յուդայի դարաշրջանի այգին» հայտնի ֆիլմի հերոսներից դուրսը Իեն Մալքոմը իր երկու ուղեկիցների հետ հսկա դինոզավրից ջիփով փախչելու տեսարանում ասում է. «Պե՛տք է: Գնա՛լ: Արա՛գ»: Երբ վարորդը նայում է հետևը արտացոլող հայելուն, դրա մեջ տեսնում է կատաղի կենդանու սարսափազդու ծնոտը: Իսկ ֆիլմում հնչում են այս բառերը. «Հայելու մեջ երևացող առարկաները կարող են ավելի մոտ լինել, քան իրենց երևույթը»: Երբեմն թվում է, թե անցյալի «հրեշները» չպիտի դադարեն մեզ հետապնդել: Նայում ենք մեր կյանքի «հայելու» մեջ և այնտեղ տեսնում մեր անցյալի սխալները, որոնք սպառնում են հանցանքով ու ամոթով լափել մեզ:

Պողոս առաքյալը հասկացավ մեր անցյալի գաղտնի կաթվածահարող զորութիւնը: Նա տարիներ անցկացրեց՝ փորձելով Քրիստոսից հեռու ապրել կատարյալ կյանքով, նույնիսկ քրիստոնյաներին հալածեց (Փիլ. 3.1-9): Անցյալի համար իր ափսոսանքը շատ հեշտ կարող էր նրան կաթվածահար անել: Բայց վախով ու ափսոսանքով հետ նայելու փոխարեն հավատքով առաջ նայելը նրան ազատեց, ու նա գրեց. «Մի բան կա. հետևի բաները մոռանալով՝ դեպի առջևում եղողներն եմ ձգտում: Հետևում եմ դեպի նպատակակետը» (Հմ. 13-14):

Քրիստոսով մեր ունեցած փրկութիւնը մեզ ազատութիւն է տվել՝ ապրելու Իր համար:

Աղոթք - Հայր, երբեմն անցյալը մեզ չի թողնում առաջ գնալ: Օգնիր հիշել, որ Հիսուսի շնորհիվ մենք նոր ստեղծվածներ ենք և կարիք չունենք ապրել հանցանքով ու ափսոսանքով: Ամեն:

Անցյալից քեզ տանջող հարցեր ունե՞ս: Դարձի՞ր Աստուծոն և նա քեզ կազատի:

Կարդա՛ր Փիլիպ. 3.7-14

...հետևի բաները մոռանալով՝ դեպի առջևում եղողներն եմ ձգտում: Հետևում եմ դեպի նպատակը՝ Հիսուս Քրիստոսով Աստծու վերին կոչման մրցանակին: Փիլիպ.3.13-14

Աստծո պատկերով

Երբ երիտասարդ կնոջ գեղեցիկ սրճագուլյն մաշկը սկսեց գուլյնը կորցնել, նա սկսեց վախենալ, կարծես իր դեմքն էր կորցնում: սկսեց դիմահարդարման միջոցով թաքցնել մաշկի թերությունը:

Մի օր, սակայն, վատահելով Աստծո զորությանը, իր վիճակն ընդունեց բնականոն և դադարեց չպարվել: Շուտով կնոջ ինքնավատահելությունն ավելացավ, և նա ի վերջո դարձավ մաշկային այդ խնդրի լուծման համար ստեղծված զարդադեղի՝ «Վիտիլիգոյի» ներկայացուցիչը: Հեռուստատեսային հարցազրույցներից մեկի ժամանակ ասաց, որ դա «հիանալի օրհնություն է» և ավելացրեց, որ իր հավատքը, ընտանիքը և բարեկամները իրեն քաջալերող լավագույն միջոցներն են:

Այս կնոջ պատմությունը մեզ առիթ է տալիս հիշել, որ յուրաքանչյուրս ստեղծված ենք Աստծո հիանալի պատկերով: «Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծո պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց» (Ծննդ. 1.27): Կարևոր է, թե արտաքենապես ինչ տեսք ունենք: Բոլորս էլ Աստծո պատկերը կրող էակներ ենք:

Որպես իր ստեղծածները իր փառքն ենք ցոլացնում, ու որպես Հիսուսին հավատացողներ՝ կերպարանափոխվում ենք՝ աշխարհում իրեն ներկայացնելու համար:

Աղոթք - Հայր, օգնիր, որ ընդունեմ ինչպես ինձ ստեղծել ես: Իմ սրտում Դու՛ իշխիր, որպեսզի ուրիշները Քեզ տեսնեն իմ մեջ: Ամեն:

Կարդա՛ ծննդոց 1.26-31

Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծո պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց:

ԾՆՆ. 1.27

Ի՞նչն է կարևորը: Մարդիկ քեզ այնպես են տեսնում, ինչպես դու ես պարզում Աստծո պատկերը:

Գիշերվա պահեր

Քույնջում ուսանելու տարիներին ամառներն անցկացնում էինք Կոլորադոյի սքանչելի լեռների վրա գտնվող ագարակների հյուրանոցներում: Անտառային հրդեհների շրջանում հյուրերի անվտանգության համար մեզ հաջորդաբար «գիշերային հսկիչ» էին նշանակում: Առաջին հայացքից հոգնեցուցիչ թվացող այդ պարտականությունն ինձ համար առիթ դարձավ հանդարտ պահ ունենալու, մտածելու և Աստծո հրաշալի ներկայության մեջ մխիթարություն գտնելու:

62 Սաղմոսում Դավիթ թագավորը ջերմագին Աստծո ներկայության ծաղիկը զգաց (Հմ.1), նույնիսկ անկողնում ու գիշերային պահերին (Հմ.7): Սաղմոսը հստակեցնում է, որ Դավիթը անհանգիստ էր: Հավանաբար այդ բառերը արտացոլում են նրա խոր վիշտը իր որդի Աբիսոդոմի ապստամբության համար: Եվ գիշերային այդ պահերը Դավթի համար եղան սփոփանքի ու ցնծության պահեր «Աստծո թևերի հովանու տակ» (Հմ.8), ինչպես նաև Նրա ներկայության ու գործության մեջ:

Կարող է պատահել, որ դու էլ քո կյանքում ճգնաժամեր դիմագրավես և գիշերային պահերը մխիթարություն լինեն քեզ համար: Թերևս ընտանիքի, գործի և տնտեսական դժվարությունները խանգարում են հանգստյանդ ժամերին:

Եթե այդպես է, ուրեմն անքնության տաղնապալի պահերը նկատի առ որպես սքանչելի առիթ Աստծուն ապավինելու և Նրան դիմելու համար, թույլ տալով, որ Նրա սիրո ձեռքերը քեզ նեցուկ լինեն (Հմ.9):

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ Դու միշտ արթուն ես ու ներկա գիշերվա պահերին: Ամեն:

Մարտահրավերներ՝ Կան կյանքումդ, որոնք քեզ արթուն են պահում: Այդ գիշերային պահերին ապավինի՛ր Աստծուն:

Կարդա՛ Սաղմոս 62. 1-8

Երբ քեզ հիշում էի իմ անկողնում, առավոտյան կանուխ խոսում էի քեզ հետ:
Սաղմ. 62.7

Կարո՞ղ ենք հանդարտվել

Ղանիելը ֆիզիոթերապևտիկ կենտրոն մտավ, վատահ, որ ցավը սաստիկ է լինելու: Բժիշկը քաշեց, ծոնց նրա թևը և այնպիսի դիրքով պահեց, որ վիրավորվելուց ի վեր չէր եղել: Յուրաքանչյուր անհանգիստ դիրքում մի քանի բույս պահելուց հետո նա նրբորեն բռնեց թևս ու ասաց. «Շատ լավ, հիմա կարող ես հանդարտվել»: Հետո Դանիելը հիշում էր. «Կարծեմ նվազագույնը 50 անգամ լսեցի «Շատ լավ, հիմա կարող ես հանդարտվել» արտահայտությունը:

Մտածելով այս բառերի մասին՝ Դանիելն անդրադարձավ, որ դրանք կարող է կիրառել նաև իր կյանքի մնացած օրերին: Որ մտահոգվելու փոխարեն ինքը կարող է Աստծո բարությունը ու հավատարմությունը հանդարտվել:

Հիսուսը իր մահից առաջ իմացավ, որ իր աշակերտները կարիք ունեն այս բանը հասկանալու, որովհետև իր գնալուց շատ չանցած՝ հակառակության ու հալածանքի են ենթարկվելու: Նրանք քաջալիքելու համար ասաց, թե Սուրբ Հոգուն պիտի ուղարկի իրենց հետ մնալու և իր սովորեցրածները այլոց սովորեցնելու համար (Հովհ. 14.26):

Հետևաբար նա կարող էր ասել. «Խաղաղություն եմ թողնում ձեզ, ի՛մ խաղաղությունն եմ տալիս ձեզ, ձեր սիրտը թող չխռովվի ու չվախենա» (Հմ.27):

Մեր ամենօրյա կյանքում շատ բաների համար լարված ենք լինում: Սակայն կարող ենք աճել Աստծո նկատմամբ ունեցած մեր վստահությունը՝ ինքներս մեզ հիշեցնելով, որ իր հոգին մեր մեջ է ապրում և իր խաղաղությունը մեզ է առաջարկում:

Աղոթք - Տե՛ր, սովորեցրու՛ ինձ վստահել հավատարմությանդ, զգալ ներկայությունդ, խաղաղության փորձառություն ունենալ ու հանդարտվել: Ամեն:

Ճշումներ ունես: **Վստահի՛ր, որ Աստված կարող է քեզ հանգստացնել:**

Կարդա՛ր
Յովհ. 14. 25-31

...ձեր սիրտը թող չխռովվի ու չվախենա:
Յովհ. 14.27

Գանձ գտնել

Ձոնն ու Մերին իրենց շնիկի հետ զբոսնում էին, երբ նկատեցին անձրևների հետևանքով հողից մասամբ դուրս ցցված թիթեղյա ժանգոտ մի տուփ: Վերցրին այն, տարան տուն և բանալով՝ տեսան ավելի քան հարյուրամյա ոսկեդրամներ: Վերադառնալով նույն տեղը՝ նրանք գտան ևս 7 տուփ և ունեցան 1427 ոսկեդրամ:

Պահեցին դրանք՝ թաղելով մեկ այլ տեղ:

Թաքնված ոսկիները, որոնց արժեքը տասը միլիոն դոլար է, և հայտնի են Սեդրլ Ռիջ Հորդ անունով, Միացյալ Նահանգների պատմության մեջ եզակի մեծարժեք գտածոն է: Այս պատմությունը

հիշեցնում է Հիսուսի պատմած առակներից մեկը. «Երկնքի արքայությունը դարձյալ նման է արտի մեջ թաքցված գանձի, որ մի մարդ գտնելով թաքցրեց: Ուրախությունից գնում, իր ամբողջ ունեցածը ծախում է և արտն առնում» (Մատթ. 13.44):

Թեև հազվադեպ են նման պեղումներ լինում, թաքցված գանձերի մասին հեքիաթները դարեր շարունակ գրավում են մարդկանց երևակայությունը: Մակայն Հիսուսը պատմում է մի գանձի մասին, որը մատչելի է այն բոլոր մարդկանց, որոնք իրենց մեղքերը խոստովանելով, ընդունում և հետևում են Իրեն (Հովհ. 1.12):

Եթե մենք մեր հին կյանքը թողնելով՝ Աստծուն ու Նրա նպատակաները հետապնդենք, այդ գանձը բնավ չենք կորցնի:

Աղոթք - Տե՛ր, Դու ես իմ մեծագույն գանձը: Փառավորում եմ Քեզ, որովհետև խաչի վրա Քո կյանքը տվեցիր, որպեսզի ես Քեզանով ներում ու նոր կյանք ունենամ: Ամեն:

Աստծո հետ քո ունեցած հարաբերությունը գանձ համարի՛ր և բաժանի՛ր այն ուրիշներին:

Կարդա՛

Մատթեոս 13.44-46

Երկնքի արքայությունը դարձյալ նման է արտի մեջ թաքցված գանձի: Մատթ. 13.44

Ծաղիկ անապատում

Մոջավ անապատն ունի այդ գոտուն բնորոշ ավազաթմբեր, չոր կիրճեր, տափաստաններ և բլուրներ: Կենսաբան Էդմոնդ Ջագերը նկատել է, որ մի քանի տարի առատ անձրևների շնորհիվ «անապատի ողջ տարածքը ծածկվել է ծաղիկներով»: Մոջավի ծաղկային ծածկույթը բացառիկ երևույթ է: Հետազոտողները հաստատում են, որ չոր հողը կարիք ունի ճիշտ ժամանակին առատ անձրևներով ջրվելու և արևի ճառագայթներով ջերմանալու, որպեսզի ծածկվի կենսունակ գույնզգույն ծաղիկներով:

Ամայի ու չոր տարածքում Աստծո՝ կյանք առաջացնելու այս պատկերը Եսայի մարգարեին է հիշեցնում: Աստծո դատաստանի պատգամը տալով՝ նա բոլոր ժողովուրդների համար ոգևորիչ հույսի տեսիլքի մասին է ասում (Ես. 35): Նկարագրելով ապագան, երբ Աստված ամեն բան բարի պիտի անի, մարգարեն ասում է. «Թող ուրախանա ծարաված անապատը, թող ցնծա անապատը և ծաղկի ինչպես շուշանը» (Հմ.1): Նա հայտարարում է, որ Տիրոջ ազատածները Նրա թագավորություն են մտնելու «ցնծությունը, և նրանց գլխի վրա հավիտենական ուրախություն պիտի լինի, օրհնություն ու ցնծություն պիտի լինի նրանց գլխի վրա, ուրախությունը պիտի դիմավորի նրանց, ցավը, տրտմությունն ու հեծությունը պիտի անհետանան» (Հմ.10):

Աստծո խոստմանը համաձայն՝ մեր հավիտենական ապագան ապահովված լինելով՝ կարող ենք կյանքի թե՛ չոր եղանակներին և թե՛ հեղեղների ժամանակ Իրեն վստահել:

Աղոթք - Սիրո՛ղ Հայր, շնորհակալ եմք, որ վստահեցնում ես, թե մեզ հետ ես և սովորեցնում ես պատրաստ լինել մեր կյանքի յուրաքանչյուր փոթորկալից պահին: Ամեն:

Փոթորիկներ դիմագրավելիս վստահ եղի՛ր, որ Աստված քեզ հետ է:

Կարդա՛ր
Եսայի 35. 1-10

Իմ ժողովուրդը
պիտի տեսնի
փառքը Տիրոջ ու
վեհուօթյունը մեր
Աստծու: Ես. 35.2

Առիթը մի՛ փախցրու

Շաբաթամիջի մեր ազոթաժողովն սկսելուց առաջ խոսում էինք նախորդ գիշերվա դրավիչ լիալուսնի մասին: Աստվածային ստեղծագործությունը սիրող, մոխրագույն մագերով տիկին Վեբն ասաց. «Բնավ առիթը մի՛ փախցրու լիալուսինը ցույց տալու երեխաներիդ»: Նա գիտեր, որ մենք երկու երեխա ունենք, և ուզում էր ինձ օգնել, որ կարողանամ Աստծո ճանապարհին վարժեցնել նրանց:

Տիկին Վեբը լավ սաղմոսերգու չէր կարող լինել: Նրա ուշադրության տեսակը արտացոլված է Դավթի՝ երկնային մարմինների նկարագրության մեջ, որտեղ նա ասում է. «Ձկան բառեր, ոչ էլ խոսքեր, դրանց հնչյունները լսելի չեն: Բայց ողջ երկիրն է բռնել ձայնը նրանց, և մինչև աշխարհի ծայր են հասել խոսքերը նրանց» (Սաղմոս 18. 4-5): Սաղմոսերգուն և տիկին Վեբը ոչ թե լուսինը կամ աստղերը, այլ դրանք ստեղծողի ձեռքերը պաշտելու նպատակ ունեն: Հրաշալի երկինքն ու երկնքի հաստատությունը հայտնում են Աստծո փառքը (Հմ.1): Մենք էլ կարող ենք մեր շրջապատում եղողներին, կլինեն նրանք մանուկ, թե պատանի, կողակից կամ դրացի, քաջալերել, որ մի պահ կանգ առնեն, նայեն ու տեսնեն մեր շուրջը գտնվող Աստվածային փառքի հայտարարություններն ու հռչակումները: Նրա ձեռքերին ու գործերին ուշադրություն դարձնելը մեզ կառաջնորդի պաշտելու այս գեղեցիկ տիեզերքի հետևում կանգնած մեր սքանչելի Աստծուն: Բնավ առիթը չկորցնես:

Կարդա՛ր
Սաղմոս 18. 1-4

Երկինքը պատմում է Աստծու փառքը, և երկնքի հաստատությունը հայտնում է Երա ձեռքի գործերը:
Սաղմ. 18.1

Աղոթք - Տե՛ր, օգնի՛ր, որ կարողանամ վազքիս մեջ դանդաղել մի պահ, նկատել Քո ձեռքերի գործը և քաջալերել ուրիշներին՝ տեսնելու նույն բանը: Ամեն:

Եթե կանգ առնենք ու նայենք, կտեսնենք, որ ստեղծագործությունը փառավորում է Աստված:

Խորտակել

Մտահոգվեցի, երբ տեսա, որ ընկերուհիս՝ Էրինը, ոտքի վրա բոուլինգի ընկնող փայտիկներ էր դաջել: Նա ներշնչվել էր՝ լսելով Սառա Քրոֆտի «Շարել բոուլինգի փայտիկները» երգով, որի բառերը ունկնդիրներին առաջարկում են հիանալ կյանքում կրկնվող պարտականություններով, եթե նույնիսկ դրանք երբեմն կարող են անիմաստ թվալ՝ բոուլինգի փայտիկները շարելու նման, որ նորից խորտակես:

Կյանքը լի է թվում այնպիսի գործերով, որոնք անընդհատ կրկնվում են: Օրինակ լվացք անել, ճաշ եփել, բակի խոտերը կտրել: Այս մտորումը նորությունն է, այլ հին վրդովմունք, որի դեմ պայքարում էր դեռևս Ժողովողի հեղինակը:

Գիրքն սկսվում է առօրյա մարդկային կյանքի անվերջ կրկնվող գործողություններից գանգատով (1.2-3), նույնիսկ դրանք համարելով անիմաստ, որովհետև. «Այն, ինչ եղել է, նույնն էլ պիտի լինի, և այն, ինչ կատարվել է, նույնն էլ պիտի կատարվի» (Հմ.9):

Հեղինակը ընկերուհուս նման կարող էր ուրախություն և իմաստ գտնել՝ հիշելով, որ մեր գերագույն գոհացումը գալիս է «Աստուծոց վախենալով և նրա պատվիրանները պահելով» (Հմ. 12.13):

Երբ մեր կրկնվող պարտականությունները հոգնեցուցիչ կլփվան, մի պահ կանգ առնենք և յուրաքանչյուր պարտականություն Աստծուն ընծայենք՝ որպես մեր սիրո նվիրում:

Աղոթք - Շնորհակալ եմք, Հայր, որ արժևորում ես կյանքի սովորական գործերը: Օգնի՛ր, որ այսօր մեզ առաջադրված պարտականությունների մեջ ուրախություն գտնենք: Ամեն:

Աստված արժևորում է մեր սովորական բոլոր կրկնվող պարտականությունները:

**Կարդա՛ր
ժողովող 1.3-11**

Այն, ինչ եղել է, նույնն էլ պիտի լինի, և այն, ինչ կատարվել է, նույնն էլ պիտի կատարվի: Ժող. 1.9

Էպպիի աղոթքը

Երբ էպպին երկրորդական վարժարանի ավարտական դասա-
բանում էր սովորում, ինքն ու մայրը լսեցին մի երիտասար-
դի մասին, որը օդանավի աղետի պատճառով կորցրել էր ծնող-
ներին, իսկ ինքը ծանր վիրավորվել էր: Թեև անձանոթ էին,
բայց էպպիի մայրն ասաց. «Մենք պետք է աղոթենք այս երի-
տասարդի ու իր ընտանիքի համար: Եվ
նրանք աղոթեցին: Տարիներ անց, երբ
էպպին արդեն համալսարան էր ըն-
դունվել, ուսանողներից մեկն առաջար-
կեց իր կողքին նստել: Պարզվեց, որ դա
այն նույն տղան էր՝ Օսթին Հետչը, որի
համար ինքը աղոթում էր: Շատ չան-
ցած՝ նրանք մտերմացան ու 2018-ին
ամուսնացան:

Կարդա՛
Եփես. 6.16-20

Արդ աղաչում եմ
ամենից առաջ
աղոթք անել, խնդ-
րանք, աղաչանք,
գոհության՝ բոլոր
մարդկանց համար:
Ա. Տիմ. 2.1

«Խենթանալու բան է մտածել, որ ես
իմ ապագա ամուսնու համար էի աղոթում», - ասաց էպպին իր
հարցազրույցներից մեկում: Հեշտ է մեր աղոթքները սահմա-
նափակել միայն մեր անձնական ու մեր մտերիմների կարիքնե-
րով, առանց ուրիշների համար աղոթելու: Սակայն Պողոսը,
գրելով Եփեսոսի եկեղեցուն, ասաց. «Աղոթքով ու աղաչանքով
աղոթք արեք, ամեն ժամանակ՝ Հոգով. և սրա մեջ հարատևու-
թյամբ և աղաչանքով հսկեցե՛ք բոլոր սրբերի համար» (Եփ.
6.18): Իսկ Տիմոթեոսին ուղղված առաջին նամակում Պողոս
առաքյալն ասում է, որ աղոթենք «բոլոր մարդկանց համար»,
ներառյալ թագավորներն ու իշխանավորները (Ա.Տիմ. 2.1):

Եկե՛ք աղոթենք ուրիշների և նույնիսկ մեզ անձանոթ մարդ-
կանց համար:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, բա՛ց սիրտս իմ շուրջը եղող մարդ-
կանց, նույնիսկ անձանոթների կարիքների համար: Ա՛ռ իմ
աղերսները և հոգա՛ նրանց բոլոր կարիքները: Ամեն:

**Մեր շուրջը կան զանազան կարիքներով մարդիկ:
Աղոթենք նրանց համար:**

Ունեցածը կիսել

Վաթսուներկու տարեկան անտուն զինվորական վետերան Սթիվը որոշեց գնալ ավելի տաք մի շրջան, որտեղ ամբողջ տարին դրսում քնելը տանելի կլիներ:

Մի օր, երբ նա փող աշխատելու նպատակով անցորդներին էր ցուցադրում իր նկարները, մի երիտասարդ կին մոտեցավ ու պիցայի կտորներ առաջարկեց նրան:

Սթիվը շնորհակալություններ ընդունեց և դրա մի մասը տվեց իր մեկ այլ բախտակցի: Գնահատելով Սթիվի ցուցաբերած առատաձեռնությունն ու իր ունեցածը ուրիշների հետ կիսելու կարողությունը՝ երիտասարդ կինը ևս մեկ պիցա բերեց նրան:

Սթիվի պատմությունը ցույց է տալիս Առակաց 11.24-ում նշված սկզբունքը, թե երբ մենք առատաձեռն ենք ուրիշների հանդեպ, շատ հավանական է, որ մենք ստանանք բազմապատիկը: Բայց պետք է նուրիշներին տալ՝ անպայման ետ ստանալու ակնկալիքով: Հազվադեպ է լինում, որ մեր առատաձեռնության պտուղներն անմիջապես քաղենք, ինչպես Սթիվի հետ պատահեց:

Մենք ուրիշներին տալիս ենք օգնելու համար՝ սիրով ընդունալով Աստծո տված ցուցմունքին (Փիլ.2 3-4, Ա. Հովհ. 3.17): Ու երբ անենք այդ բանը, Աստված կկամենա: Թեև պարտավոր է մեր դրամապանակներն ու ստամոքսները լցնել, բայց Նա գտնում է երբեմն նյութապես, երբեմն էլ հոգեպես մեզ թարմացնելու ձև:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ Քո բարիքները հասնում են ինձ ուրիշների միջոցով: Օգնիր, որ ես էլ պատրաստ լինեմ իմ ունեցածը ուրիշների հետ կիսելու: Ամեն:

Մենք կարող ենք առատաձեռն լինել Աստծո տված բարիքներով:

Կարդա՛ր Առակներ 11.23-31

Կան մարդիկ, որոնք ցանում են իրենց ունեցածը և ստանում բազմապատիկը, կան էլ, որ անիրավորեն են հավաքում, բայց մնում են կարոտյալ: Առ. 11.24

Բոլորի Աստվածը

«Նյուզ բոյս» խմբի նախկին մենակատար Փիթեր Ֆրըլլերի մեկնաբանությունը՝ իրենց կատարած «Նա իշխում է» փառաբանական երգը տարբեր ազգերի ու ցեղերի հավատացյալ մարդկանց մի գունեղ պատկեր է: Նա նկատում է, որ ամեն անգամ այդ երգը կատարելիս իրենք զգացել են Սուրբ Հոգու շարժումը հավատացյալների մեջ: Երգչի այս նկարագրությունը նման է Հոգեգալստյան օրը Երուսաղեմում հավաքված բազմությունից փորձառությունը: Երբ աշակերտները Սուրբ Հոգով լցվեցին (Գործք 2.4), այնպիսի բաներ պատահեցին, որ որևէ մեկը չէր կարող պատկերացնել: Բոլոր ազգերը ներկայացնող մարդիկ մեկտեղ հավաքված ու շփոթված էին, որովհետև նրանցից յուրաքանչյուրն իր լեզվով էր լսում Աստծո կատարած հրաշագործության մասին (Հմ. 5-6.11): Պետրոս առաքյալը բացատրեց նրանց, որ դա Հին Կտակարանում ասված մարգարեության իրականացումն է. «Իմ հոգուց ամեն մարմնի վրա կթափեմ» (Հմ.17):

Աստծո սքանչելի գործության այս նկարագրությունը այնտեղ հավաքված ժողովրդի սիրտը բացեց Ավետարանի մասին Պետրոսի արած հայտարարությունն ընդունելու համար և երեք հազար մարդ ավելացավ եկեղեցուն (Հմ.41): Բարի լուրը, որ Աստծո հույսի պատգամն է, այսօր էլ է հնչում: Երբ միասին պաշտամունք ենք անում, Նրա Հոգին շարժվում է մեր մեջ՝ համախմբելով բոլոր ազգերի մարդկանց: Նա իշխում է:

Աղոթք - Երկնավոր Հայր, օգնիր, որ Քո սիրտը ցույց տամ քո ժողովրդին: Ամեն:

Երբ Տեր Հիսուսին ոսպնյակով նայես, Աստծո պատկերը կտեսնես այնտեղ:

Կարդա՛ Գործք Առ. 2.1-12

Երուսաղեմում բնակվում էին հրեաներ՝ աստվածավախ մարդիկ, երկնքի տակ գտնվող բոլոր ազգերից: Գործք 2.5

Վերացնել խավարի քողը

Դաժան ավտովթարը խորտակեց Մերի էն Ֆրանկոյի կյանքը: Նա ողջ մնաց, սակայն տեսողությունը իսպառ կորցրեց: «Տեսածս միայն մթուկություն է ու խավար», - իր վիճակն այսպես է նկարագրում նա: Քսանմեկ տարի անց Մերին ընկավ ու ողնաշարը վնասեց: Վիրահատությունից արթնանալուց հետո նա ասես հրաշքով սկսեց տեսնել: Վերջին երկու տասնամյակում առաջին անգամ նա տեսավ իր դստեր դեմքը: Մասնագետ նյարդաբանը պնդում էր, որ պատահածը որևէ գիտական բացատրություն չունի: Փաստորեն վերջնական թվացող խավարը փոխարինվել էր լույսով ու գեղեցկությամբ:

Աստծո խոսքը և մեր փորձառությունները մեզ ասում են, որ աշխարհը ծածկված է տգիտության և չարության մի քողով, որը կուրացնում է բոլորիս ու թաքցնում Աստծո սերը: (Ես. 25:7): Անձնասիրությունն ու ազատությունը, ինքնաբավ լինելու զգացումը, գործության կամ երևալու ցանկությունը մթազնում են մեր տեսողությունը, ծածկում մեր աչքերը քողով՝ խանգարելով, որ մենք հստակորեն տեսնենք Հավատարիմ Աստծուն, որը «սքանչելի գործեր կատարեց» (Հմ.1):

Հաճախ մենք մեզ բանտված ենք զգում, խարխափած ու մոլորված՝ անկարող տեսնելու մեր առջև եղած ճանապարհը: Աստված մեզ անհույս չի թողնում: Նրա հանդեպ սերը վերացնում է մեզ կուրացնող ամեն բան և զարմացնում բարի կյանքի ու ճոխության գեղեցիկ տեսիլքով:

Աղոթք - Հայր, ամենուր տիրող մռայլությունը խանգարում է տեսնել Քո սերն ու ճշմարտությունը: Օգնիր ինձ, որովհետև առանց Քեզ ես անհույս եմ: Ամեն:

Քեզ խավարի մեջ ես զգում: Վստահի՛ր, որ Տեր Հիսուսը կարող է վերացնել այն խավարը:

Կարդա՛ր Եսայի 25. 1-9

Տերը բոլորի երեսից արցունքն իսպառ պիտի կտրի, ժողովրդի նախատինքը պիտի վերացնի ամբողջ աշխարհից: Ես. 25.8

Ընդամենը գնչու տղա է

1877 թվականին, երբ Ռոդնի Սմիթը մի պաշտամունքի ժամանակ առաջ գնաց՝ Քրիստոսին ընդունելու, մեկը փսփսաց. «Օ՛, ընդամենը գնչու տղա է»: Ոչ մեկը ավելի բան չմտածեց անուս գնչու ծնողների այս որդու մասին: Սակայն Ռոդնին այդ ձայներին ուշադրություն չդարձրեց: Նա վստահ էր, որ Աստված իր կյանքի համար ծրագիր ուներ, հետևաբար նա Աստվածաշունչ և անգլերեն մի բառարան գնեց և սկսեց ինքնուրույն գրել-կարդալ սովորել:

Շուտով հասկացավ, որ «Հիսուսի ճամփան Քեմբրիջի, Հարվարդի կամ Եյլի նշանավոր համալսարաններով չի անցնում, այլ հնադրոշմ Գողգոթա կոչված լեռով»: Ու հաղթահարելով բազում դժվարություններ ու նեղություններ՝ Ռոդնին դարձավ ավետարանիչ: Աստված նրան օգտագործեց Մեծ Բրիտանիայում և Միացյալ Նահանգներում շատերին դեպի Հիսուս առաջնորդելու գործում:

Պետրոսը նույնպես մի հասարակ մարդ էր, վարդապետների դպրոցում չէր սովորել (Գործք 4.13), նա պարզ, անուս մի ձկնորս էր, երբ Հիսուսը նրան կանչեց. «Ե՛կ իմ հետևից» (Մատթ. 4.19): Այս նույն Պետրոսը, հակառակ իր սահմանափակ դաստիարակության և ունեցած ձախողումների՝ հաստատեց, որ Հիսուսին հետևողները «ընտիր սերունդ են, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ» (Ա. Պետ. 2.9): Հիսուս Քրիստոսի միջոցով ամեն մարդ կարող է Աստծո ընտանիքի մաս կազմել ու Աստծո կողմից օգտագործվել:

Կարդա՛
Ա. Պետ. 2.4-10
Դուք ընտիր սերունդ եք, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ: Ա. Պետ. 2.9

Աղոթք - Զայր , շնորհակալ եմ, որ իմ ինքնությունը Քո մեջ է: Ամեն:

Որպես Աստծո կողմից ընտրված՝ դու կարող ես շատ բան անել իր թագավորության տարածման աշխատանքում:

Պարզ հաղորդակցություն

Ասիայում ճամփորդելու ընթացքում Այ փառ Համակարգիչս, որի մեջ էին ընթերցանության և աշխատանքային բոլոր նյութերս, խափանվեց: Օգնության համար մտա համակարգիչների նորոգման սրահ, բայց ինձ նոր խնդիր էր սպասում: Ես չինարեն չգիտեի, իսկ սրահի աշխատակիցը՝ անգլերեն: Ո՞րն էր լուծումը: Մասնագետը համակարգիչի վրա մի ծրագիր բացեց, որի օգնությամբ անգլերեն իմ ասածը իրենք կարդացին չինարեն: Համակարգչային այդ ծրագիրը թույլ տվեց հաղորդակցվել նույնիսկ առանց միմյանց լեզու իմանալու:

Երբ աղոթում եմ Երկնավոր Հորս, երբեմն անկարող եմ լինում սրտիս մեջ եղածն արտահայտել: Շատերն են պայքարում աղոթելու համար: Սակայն Պողոս առաքյալը գրել է. «Հոգին օգնում է մեր տկարություններին, որովհետև թե ինչի համար պետք է աղոթենք ինչպես որ արժան է, չգիտենք, բայց Հոգին ինքը անբարբառ հառաչանքներով բարեխոս է լինում մեզ համար: Եվ սրտերը քննողը գիտե, թե Հոգու խորհուրդն ինչ է, որովհետև Աստծուն վայել կերպով բարեխոսում է սրբերի համար» (Հռովմ. 8. 26-27): Ի՛նչ սքանչելի է Սուրբ Հոգու պարզեւր: Հոգին հստակ հասկանում է իմ խորհուրդներն ու փափազները՝ ներդաշնակելով դրանք Հոր նպատակներին:

**Կարդա՛ր
Յոճմ. 8.18-27**

Յոգին օգնում է մեր տկարություններին, որովհետև թե ինչի համար պետք է աղոթենք ինչպես որ արժան է, չգիտենք, բայց Յոգին ինքը անբարբառ հառաչանքներով բարեխոս է լինում մեզ համար: Յոճմ. 8.26

Աղոթք - Յայր, շնորհակալ եմ Յոգու պարզի և աղոթքի առանձնաշնորհման համար: Օգնի՛ր, որ այն պահերին, երբ չգիտեմ ինչպես աղոթել, ապավինեմ Յոգուդ: Ամեն:

**Տագնապու՞մ ես աղոթելու համար:
Ապավինի՛ր Սուրբ Յոգուն և Նա քեզ կգորացնի:**

Խոցող բառեր

«Մաշված ոսկորներ, մաշված ոսկորներ»,- հեզնանքով ասում է տղան: Մեկ ուրիշը կանչում է. «Փայտիկ»: Որպես պատասխան, ես էլ կարող էի երգել. «Փայտիկներն ու քարերը կարող են ոսկորները փշրել, սակայն խոսքերն ինձ բնավ չպիտի ցավեցնեն»: Դեռ փոքր տարիքում ես գիտեի, որ այս հանգերգը ճիշտ չէ: Անխոհեմ ու դաժան այս խոսքերը երկար ժամանակ ցավեցնում էին սիրտս:

Անբարեսեր բառերի խայթոցը ծանոթ էր նաև Աննային: Նա ամուլ էր, բայց ամուսինը՝ Եղկանան, սիրում էր նրան: Իսկ նրա երկրորդ կինը՝ Փենանան, ուներ զավակներ: Հասարակության մեջ, որտեղ կնոջ արժեքը հաճախ երեխա ունենալով է պայմանավորված, Փենանայի խոսքերն ու ակնարկները վշտացնում էին Աննային: Այն աստիճան, որ նա սկսեց լաց լինել ու չուտել (Ա. Թագ. 1.6-7): Եղկանան ուզում էր մխիթարել Աննային, սակայն նրա խոսքերը, թե «Աննա՛, ինչու՞ ես լալիս, ինչու՞ չես ուտում և ինչու՞ է հոգիդ ալեկոծվում, մի՞թե ես քեզ համար տասը որդուց լավ չեմ» (Հմ.8), դարձյալ ցավ էին պատճառում: Աննայի նման մեզանից շատերն են հաճախ չար կամ անխոհեմ բառերից վիրավորվում: Բոլորս էլ գորուծյան ու բժշկության համար կարող ենք դիմել մեզ սիրող ու կարեկցող Աստծուն (Մաղմոս. 27.5.12-14): Նա կուրախանա մեզ համար՝ մեզ ասելով սիրո ու շնորհքի խոսքեր:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ ենք, որ Քեզանից ստանում ենք բժշկություն և հույս: Օգնի՛ր, որ կարողանանք մեր ցավերի մասին Քեզ հայտնել և ուշադիր լինել մեր խոսքերին: Տու՛ր մեզ համբերություն և խոսելուց առաջ մտածելու իմաստնություն: Ամեն:

Մարդիկ ցավ են պատճառում մեզ:
Ուստի կարիք ունենք Աստծո շնորհալի բժշկության:

Կարդա՛

Ա Թագ. 1.1-6

Մարդիկ կան, որ իրենց խոսքով խոցում են թրի պես, բայց իմաստունների լեզուները բուժում են: Առ. 12.18

Մեզ ճանաչող Փրկիչը

Մեքենայի հետևի աթոռին նստած որդիս հարցրեց. «Հայրի՛կ, ժամը քանի՞սն է»: «5 անց 30», - ասացի ու շատ լավ գիտեի, թե որը պիտի լիներ նրա հաջորդ խոսքը: «Ո՛հ, 5 անց 28 է»: Եվ տեսա տղայիս դեմքի հաղթական արտահայտությունը, որ սխալ էր բռնել: Ես էլ էի մտովի հրճվում, երեխային լավ ճանաչելու ուրախությունը միայն ծնողները կարող են զգալ:

Ցանկացած ուշադիր ծնողի նման ես լավ եմ ճանաչում զավակներին: Գիտեմ՝ ինչ են ասելու, երբ արթնացնում եմ, գիտեմ՝ ինչ են ուզելու ուտել: Գիտեմ նրանց անթիվ հետաքրքրությունները, ցանկություններն ու նախասիրությունները: Այդուամենայնիվ, ես դժվար թե կատարելապես ճանաչեմ նրանց ներսից ու դրսից, ինչպես որ Տերն է մեզ ճանաչում:

Հովհ. 1-ում հպանցիկ մի ակնարկ կա այն մասին, թե ինչպես է ճանաչում Հիսուսը իր աշակերտներին: Երբ Նաթանայելը, որին Փիլիպպոսը ստիպել էր հանդիպել Հիսուսին, մոտեցավ, Հիսուսն ասաց. «Ահա իսկական իսրայելացի, որի մեջ նենգություն չկա»: Նաթանայելը զարմացած հարցրեց. «Որտեղի՞ց ես ինձ ճանաչում»: Հիսուսը պատասխանեց, թե նրան տեսել է, երբ դեռ թզենու տակ նստած էր (Հմ. 48):

Հիսուսը մեզանից յուրաքանչյուրին այսպես գիտե. մտերմիկ, ամբողջովին ու կատարելապես, ինչպես կուզենանք, որ Նա իմանա: Նա մեզ ընդունում է այնպես, ինչպես որ ենք և հրավիրում է ոչ միայն իր հետևորդները լինել, այլև իր սիրելի բարեկամները (Հմ. 15.15):

Աղոթք - Տեր, շնորհակալ եմ, որ ինձ լավ ես ճանաչում, սիրում ես, ներում և ընդունում, ինչպես որ եմ: Նաև շնորհակալ եմ, որ ինձ հրավիրում ես Քեզ հետևելու: Ամեն:

Հիսուսը մեզ ճանաչում է այնպես, ինչպես մենք ենք ուզում:

Կարդա՛ր
Հովհ. 1.43-51

Նաթանայելը զարմացած հարցրեց. «Որտեղի՞ց ես ինձ ճանաչում»: Հովհ. 1.46

Ցուպի պատկերի դասը

Բարեկամ-խորհրդատուս թղթի վրա մի ցուպ նկարեց և այն կոչեց ներքին կամ սեփական անձ: Ապա կես մատնաչափ մի ուրվագիծ արեց շուրջը և այն անվանեց հանրային անձ: Այդ երկու պատկերները՝ սեփականի ու հանրայինի միջև եղած տարբերությունը ներկայացնում է մեր ամբողջականություն աստիճանը:

Պողոսը նամակներ գրեց Կորնթոսի եկեղեցուն, և Հիսուսին նման լինելու համար սեր և կարգապահություն հյուսեց իր տված ուսուցման մեջ: Նամակի վերջում նա իր խոսքն ուղղեց իրեն դատապարտողներին, որոնք ասել էին, թե իր նամակները ծանր են ու խիստ, բայց նրա մարմնավոր ներկայությունը թույլ է (Բ Կորնթ.10.10): Պողոսն ուներ ակադեմիական խիզախություն, սակայն խոսեց պարզ, հասկանալի լեզվով: «Եվ իմ խոսքն ու քարոզչությունը ոչ թե մարդկային իմաստության համոզիչ խոսքերով եղան, այլ Հոգու և զորության ապացուցումով» (Ա.Կորնթ. 2.4): Նրա գրած հաջորդ նամակը ցույց տվեց իր ամբողջականությունը. «Այդպիսին թող այս բանը միտք անի, թե ինչպիսին որ հեռվից խոսքով մեր նամակներով ենք, այնպիսին էլ մոտիկից՝ գործով ենք» (Բ. Կորնթ. 10.11):

Պողոսն իրեն ներկայացրեց որպես նույն անձը հանրության մեջ, ինչպես որ կար իր սեփական կյանքում: Իսկ մեր պարագայում ինչպես է:

Աղոթք - Սիրելի՛ Յայր, օգնիր, որ Քեզ համար իմ անձնական կյանքով լինեմ այնպես, ինչպես հանրության մեջ եմ: Ամեն:

Ունենք մեր սեփական ու հանրային կյանքը, բայց Աստծուն պատվելու ենք այդ երկուսի ամբողջականության մեջ:

**Կարդա՛ր
Բ Կորնթ. 10.1-11**

Այդպիսին թող այս բանը միտք անի, թե ինչպիսին որ հեռվից խոսքով մեր նամակներով ենք, այնպիսին էլ մոտիկից՝ գործով ենք: Բ. Կորնթ. 10.11

Ազատել չարագործներին

«Հերոս» կատակերգական գիրքը բոլորին է ծանոթ: Դրա հիման վրա միայն 2017-ին նկարահանված վեց կինոնկարներ միլիոնավոր դուրաներ ապահովեցին: Ինչո՞ւ են մարդկանց գրավում մեծ գործողություններով լի կինոնկարները: Հնարավոր է՝ այն պատճառով, որ դրանք մասամբ նման են Աստծո մեծ պատմությունը: Այդ կինոնկարներում կա չարագործ, կա հերոս, ազատագրման կարիք ունեցող ժողովուրդ, և կան շատ հետաքրքիր գործողություններ: Այս պատմություն մեջ մեծագույն չարագործը, մեր թշնամին է սատանան: Սակայն կան նաև այլ «փոքր» չարագործներ: Օրինակ Դանիելի գրքում նրանցից մեկը հանրահայտ Նաբուգոդոնոսոր թագավորն է, որը որոշեց սպանել բոլոր նրանց, որոնք մերժեցին պաշտել իր հսկա արձանը (Դան.3.1-6): Երբ երեք հրեա քաջ գործակատարներ մերժեցին (Հմ.12-18), Աստված հնարամիտ մի արարքով նրանց փրկեց ու նրանք, լինելով կրակի հնոցում, չայրվեցին (Հմ. 49-50):

Տեսնելով այդ սքանչելի դեպքը՝ Նաբուգոդոնոսորի սիրտը սկսեց փոխվել, և նա ասաց. «Օրհնյալ է Սեղբակի, Միսակի և Աբեղնագովի Աստվածը, որն ուղարկեց իր Հրեշտակին և փրկեց իր ծառաներին» (Հմ. 95): Հետո սպառնաց կորստյան մատնել բոլոր նրանց, ովքեր սխալ բան կանեն Աստծո դեմ (Հմ.96)՝ տակավին չհասկանալով, որ Աստծո փրկություն պատմության մեջ մեր հերոսը՝ Տեր Հիսուսը, ձեռք է մեկնում բոլորին, ովքեր ազատվել են ուզում, ներառյալ նաև մեր մեջ եղող չարագործները:

Աղոթք - Տե՛ր, գիտեմ, որ ես և շատերը օգնության և ազատվելու կարիք ունենք: Օգնի՛ր դիմելու Քեզ, որ մեզ ազատես: Ամեն:

Տեր Հիսուսն աղոթեց Իրեն հալածողների համար: Մենք էլ նույն բանը կարող ենք անել:

Կարդա՛ր
Դանիել 3. 26-30

Օրհնյալ է Սեղբակի, Միսակի և Աբեղնագովի Աստվածը, որն ուղարկեց իր Հրեշտակին և փրկեց իր ծառաներին: Դան. 3.95

Մեր տկարության մեջ

Թեև էնն Շիֆ Միլլերը մահացավ 1999-ին, 90 տարեկան հասակում, սակայն գրեթե մահամերձ էր նաև 1942թվականին, երբ վիժման հետևանքով նրա մոտ արյան վարակ էր սկսվել, և բուժման բոլոր փորձերը ապարդյուն էին թվում: Մինչև որ նույն հիվանդանոցում բուժվողներից մեկը պատմեց, որ իր ծանոթ գիտնականը մի հրաշագործ դեղ է ստեղծել: Էննի բժշկին նույնիսկ կառավարական ճնշումներով հաջողվեց այդ դեղից ստանալ իր հիվանդի համար: Պենիցիլինը մեկ օրում իջեցրեց էննի ջերմությունը և նրան վերադարձրեց կյանք:

Կարդա՛
Հռոմ. 8.1-2, 10-17

Այսպես էլ հոգին օգնում է մեր տկարություններին:
Հռոմ. 8.26

Բոլոր մարդ արարածների վրա մահը տարածվեց, որովհետև բոլորը մեղանչեցին (Հռոմ. 5.12): Միմիայն Հիսուսի մահն ու հարությունը և Սուրբ Հոգու զորությունը մեզ ազատեց մեղքի ու մահվան օրենքից (8.1-2): Սուրբ Հոգին հնարավոր է դարձնում, որ Աստծո մեջ մենք առատ կյանք ունենանք աշխարհի վրա և հավիտենականության մեջ (Հմ.3-10): «Եթե Հիսուսին մեռելներից հարություն տվողի հոգին բնակվում է ձեր մեջ, ապա Քրիստոսին մեռելներից հարություն տվողը ձեր մահկանացու մարմիններն էլ կկենդանացնի իր Հոգով, որ բնակվում է ձեր մեջ» (Հմ. 11):

Երբ քո մեղավոր բնույթը սպառնում է կյանքդ խլել, նայի՛ր Հիսուսին՝ քո փրկության աղբյուրին և զորացի՛ր Իր Հոգու զորությամբ (Հմ.11-17): «Այսպես էլ հոգին օգնում է մեր տկարություններին» և «բարեխոս է լինում մեզ համար» (Հմ.26-27):

Աղոթք - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ Որդուդ և Սուրբ Հոգու պարգևի համար, որ կարողություն ե տալիս իսկական կյանքը վայելելու: Ամեն:

Տկա՞ր ես: Վստահի՛ր Հոգու ներկայությանը և Նրա տված զորությանը:

Ներկա է փոթորիկներում

Մեր եկեղեցուն պատկանող բազմանդամ ընտանիքներից մեկի տանը հրդեհ բռնկվեց, որը մարդկային կյանքեր խլեց: Հայրն ու ավագ որդին փրկվեցին, հայրը դեռ հիվանդանոցում էր, երբ նրա կնոջը, մորն ու երկու կրտսեր զավակներին հողին հանձնեցին: Դժբախտաբար, այսպիսի սրտակեղեք դեպքեր շատ են պատահում: Ու ամեն անգամ էլ մի հարց է հնչում. «Ինչո՞ւ են բարի մարդկանց վատ բաներ պատահում»:

Հարց, որն այդպես էլ անպատասխան է մնում:

45-րդ սաղմոսում սաղմոսերգուի առաջադրած ճշմարտությունը հաճախ է նշվում. «Աստված ապավենն ու զորությունն է մեր և մեր օգնականը մեզ հասած խիստ նեղությունների մեջ» (Հմ.2):

Սաղմոսի 4-րդ համարի ներքո նկարագրված վիճակները աղետալի են. «Դղրդացին ու ալեկոծվեցին ջրերը նրա, լեռները դողացին նրա սաստկությունից»:

Մենք էլ վշտանում ենք անբուժելի հիվանդությունյան կամ սիրելի մարդու մահվան լուրից, տանջվում ենք տնտեսական դժվարություններից և այլն:

Սխալ է մտածել, թե նեղությունների առկայությունը Աստծո բացակայություն է նշանակում, որովհետև Աստվածաշնչի ճշմարտությունը հակադարձում է դրան. «Մեզ հետ է Զորությունների տերը, Հակոբի Աստվածն ապավենն է մեր» (Հմ.8):

Աղոթք - Հայր, օգնիր, որ վստահեմ Քո խոսքի ճշմարտությանը, երբ դժվարանամ զգալ Քո ներկայությունն ու հոգածությունը: Ամեն:

Հարցնում ես Աստծո ներկայության մասին:
Վստահիր, Աստված միշտ քեզ հետ է:

Կարդա՛ր
Սաղմոս 45

Մեզ հետ է Զորությունների տերը, Հակոբի Աստվածն ապավենն է մեր:
Սաղմ. 45.8

Վերացնել նախանձը

Տրանսիացի հոչակավոր գծանկարիչ Էդգար Դեգան հայտնի է աշխատանքի մարդկանց և բալետի պարուհիների իր նկարներով, բայց քչերը գիտեն իր բարեկամ ու մրցակից հանճարեղ էդուարդ Մանեի հանդեպ տածած նրա նախանձի մասին: Դեգան Մանեի մասին ասել է. «Նրա արած ամեն բանը միշտ էլ շուտով գնահատվում է, իսկ ես անվերջ տանջվում եմ և էլի ճիշտ չեմ կարողանում անել»: Հետաքրքիր զգացում է նախանձ ասվածը, որը Պողոս առաքյալը դասում է ամենավատ հատկությունների շարքում. «Նրանք լցված են ամեն անիրավություններով՝ պոռնիկությամբ, անզգամություններով, ազահություններով, չարություններով, նախանձով, մարդասպանություններով, կրքով, նենգություններով, չար բարքով» (Հռոմ. 1.29):

Ըստ Պողոսի՝ նախանձն առաջանում է անխոհեմ մտածելակերպից: Նա գրում է. «Եվ քանի որ իրենց մտքի մեջ Աստծուն ունենալը չընտրեցին, Աստված նրանց մատնեց անարգ մտքերի, որ անվայել բաներ կատարեն» (Հմ.28): Պողոսը գրում է. «Ձեր անդամները մի՛ հանձնեք մեղքին, այլ ձեր անձերը ներկայացրեք Աստծուն» (Հռոմ. 6.13): Մեկ ուրիշ նամակում նա գրում է. «Ամեն մեկը թող իր գործը կշռի, և ապա միայն իր անձի նկատմամբ պարծանք կունենա, ոչ թե ուրիշի նկատմամբ» (Գաղ. 6.4):

Շնորհակալ լինենք Աստծուն՝ իր տված օրհնությունների համար, ոչ միայն սովորական բաների, այլև իր շնորհքի ազատության համար: Տեսնելով մեր աստվածատուր պարզևները՝ մենք բավարարություն ենք գտնում:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, իմ ուշադրությունը այլոց տաղանդներից ու շնորհներից դարձրո՛ւ դեպի Քեզ, իմ հանդեպ Քո միակ ճշմարիտ ու առատաձեռն սիրուն: Ամեն:

Չմոռանա՛նք: Աստված մեզ տվել է տաղանդներ ու օրհնություններ:

Կարդա՛ ՅՈՒՆ. 6.11-14

Սակայն ամեն մեկը թող իր գործը կշռի, և ապա միայն իր անձի նկատմամբ պարծանք կունենա, ոչ թե ուրիշի նկատմամբ: Գաղ. 6.4

Աչքակապուկ

Միտոս սկսեց արագ բաբախել, երբ զգացի հինգ տարեկան զարմիկիս մոտեցող ոտնաձայները: «Ահա, գտնելու է», - մտածում էի: Քայլերը մոտենում էին. 5 քայլ, երեք, երկու: Ապա՝ գտա՛: Աչքակապուկ: Շատերը քաղցր հիշողություններ ունեն այս խաղի հետ կապված, թերևս բոլորն են մանկություն տարիներին խաղացել, երբ դեռ կյանքի հորձանուտում լինելու վախը ենթագիտակցորեն ստիպում է փախչել, թաքնվել: Մարդիկ կարող են չսիրել իրենց տեսածը:

Որպես աշխարհի զավակներ՝ մենք հակված ենք խաղալ այն խաղը, որն իմ բարեկամն անվանում է Աստծո և մարդ-

կանց միջև «խանգարված աչքակապուկ»: Այդ խաղում ձևացնում ենք, թե թաքնվում ենք, որովհետև երկու դեպքում էլ Նա տեսնում է ամեն բան՝ և մեր խառնաշփոթ մտքերը, և սխալ ընտրությունները: Մենք դա գիտենք, թեև սիրում ենք ձևացնել, թե Նա իսկապես չի կարող տեսնել: Իսկ Աստված շարունակում է փնտրել և կանչում է՝ ասելով. «Դու՛րս եկ: Ուզում եմ տեսնել քեզ, նույնիսկ քո ամոթալի մասերդ»:

Սա այն նույն ձայնի արձագանքն է, որ կանչեց առաջին մարդուն, երբ նա վախենալով թաքնվել էր Իրենից: «Ու՛ր ես» (Ծննդ. 3.9): Հարցումի պես ջերմ հրավեր լավեց . «Դու՛րս արի թաքնվածդ տեղից, սիրելի՛ զավակ, և վերահաստատի՛ր հարաբերությունդ Ինձ հետ»: Այս մեկը կարող է շատ վտանգավոր և նույնիսկ անբարոյական թվալ: Սակայն այնտեղ՝ մեր Հոր ապահով հոգատարություն մեջ բոլորս էլ, անկախ մեր արածից ու չարածից, կարող ենք գտնվել ու սիրվել:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, մեզ տեսնում և լավ ճանաչում ես: Գիտես մեր հանցանքներն ու թուլությունները: Բայց կանչում ու փնտրում ես մեզ: Շնորհակալ ենք:

Նա, որ մեզ շատ լավ գիտե, սիրում է առանց պայմանի:

Կարդա՛
Ծննդոց 3.1-10

Տեր Աստված
կանչեց Ադամին ու
ասաց նրան. «Ո՞ւր
ես»: Ծնն. 3.9

Տերն ուրախանում է

Վերջերս տատս ինձ էր ուղարկել հին լուսանկարներով մի ծրար: Նայում էի դրանք, և մի լուսանկար գրավեց ուշադրությունս: Ես՝ երկու տարեկան մանուկ վառարանի մի կողմում նստած էի, իսկ մյուս կողմում հայրս՝ ձեռքը դրած մորս ուսին, միասին ուրախ ու սիրով ինձ են նայում:

Լուսանկարը քորոցով ամրացրի զարգասեղանիս, որ ամեն առավոտ տեսնեմ: Որովհետև այն իմ հանդեպ ծնողներիս սիրո գեղեցիկ արտահայտություն էր: Սակայն ճշմարտությունն այն է, որ նույնիսկ բարի ծնողների սերը կատարյալ չէ Աստծո սիրո համեմատ: Մարդկային սերը երբեմն կարող է ձախողվել, մինչդեռ Աստծո սերը բնավ չի ընկնում: Ու Աստծո խոսքի համաձայն՝ Աստված ինձ նայում է այնպես, ինչպես ծնողներս էին նայում այն լուսանկարում:

Այս սերը Սոփոնիա մարգարեն ապշեցուցիչ ձևով է նկարագրում: Նա Աստծուն պատկերում է որպես Իր ժողովրդի վրա երգելով ուրախացող, այն դեպքում, երբ նրանք այդ սերը չէին վաստակել, ձախողվել էին Իրեն հնազանդվելու և միմյանց հետ կարեկցաբար վարվելու պարտականություններում:

Բայց Սոփոնիան խոստանում է, որ ի վերջո Աստծո սերը գերակշռելու է և Նա պիտի վերացնի նրանց պատիժը (Սոփ. 3.15), պիտի ուրախանա նրանց համար (Հմ.17): Նա Իր ժողովրդին պիտի հավաքի Իր ձեռքում, տուն պիտի բերի և նորոգի իր սիրով:

Դա մի սեր է, որի մասին մտածելու ենք ամեն առավոտ:

Աղոթք - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ Քո ներման ու մեր հանդեպ ունեցած հավատարիմ սիրո համար: Ամեն:

**Աստված երգելով ուրախանում է մեզ համար
Իր ունեցած սիրով:**

Կարդա՛ր
Սուփոնյա 3.14-20

Աստված...
ուրախություն
կբերի քեզ:
Սոփ. 3.17

Ուրախությամբ խաղալ

Մեր որդիներից մեկը՝ Բրայընը, միջնակարգ դպրոցում բասկետբոլի մարզիչ է: Մի տարի, երբ թիմը հաջողությամբ առաջ էր ընթանում Վաշինգտոնի նահանգի բասկետբոլի մրցաշարում, քաղաքի բնակիչները բարի մտադրությամբ հարցրին. «Այս տարվա մրցանակը դու՞ք եք շահելու»: Թե՛ խաղացողները, և թե՛ մարզիչը մի տեսակ ճնշվեցին այդ հարցից, և Բրայընը այսպիսի նշանաբան որդեգրեց. «Խաղալ ուրախությամբ»:

Մտածեցի Պողոսի՝ եփեսոսցիներին ասած վերջին խոսքերի մասին, թե «Ուրախությամբ կատարեմ իմ ընթացքը» (Գործք 20.24): Նրա նպատակն էր ամբողջացնել Հիսուսի՝ իրեն տված պարտականությունները: Ես ինձ համար նշանաբան ու աղոթք եմ դարձրել. «Թող որ վազեմ և ուրախությամբ ավարտեմ մրցումը» բառերը: Կամ ինչպես որդիս է ասում. «Թող որ ուրախությամբ խաղամ»: Ի դեպ, Բրայընի խումբը շահեց այդ տարվա մրցանակը: Բոլորս էլ ունենք տխրելու պատճառներ. դրանք կարող են լինել աշխարհից ստացված լուրերը, կյանքի ամենօրյա ղեկարությունները կամ մեր առողջական խնդիրները: Այնուամենայնիվ, եթե մենք խնդրենք, Աստված կարող է մեզ տալ այդ վիճակները հաղթահարող ուրախություն: Կարող ենք ունենալ այն, ինչ Հիսուսն անվանեց. «Իմ ուրախությունը» (Հովհ. 15.11): Ուրախությունը Հիսուսի Հոգու պտուղն է (Գաղ. 5.22): Ուստի մենք ամեն առավոտ օգնություն ենք խնդրելու, որ կարողանանք «ուրախությամբ խաղալ»: Աստվածաբան Ռիչարդ Ֆոսթերն ասել է. «Աղոթելը փոխվել է նշանակում: Դա մեծ շնորհ է: Ի՛նչ լավ է, որ Աստված միջոց է հայթայթում, որպեսզի մեր կյանքը կարողանա պարուրվել ուրախությամբ»:

Աղոթք - Երկնավոր Հայր, հայացքս քեզ եմ դարձնում: Շնորհակալ եմ, որ կարող եմ վստահել Քո հավատարմությանը: Խնդրում եմ ինձ Քո ուրախությանը միացրու: Ամեն:

Հուսահատվա՞ծ ես: Աստված քեզ կտա ուրախություն:

Կարդա՛ր
Գաղ. 5.22-26

Բայց Հոգու
պտուղն է՝ սեր:
Գաղ. 5.22

Ունայնությունը՝ կրակի վրա

1497 թվականի փետրվարին իտալացի վանական Զիրոլամա Սավոնարոլան մի ծրագիր սկսեց: Որպես նախապատրաստություն՝ ինքն ու իր հետևորդները մի քանի ամիս հավաքում էին առարկաներ, որոնք իրենց կարծիքով մարդկանց մղում են մեղք գործելու և կրոնական պարտականություններն անտեսելու: Դրանք արվեստի գործեր էին, հագուստներ, զարդեր, գործիքներ: Որոշված օրը հավաքված հազարավոր ունայն համարված առարկաները նետեցին Ֆլորենցիայի հրապարակում վառված կրակի մեջ: Այս դեպքը պատմության մեջ մնաց «Ունայնությունների կրակ» անունով:

Կարդա՛ր
Մատթեոս 5.21-30

Իմ մեջ մաքուր սիրտ հաստատիր, Աստված: Սաղմ. 50.12

Հնարավոր է, որ Սավոնարոլան այս ծայրահեղ արարքի համար ներշնչված լիներ լեռան վրա Քրիստոսի քարոզի ցնցող հայտարարություններից: Երբ Հիսուսն ասում էր. «Եթե քո աջ աչքը քեզ գայթակղեցնում է, հանի՛ր այն ու քեզանից դեն գցի՛ր: Եվ եթե քո աջ ձեռքը գայթակղեցնում է քեզ, կտրի՛ր այն ու քեզանից դեն գցի՛ր» (Մատթ. 5.29-30): Հիսուսի խոսքը տառացիորեն մեկնաբանելու դեպքում մենք կկորցնենք պատգամի իմաստը: Ամբողջ քարոզը դաս է այն մասին, որ մեր վարմունքը, արտաքին շեղումներն ու փորձությունները պարսավելու փոխարեն հարկավոր է թափանցել մակերեսից ներքև, ավելի խորը, կենտրոնանալ մեր սրտի վրա:

Ունայնությունների կրակը մեծ հնչեղություն ստացավ, սակայն այդ մարդկանց սրտերը չփոխվեցին: Որովհետև միայն Աստված կարող է սրտերը փոխել: «Իմ մեջ մաքուր սիրտ հաստատի՛ր, Աստված» (Սաղմոս. 50.12):

Աղոթք - Սիրելի՛ Տեր, ինձ շնորհք տու՛ր, որպեսզի կարողանամ սիրտս Քեզ հանձնել ու կյանքիս ունայնությունները Սուրբ Հոգու մաքրող կրակի մեջ նետել: Ամեն:

Կարմունքի ու ցրվածության մեր ունայնությունները նետենք Սուրբ Հոգու կրակի մեջ:

Քո մահվան գովեստը

Ներկա էի հավատացյալ մի կնոջ հուղարկավորությանը և հուզվել էի: Ոչ նրա կյանքն էր առանձնապես տպավորիչ, ոչ էլ ինքն էր իր եկեղեցուց դուրս, բարեկամների ու հարեանների մեջ շատ հայտնի: Սակայն նա սիրեց Հիսուսին, իր յոթ զավակներին ու քսանհինգ թոռներին և ուրախությամբ մատուցեց իր ծառայությունը:

Ժողովողն ասում է. «Խնջույքի տուն գնալուց լավ է սգո տուն գնալը» (Հմ.3): «Իմաստունի սիրտը սգո տանն է» (Հմ. 5): «Նյու Յորք Թայմսի» լրագրող Դեյվիդ Բրուքսն ասում է, որ երկու տեսակ առաքինություններ կան. նրանք, որ մեր անձնական տվյալների ցանկում են լավ երևում և նրանք, որ կուզենաս՝ ասվեն հուղարկավորությանդ ժամանակ: Երբեմն այդ երկուսը համընկնում են, թեև հաճախ միմյանց լրացնելով: Հանգուցյալը չուներ իր կյանքի անձնական տվյալները, բայց նրա որդիները վկայեցին, որ նա «Առակաց 31-ի» աստվածավախ ու առաքինի կնոջ մարմնացումն է եղել: Նա է ներշնչել իրենց, որ սիրեն Հիսուսին և ուրիշների մասին հոգան: Ինչպես Պողոսն ասաց. «Ինձ նմանվո՛ղ եղեք, ինչպես ես՝ Քրիստոսին» (Ա.Կորնթ. 11.1): Այսպիսով կնոջ որդիները մեզ առաջարկում էին իրենց մոր կյանքն ընդօրինակել, ինչպես որ նա էր ընդօրինակել Հիսուսի կյանքը:

Ի՞նչ պիտի ասվի քո մասին թաղմանդ ժամանակ: Ի՞նչ ես ուզում, որ ասվի: Շատ ուշ է այդ գովեստին արժանանալու համար: Հիսուսո՛վ հանգստացիր: Նրա տված փրկությունը կազատի մեզ, որպեսզի ապրենք այն բանի համար, ինչը կարևոր է:

Աղոթք - Հայր, քաջություն տու՛ր ինձ՝ ապրելու այն բանի համար, ինչը կարևոր է: Ամեն:

Կյանքդ այնպես ապրիր, որ քո գովեստը լեցուն լինի առաքինություններով:

Կարդա՛ր Ժողովող 7.1-6

Բարի անունը լավ է հոտավետ յուղից, և մահվան օրը՝ ծննդյան օրից: Ժող. 7.2

Պարանը քանդել

Քրիստոնեական մի կազմակերպության առաքելությունն է խրախուսել ներման բուժիչ հույությունը: Նրանց ծրագրերից մեկում մի շատ խոստուն նկար կա. հանցագործն ու այն մարդը, որի դեմ նա գործել է, պարանով կապված են թիկունք թիկունքի: Միայն նա, ում դեմ կատարվել է հանցանքը, իրավունք ունի քանդել պարանը: Առանց ներման ու առանց պարանը քանդելու հանցագործը չի կարող ազատվել:

Իր արած սխալի համար զղջումով մեզ մոտեցողին ներում չնորհելը ազատ արձակելու գործընթացի սկիզբն է: Ծննդոցի մեջ տեսնում ենք քսան տարի իրարից բաժանված եղբայրներին՝ Հակոբին ու Եսավին, որոնց վեճի առարկան իրենց հոր անդրանիկ զավակը լինելն էր: Այդքան երկար ժամանակ անց Աստված Հակոբին պատվիրեց իր տուն վերադառնալ (Ծնն. 32.9): Հակոբը հնազանդվեց, բայց նյարդայնացած էր: Նա նախ իր եղբայր Եսավին կենդանիներ ուղարկեց որպես ընծա (Հմ. 32.13-15): Երբ հանդիպեցին իրար, Հակոբը յոթ անգամ խոնարհվեց Եսավի առաջ (Հմ. 33.3): Պատկերացրեք նրա զարմանքը, երբ Եսավը վազեց ու գրկեց նրան, և երկուսն էլ լացին իրենց հաշտության համար (Հմ.4): Դո՞ւ էլ ես ներված չլինելու, տխրության, վախի կամ ամոթի զգացումով տարված: Իմացի՛ր, որ Աստված Իր Որդու և Հոգու միջոցով կարող է քեզ ազատել, եթե իր օգնությունը խնդրես:

Աղոթք - Տե՛ր Աստված, ուզում ես, որ մենք մեր ընտանիքի անդամների ու բարեկամների հետ ներդաշնակությամբ ապրենք: Սակայն հաճախ մենք ձախողվում ենք: Օգնի՛ր, որ ուրիշներին սիրենք մեր անձի նման: Ամեն:

Կարդա՛ ծննդոց 33. 1-11

Եսավն ընդառաջ գնաց նրան, գրկեց և համբուրեց, փաթաթվեց վզին և համբուրեց նրան: Նրանք երկուսով լաց եղան: Ծնն. 33.4

Մեկի հանդեպ հանցա՞նք ես գործել:
Նրա ներումը խնդրի՛ր, որպեսզի ազատվես:

Երկնային շեղումներ

Մեզ համար դժվար է, երբ լսում ենք «ոչ» կամ «ոչ հիմա», հատկապես երբ զգում ենք, որ Աստված մեր առջև դուռ է բացել ուրիշներին ծառայելու համար: Իմ հովվական ծառայության առաջին տարիներին երկու նման առիթ է ներկայացել ինձ: Մտածեցի, որ ձիրքերս ու կարողություններս հարմար են այդ եկեղեցիների կարիքների համար, բայց այդ երկուսի դռներն էլ փակվեցին իմ առաջ: Այդ երկու հուսախաբուցություններից հետո, սակայն, մեկ այլ հնարավորություն էլ եղավ, և ես ընտրվեցի: Ու 13 տարի հովվական ծառայություն մատուցեցի:

Գործք 16-ում Աստված երկու անգամ Պողոսին ու իր ընկերներին տարբեր տեղեր առաջնորդեց: Նախ «Սուրբ Հոգուց արգելվեց Ասիայում Աստծո խոսքը խոսել» (Հմ.6): Հետո «Երբ Մյուսիայի կողմերը եկան, ջանում էին դեպի Բյութանիա գնալ, բայց Հոգին նրանց թույլ չտվեց» (Հմ.7): Ինքը չգիտեր, բայց Աստված ուրիշ ծրագրեր ուներ, որոնք հարմար պիտի լինեին իր գործի ու իր գործավորների համար: Նախկին ծրագրերի համար ասված ոչ-ը նրանց համար հասկանալի եղավ ու վստահություն տվեց, որ Տերն է իրենց հրավիրել (Հմ.9-10):

Մեզանից շատերն են վշտացել ցավալի կորստի, կամ նպատակը չիրականանալու համար: Թեև այդ պահին ծանր են թվում դրանք, սակայն ժամանակը ցույց է տալիս, որ դրանք երկնային ծրագրեր են, որ Տերն է իր շնորհքով օգտագործում մեզ՝ հասցնելով մեզ այնտեղ, որտեղ ինքն է ուզում:

Աղոթք - Հայր, փառավորում եմ քեզ, որ Քո իմաստնությունը լավագույն ձևով ծրագրում ես իմ կյանքը: Շնորհակալ եմ, որ ինձ պահում ես Քո տված շեղումներից: Ամեն:

**Շեղումները պատահում ու պատահելու են:
Սակայն Աստծուն վստահիր:**

**Կարդա՛ր
Գործք Առ. 16. 6-10**

...ջանում էին դեպի Բյութանիա գնալ, բայց Հոգին նրանց թույլ չտվեց:
Գործք Առ. 16.7

Երբ շնածկները չեն կծում

Արձակուրդին զննացել էինք ձկնարան, որտեղ մարդիկ կարող են մոտիկից տեսնել ու շոյել հատուկ տակառի մեջ դրված փոքր շնածկները: Երեխաներս ոգևորված էին, բայց ես անհանգիստ էի: Սպասարկող պատասխանատուին հարցրի, թե այդ շնածկները երբևէ երեխաների մատները կծե՞ն են: Նա բացատրեց, որ շնածկները քիչ առաջ են կերակրվել, նույնիսկ հավելյալ անունդ են ստացել: Հետևաբար նրանք չպետք է կծեն, որովհետև քաղցած չեն:

Շնածկների մասին այդ օրը սովորածս տրամաբանական էր: Առակների համաձայն. «Կուշտ մարդն արհամարհում է խորիսխն ու մեղրը, բայց քաղցածի համար դառը բանն էլ քաղցր է թվում» (Առ. 27.7): Քաղցը նույնիսկ որոշում ընդունելու կարողությունը կարող է թուլացնել: Մեզ համոզում է առնել ստամոքսը լցնելու որևէ բան, եթե նույնիսկ դրա պատճառով մեկ ուրիշը կծի մեզ:

Աստված շատ ավելին է ուզում մեզ համար, քան ախորժակից կախված կյանքն է: Նա ուզում է, որ մենք Քրիստոսի սիրով լցվենք, որպեսզի մեր արած ամեն բանը բխի Իր տված խաղաղությունից ու կայունությունից: Գիտակցությունը, թե մենք առանց պայմանի սիրված ենք, մեզ վստահություն է տալիս և լավագույնը ընտրելու կարողություն՝ կյանքի քաղցրությունները՝ հաջողությունները, ունեցվածքն ու հարաբերություններն ընտրելու ճանապարհին:

Միայն Հիսուսի հետ հարաբերությունը մեզ կարող է տալ իսկական զոհացում: Թող որ վայելենք մեր հանդեպ Իր ունեցած սքանչելի սերը, որպեսզի «լցվենք Աստծու ամեն լիությունով» (Եփ. 3.19) մեր և ուրիշների բարիքի համար:

Աղոթք - Տեր, խնդրում եմք, հազեցրու՛ մեզ և լցրու՛ Քո օրհնություններով, որոնց կարոտ եմք միշտ: Ամեն:

Նրանք, որոնք Տեր Հիսուսին են տեսնում որպես Կենաց Չափ, բոլորովին չպիտի անոթնան:

**Կարդա՛ր
Առակներ 27.1-10**

Կուշտ մարդն արհամարհում է խորիսխն ու մեղրը: Առ. 27.7

Նոր ոսպնյակի միջոցով

Մայրս ասաց. «Հիանալի կլինի նայել ծառին ու միայն ազոտ կանաչի փոխարեն տեսնել յուրաքանչյուր տերևը»: Այդ ժամանակ ես 18 տարեկան էի և նեղվում էի լավ չտեսնելուս համար: Սակայն ակնոցը փոխեց իմ կյանքը, ամեն ինչ լավ էր երևում, ազոտ պատկերները պայծառացել էին:

Երբ Աստծո խոսքն եմ կարդում, որոշ գրքեր այնպես եմ տեսնում, ինչպես ծառն առանց ակնոցի: Բայց մանրամասներ տեսնելը կարող է ձանձրալի թվացող մի հատվածի գեղեցկությունը հայտնաբերել:

Այդպես պատահեց, երբ Ելից Գիրքն էի կարդում: Իսրայելի ժողովրդի մեջ Իր ժամանակավոր բնակություն տուն տապանակը շինելու համար Աստծո տված ուղղությունները կարող են ազոտ ու ձանձրալի մանրամասներ թվալ: Սակայն ուշադրությունս սևեռվեց 25-րդ գլխի վերջին հատվածին, որտեղ Աստված ցուցմունքներ է տալիս աշտանակի համար: «Այն պետք է մաքուր ոսկուց պատրաստված լինի, քանդակազարդ, բուռն, ճյուղերը, սկահակները, զնդիկներն ու շուշանաձև ծաղիկները միաձուլ» (Հմ.31) և «սկահակները պետք է ընկուզաձև լինեն» (Հմ.34):

Պողոսը գրել է. «Աշխարհի ստեղծումից ի վեր աներևույթ բնությունը, իր մշտնջենական գորությունն ու աստվածությունը տեսնվում են ստեղծվածների միջոցով» (Հռ.1.20): Աստծո գեղեցկությունը տեսնելու համար երբեմն պետք է նոր ոսպնյակի միջոցով նայել ստեղծագործությանը:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք, որ ինձ ստեղծում ու արժևորում ես Քո պատկերով: Օգնի՛ր հիշել, որ արժեքավոր եմ, որովհետև Քեզ նման եմ ստեղծված: Ամեն:

Աստծո խոսքին նայի՛ր նոր ձևով՝ տեսնելու նրա նրա մեջ եղած գեղեցկությունը:

**Կարդա՛ր
Գործք Առ. 10. 1-23**

Աշխարհի ստեղծումից ի վեր աներևույթ բնությունը, իր մշտնջենական գորությունն ու աստվածությունը տեսնվում են ստեղծվածների միջոցով:

Յոթ. 1.20

Նյութերի ցանկ

Ազնվություն.....	Մայ. 27
Աղոթք	Մայ. 2, Հուն. 9,14,18
Անարդարություն.....	Մայ. 25, Հուն. 12
Անկում.....	Հուն. 19
Անձնական վարագիծ.....	Հուն. 15
Ապաշխարություն.....	Ապ. 20
Առանձնություն.....	Մայ. 10,20
Առաջնորդություն.....	Հուն. 26
Աստվածաշնչի հեղինակությունը.....	Մայ. 7
Աստծու զորությունը.....	Մայ.19
Աստծու հետ հաղորդակցություն.....	Ապ. 15,25, Հուն. 5,29
Աստծու հոգածությունը.....	Ապ. 6,13,26, մայ. 6,12,16,30, Հուն. 16,22,23,29
Աստծու սերը.....	Ապ. 2,17,18, մայ.6,12,16,30, Հուն.16,22,23,29
Աստծուն սպասել.....	Մայ. 4
Աստծու վարդապետությունը.....	Հուն. 28,30
Աստծուն վստահել.....	Ապ. 22,29, մայ. 8,26, Հուն. 3,4,20,28
Արդարադատություն.....	Հուն. 17
Ավետարանչություն.....	Ապ. 9, մայ. 29
Դրախտ.....	Հուն. 6
Երախտագիտություն.....	Ապ. 1, Հուն. 21
Երջանկություն.....	Մայ. 1, Հուն. 8, 24
Ծածուկ.....	Ապ. 10, մայ. 5,25, Հուն. 18
Ծռուպել.....	Ապ. 28
Ծոմապահություն.....	Մայ. 12
Կյանքի պայքարներ.....	Ապ. 11,22, մայ. 8,13, Հուն. 6
Հալածանք.....	Հուն. 15
Հանցանք.....	Հուն. 1
Հեզություն.....	Ապ. 8

Հիվանդությանը դիմակայել.....	Ապ. 13
Հնազանդություն.....	Ապ. 15
Հոգեկան կարգապահություն.....	Մայ. 22
Հոգևոր աճ.....	Մայ. 19
Հոգու կերպարանափոխությունը.....	Ապ. 7,30, Մայ. 7,14, Հուն. 1
Հոգու պտուղը.....	Հուն. 24
Հուզմունք.....	Մայ. 12
Հույս.....	Ապ. 13,14, մայ. 15, Հուն.12
Հուսահատություն.....	Մայ. 15
Նախանձ.....	Ապր. 16
Ներել ուրիշներին.....	Հուն. 27
Նյութապաշտություն.....	Ապ. 25
Ուրիշ հավատացյալների հետ ապրել.....	Մայ. 18
Ուրիշներին դատել.....	Մայ. 23
Պաշտամունք.....	Հուն. 7
Սատանա.....	Մայ. 24
Սեր Աստծու հանդեպ.....	Հուն. 8
Սեր ուրիշներին հանդեպ.....	Մայ. 2,16,30
Ստեղծագործություն.....	Ապ. 16,27, մայ. 21, Հուն. 2,7,30
Սուրբ Հոգի.....	Մայ. 26, Հուն. 14,19
Վախ.....	Ապր. 24
Վերականգնում.....	Ապ. 24
Վիշտ.....	Մայ. 8,13,15
Տալ.....	Մայ. 31, Հուն. 16
Տանջանք.....	Ապ. 12,29, Հուն. 20
Ցեղապաշտություն.....	Մայ. 29
Փորձություն.....	Ապ. 4, մայ. 20, Հուն. 25
Փրկություն.....	Ապ. 5,23, Հուն. 5,11,13
Քաջակերություն.....	Մայ. 9,27
Քրիստոս Փրկիչ.....	Ապ. 19,21, մայ.24
Քրիստոսի համար ապրել.....	Հուն. 25
Քրիստոսի մահը.....	Ապ. 19
Քրիստոսի նման ապրել.....	Ապ. 3, Հուն. 15

Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքուկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռախոս՝ (010) 54-35-76, (010) 54-35-78
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am
Կայքէջ՝ www.amaa.am

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7^ա

Հեռ. (374) 94 52 75, 95 02 95

Անուն, ազգանուն

Հասցե.....

.....

Հեռախոս.....

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Գրքույկը ստանալու համար դիմել Ամերիկայի Հայ
Ավետարանչական ընկերակցության Հայաստանի
մասնաճյուղ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am

Էլկայք՝ www.amaa.am